



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

#### **Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

#### **О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.

A

987,482



Digitized by Google



2021  
218  
2022

70

44.7  
U.S.  
pounds

S hahnazareants, 542  
Karapet

# ԴԱՇԱՆՑ ԹՂԹՈՅ

Dashants tghet oy

ՔՆՆԱՒԹԻՒՆՆ ԱՒ ՀԵՐԳՈՒՄԸ  
կոստիառն...

ԱՐԱՐ 300+456 ր.

Վ. Շահնազարեանց, միարան Արրոյ Եղմիածնի և  
Անդամ Խորհրդարանի Կ. Ճեմարանին Տեսար Լազու-  
րեանց, որ ի Մուկվայ :



ՊԱՐԻՍ

Ի գործարանի Կ. Վ. Շահնազարեանց :

1862

Grad  
EREN  
RIC  
BUHR

Paris. — Imprimé par E. Tisserot et C<sup>°</sup>, rue Racine, 26.

GRAPH  
EREN  
216  
OCT 10 'U 27.

Տէր Մատթէոս, Արքազան Կաթողիկոսի, ծատագութեալ դաշտանց թղթոյ (1), մեր գրած համառօտ բանագաւառութիւնը, մեր կարծածէն աւելի ընդունելութիւն գտնելով, այժմ Հարկ եղաւ վերստին տապել զայն առանձին տետրակառ ըստ ցանկութեան ողջամիտ և գիտնական ազգայնոց Ռուսաստանի և Թիւրքաստանի :

Այս բանադատութեանս բուն սկզբնապառնառը Թիւրքաց Սուլյանի ճարտարապետ Կարապետ Ամիրան Պալեան կրնայ համարուիլ, ինքը անձամբ, եւ իր շուրբի տակ ապաստանեալ Փոօփականդայի մշակները, որ յա-

(1) Դաշտաց բուդրի օրինակներն, որոց պատճեցայ մինչեւ ցայթմ, բոլորն ալ խանգարեալ եւ իրադրմէ շատ կառ քիչ տարրեր գտայ : Չանիկ Ամիրայի 1824 թուին տպաժր ձեռքս ըլլալով՝ անկարեցի եղաւ ինձ տարրերութիւններն նշանակել : Մեր օրինակը Թիֆլիզի առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոսի գրասունին օրինակուած, թէեւ ոչ զերծ ի Վրիկակաց տակայէ բարագոյն օրինակներէն մէկը կրնայ համարուիլ :

Նուն սպատութեան, յանուն լուսաւորոթեան և յանուն բարեկենդանութեան վեց հարիւր տարիէ խլեր, Հայոց պապականութիւն քարոզելէ չհոգնեցան : Ի՞նչ արիւնուշտ կատակ, Աստուած մեծ : Միթէ պապականութիւնն ու աղաստութիւնը, միթէ պապականութիւնն ու լուսաւորութիւնը, իրեւ խաւարի և լուսոյ, իրեւ Ահրիմանի եւ Որմզդի շօշափելի նշանակներ, յաւիտեան իրարու անհաշտ թշնամի ըլլալու չեն : Քրմապետական Հռոմէն, թերեւս մարդկային ազատութեան եւ քաղաքակրթութեան նուիրական իրաւունքը ճանաչելը յուսադի էր . իսկ պապական Հռոմը, որ ազգաց եւ ազանց տմբած կմախքի վերայ տնկերէ իւր մահարեր տիրապետութեան դրօշը, այս բարեմասնութենէս, աւազ, զուրկ է բոլորովին :

Արդի եւ անցեալ Պապերու մէջ, այո՛, ընտիր, պարկեշտ եւ մարդասէր անձեր գտնուեր են . սակայն այլէ Պապը, այլէ պապականութեան դրութիւնը, որ Անտոնելի և Մերոդ Կարդինալներու մուխը ունեցող մարդոց վերայ կանգնած՝ մտաց ազատութեան, անձնաւոր ազատութեան, խղճի ազատութեան և հասարակաց ազատութեան անհամբոյր թշնամի էր, է և պիտի ըլլայ, որչափ որ տեէ : Եթէ պապականութեան դրութեան մէջ մարդկեղին ամենափոքր զգացմունք կայ, եթէ անոր մէջ մարդասիրութեան ամենաաղոյզն նշոյլ կայ, թո՛ղ անկէ նախ քիչ մը Խտալացւոց տայ, որ իր ազգակիցն ու կրօնակիցն են, թո՛ղ սակաւ մը Հունդարաց, պատառ մը՝ Լեհաց, բրդուճ մը՝ Խոլանդացւոց տայ, որ հազարաւոր տարիներէ ի վեր զինքը, իրեւ երկրաւոր Աստուած, պաշտեցին, ասկա

գայ, յանուն, չգիտեմ, որ օդային ապաստիթեան, տարտարոսական, դրութիւնը քարոզէ Հայոց։ Եթէ երկրաւոր և կորստական բարիք բան իր ազգակիցներուն մատակարարելու մէջ նա այս չափուն այսպէս կծծի է, ինչպէս ոքեմն կարէ մեղ յանուն գալանց թղթոյ, յանուն միաբանութեան հաւատոց (դու կարդաւ կրօնական ստրկութեան) երկնաւոր փոխութիւն խոսապանալ կամ տալ, զոր ինքնին չէ ճաշակեր տակաւին։

Պալեան կարագետ Ամիրան, այն հազուագիւտ ան հասոներէն մէկն է, որ իր կրօնական եւ ընկերական սկզբունքը եղիպտական խաւարով պատճձ ցորեկը, հրապարակաւ, Սուրբ Լուսնու որչի սեղանին խունկ կծխէ, գիշերը, առանձին, Սուրբ Լեւոնի ամթոռին կնդրուկ կմատուցանի. որ առանց աստօտածաքաբանութիւն, պատմութիւն եւ այլ բնական ու գերբնական մակացութիւններ ուսանելու, ինքը զինքը ոչ միայն կրօնագէտ և պատմաբան երեւակայերէ. այլ և սուր, վահան, ջահ եւ ախոյեան հաւատոց։ Այս եղական անձին քաղաքավարութիւնը թէեւ հասարակաց մտադրութենէն անխուզ մնաց մինչեւ ցայտմ, սակայն կան նբրատես անձինք, որոց տեղն իտեղը յայտնի է, որ և բարի մարդոյ եւ բարի քրիստոնէի անուշահորութենէն գուտ այլ շատ տեսակ հոտեր կրուրէ։ Ցիշեալ Ամիրան մինչեւ ցայտօր, մէկ կողմէն իւր անհուն հարաստութեանը ապահնեալ, միւս կողմէն, իւր Վեհապատի պաշտպանութեանը վերայ թիկնեալ՝ 1840 թուէն իվեր ամեն ազգացին բարեկարդութեանց, օրինաւոր վարչութեան եւ սահմանադրութեան յայտնի հակառակուդի հանգիսանալով՝ հարփւ-

բաւոր համեստ վարժապետ ու քահանայ եւ վարդապետ  
բանտ եւ աքսոր ուղարկել տուերէ, հաղարաւոր աշխար-  
հական այր եւ կին ժխնուամոլ պատրիարքաց թերնէ թա-  
փած անխիղճ բանադրանքի մատնել տուերէ ու շատ մը  
սրբակրօն և չարագործ մարդոց պաշտպանութիւն ըրեր :  
Կարապետ Ամիրան, որչափ ճոխ եւ հղօր ըլլայ, բայց եւ  
այնպէս թող զգուշանայ, իրր զի իւր ամրոցները, իւր  
կարծածին պէս, անառիկ չեն, ոչ ալ իւր զրահը՝ անգը-  
ծելի : Եթէ այս Ամիրաս կամի, իրեւ Հայոց իշխան, որ  
անիմակ անուն ստանայ, եւ ամենեցուն կաթողին հա-  
մակրպաթեանը արժանանայ, որ ինքը և իւր տոհմը, հա-  
նարակաց օրհնութիւնը և գովառթիւնը ժառանգէմ, աւելի  
լաւ կընէ որ մեր ազգի յառաջադէմ մասին գլուխը  
անցնի, եւ երկպառակութիւն սնուցանելու տեղ, իմի  
սոմիոփէ զայն եւ քաղաքակրթութեան եւ իւր նախնի  
կրօնքին մէջ անոր կարաւզենէ, աղէկ գիտնալով որ թէ  
ինքը ուզէ չուզէ, ազգը յառաջ պիտի երթայ, աղէկ հա-  
մոզուած ըլլալով, որ ոչ իւր կամեցածին պէս ազգը  
պապական ըլլայ պիտի, ոչ ալ իւր չկամեցածին պէս՝  
բողոքական չըլլայ : Թող Առղենայի, Պարմայի, Ֆլո-  
րենտիոյ եւ Նէապոլի բնաւորներու անկումէն ու  
տարագրութենէն օգուա քաղէ եւ ժողովրդեան իրա-  
ւունքը ոտնակոխ ընթիւն զգուշանայ : Աեք, որ իրմէ շատ  
չարիք կրերեմք, մեք, կըսեմ, այն ատեն իւր ձեռքը եւ  
ոտքը համբուրելով համանգամայն, իւր դրօշակի տակ  
ծառայելու եւ իրեն սնթառամ պակներ հիւելու  
սլատրաստ եմք :

1850 թուին երբ Տատեան Յովհաննէս Բէյի տունը

խորհուրդ կըլլար, մեր տեսչութեանը տակ Ազանող  
վարդապետարան մը հիմնել, քանի մը զրոյցներու վերայ  
մեր ու Կարսալետ Ամերայի մէջ, չգիտեմ, ինչ աներե-  
ւոյթ դրդմամբ, առարկութիւններ եղան և առաջարկեալ  
գործոյն միաժողամյան խոսիան : Մեր վիճոյ գլխաւոր  
յօդուածներն էին Սուրբ Լուսաւորչի եւ Սեղբեստրոսի  
մէջ Քրիստոսի արեւամբ գրուած դաշն զնելու վաւերա-  
կան ըլլալն կոմ չըլլալը, Պետրոս առաքելոյ Հռոմ նա-  
հաստակուիդն կամ շնուհատակուիլը, Խոտայիա եղած 3-4  
շինծու պատմերաց, Քրիստոսի, Տեառն մերոյ, առ Ար-  
դար ուղարկածը ըլլալը կամ չըլլալը : Մեր Ամրայ  
հակառակորդը անզրայնոնեան ըմպելեօք զմսցեալ՝  
կապերէր որ անոնք, ամենն ալ; վա եր են եւ իրրեւ Հա-  
ւաստամքի հանգանակ ընդունելի . մեք, անոր ներհակ,  
բանականութեան, Քրիստոսի եկեղեցւոյ ընդհանուր եւ  
մեր ազգային յառուկ պատմութեան վերայ յեցեալ՝  
կպնդէինք, թէ անոնք Միջին Դարու անապացոյց զրոյցը  
են, թէ անոնք մեր հանգանակի ու կրօնագիտուքնեան մէշ  
յիսն, եւ հետեւտրար, ոչ անոնց ընդունօղները պահա-  
րակելի են, ոչ չընդունօղները պարսաւելի : Այս միջոցիս  
էր որ Ալիննայի մոնղոլներէն մէկը, պղծոր ջուրի մէջ  
ձուկ որացողի ոլէս, ի վիճայութիւն հարազատութեան  
Հռոմացի, Զենավայի եւ այլ փաթերայից իջեւաններու  
մէջ հաւրուած քանի մի առասպելեալ պատկերներու  
գրքուկ մը միեց, որոյ հեղինակի ծթուած ուղեղը Շա-  
րանթոնի մշտնջենաւոր հիւրերուն պամծալի պատիւ  
կընէ :

Այս թուականէս սկսեալ Միջագիւղի քարտղիչ Տէր

զիկոսը, Պալեան Ամիրային հաճոյանալու պատեհութիւնը գտած համարելով՝ ինքը զինքը ութն տարի արեան քրտինք թափելու դատապարտեց ու դաշանց թղթոյ վաւերականութեանը համար տասն եւ վեց երեսով մատեան մը գրեց Պ. Պ. Տղմապետեանի և Բէրբերեանի, հիւսիսայդի նման պայծառ լուսաւորաց, ներշնչութեամբ : 1858 թուին երբոր Կոստանտնուպօլիս էինք ու Տէր Մատթէոս Արքին, դեռ Կաթողիկոս ընտրուած, Ռուսաց կայսեր հաստատութեանը կսպասէր, օր մը քմծիծող յոյտնեց մեզ թէ դաշանց թղթոյ վաւերակառնութեան համար ճառ մը գրեր է ու տարագրելու միտք ունի : Մէր, մէկ կաղմէն, այնպիսի խարդախ եւ մեր եկեղեցւոյ քահանայապետութիւնն ու իրաւունքը նուաստացնող առասալելի մը Հայոց Կաթողիկոսի վկայութիւն տալը անվայել համարելով, միւս կողմէն, անոր մեր պարզամիտներու վերայ ընելիք գէշ տալաւորո թեանը եւ փոթորիկ ծնանելուն նախարես ըբարով՝ խնդրեցինք իւր Արքութենէն անկեզծաբար, որ հրաժարի իւր մտադրութենէն եւ յաւեցուցինք ասելով որ եթէ ինքը այնպիսի բան մը հրատարակէ, զմեզ կպարտաւորէ անոր քննութիւնն ու հերթումը գրել անմիջապէս, ինչպէս աղբյնք :

Այս կրկին եւ երերկին գրուածոց փուրախը այսուհետեւ պատմագէտ եւ հսագէտ բանասիրաց ատկնի որոշմանը կմնայ, Աինօդի, Պատրիարքի, Կաթողիկոսի եւ հոգեւոր ժողովի ձեռնհասութենէն բոլորովին դուրս ըլլալով : Յիշեալ դոշնոսգիրը է եւ ավատի մնայ, ըստ մեր

դատավութեան, իրբեւ կեղծիր Միջին Դարու անգեւսու Հիւտնդոտ եւ լատինամէր ուղեղաց : Արբազան կաթողիկոսը անոր կոկրդիլոնական ոճին, անոր պատմական, կրօնական, աշխարհագրական, ժամանակագրական եւ այլ հօգար ու մէկ վրիպակացը միտ չղնելով՝ կպնդէ, որ վաւերէ այն մեք ընտրակակն, միմիացն իսէր ճշմարդութեան, եւ պատմութիւնը, ժամանակագրութիւնը, աշխարհագրութիւնը եւ գրականութիւնը ձեռք՝ Կը պնդեմք, որ այն խարդախեալէ, իյետնոց ներմուծեալէ, և ապիկար ամենեին որ և իցէ կրիստիքի տոկալ : Զանիկ Ամիրայի 1824 թուին տպել տուած դաշանց թուղթը սյժմ սակաւագիւտ ըլլալով, Մոսկվայի Ճռաքաղի մէջ տպուած Արբազան կաթողիկոսի յօդուածը Թիւրքաստանի կամ այլ աշխարհաց Հայերուն անծանօթ ըլլալով՝ որոշեցինք, բարեմիտ գիտուններու քննութիւնն ու որոշումը դիւրացնելու ազագու, այս երեք գրուածքս ի միասին, մէկ տետրի մէջ ամիսուիեալ ի ըսց ընծայել :

Մեր փոյթը չէ ամենեւին եթէ Պալեան Ամիրան իւր կին ոխը տասնաուլատկելով, այսուհետեւ այլ եղանակաւ վրէժինդիր ըլլայ մեզ ու թերին իր սերնդեանը կտակէ : Մեք, ասոր փոխարէն, կմաղթեմք, որ Սուրբ Լեւոնի արագահս օրհնութիւնը անոր գլխէն անպակաս ըլլայ, որ Արբազան Լոյօլայի անդառնալի բարեխօսութիւնը զինքը իւր Վեհապետին սիրելի ընէ և Հայոց մէջ սէնտօֆիս եւ էնքիզիսիօն հաստատելու ձեռնտու ըլլայ : Մեր փոյթը չէ դարձեալ եթէ Արբազան կաթողիկոսը, փոխանակ բանաւոր տրամաբանութեամբ մեզ և այլոց հետ խօսելու, փոխանակ օրէնքով, իրաւունքով, պատմու-

թեամբ, ապացոյցներով և փաստերով զմեզ համոզելու,  
նղովքի տրամաբանութեամբ պատասխանէ : Մեր, իրեն  
Հայ մարդ, իրեն վարդապետ Հայաստանեայց ամենա  
սուրբ եւ առաքելական եկեղեցւոյ, նուիրական պարտը  
համարեցինք մեզ արդի քանադասութիւնս դրել, եւ  
իրեւ այսպէս, մեր եղբարց լուսաւորութեանը եւ յա-  
ռաջացմանը համար նզովք ըլլալէն զատաւելի քաղցրա-  
գոյն եւ հաճոյական բարեաց ակնկալութիւն չունիմք :

Կարասպետ Վարդապետ Շահնշապարեանց :

Պարիս, 30 Յունիսի 1862 :

19, rue de l'Est.

Սիրոյ եւ միաբանութեան մեծի կայսեր  
Կոստանդիանոսի եւ տուրք Հայրա-  
պետին Սեղբեստրոսի եւ Տրդատայ,  
Հայոց Ալբայի, և սրբոյն Գրիգորի,  
Հայոց Լուսաւորչի :

---

Կրամք և ռղորմութեամք համագոյ Սուրբ Երրորդու-  
թեանն, Հսրանմահի և անխմանալոյ և Միածնի, որդուց  
նորա, Տեսոն մերոյ եւ Փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի եւ  
կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւոյն :

Այս մեր կրուկ կայսերական Աստուծով հաստատուն  
եւ անփոխառակական, որ գծագրեցաւ հզօր հրամանաւ  
ինքնառկալ և մշտայաղթ կայսեր կոստանդիանոսի մեծի

և օգոստավիառ թագաւորաց թագաւորի, սիեզերատարած  
և աշխարհածաւալ, խրոխտ և անխոնարհելի իշխանութեանս Հռովմայեցւոց որ զօրութեամբ ճշմարտին Աստուծոյ տիրեմ տիեզերաց ի ծագաց Ովկիանոսի,  
ահագին ծովուա, մինչև յելս արևու, յաղթող զօրութեամբ պարծանաց խաչիս Քրիստոսի : Սայապէս եւ ստորագրեցաւ հրովարտակս հրամանաւ իմով մեծի Պապուա Հռովմայեցւոց, Եւսերիոսի, որ և Սեղբեստրոսի, աթոռակալ զմսաւորաց Առաքելոց Արքոց Գետնիսի և Պօղոսի, որ երկնաւոր և երկրաւոր բանալեօքս ունիմ իշխանուրիւն յԱրենախց մինչեւ յԱրենելու ի վերայ ամենայն ազգաց եւ ազանց եւ շեզուաց քրիստոսադաւանից, կապօդ և արձակող իշերկինս եւ յերկրի եւ հրամանահան եւ հզօր յընդհանուր յեկեղեցիս Քրիստոսի : Ուստի ի հրամանէ Հոգւոյն սրբոյ հասին առ մեզ զօրբն Հայոց, մեծն Յովհաննէս, որ եւ Տրդատէս, աղքայ Հայոց, եւ կենդանի վկայն Քրիստոսի և մեծ խոստովանողն, Արքազնակատար Կաթողիկոսն Տէր Սուրբ Գրիգորիոս, Լուսաւորիչն ամենայն Արեւելից եւ Հիւսիսոյ, սիրելի եղբարք մեր ի Քրիստոս եւ բուն բարեկամքս բարձրագահ իշխանութեանս մերոյ, եւ հաւատարիմ հազարապետքս խորին խորհրդոց՝ ժառանգակալքս աշխարհակալ և տիեզերաստատ արքայից արքայութեան Արշակոնեաց, ժամանեցին ի տեսութիւն տեղւոյս տէրունական տանս արևմըտեան և արևելաժառանգ սրբոց և գլխաւորաց Առաքելոց, և փոխանորդի Աստուծոյ պատուեալ պապիս պերճապսակ, և կայսերս նորընծայ ի հաւատոս Քրիստոսի, և մեծի դշխոյիս Հեղինէի, հզօր թագուհոյս և ծիրանա-

ծին զարդու զաւակաց գօրացելցոյ : Ընդ որս հրճուեալ  
թերկրեցաւ աստուածահաստատ թագաւորութիւնս մեր,  
և մեծ ականդէս հանդերձանօք ելաք ընդ առաջ Արտ-  
րառեան թագաւորութեանն եւ Ասքանազեան գնդին .  
եւ պատահեալ միմեանց՝ երկրաբագութիւն մասուցաք  
անմահ արքային մերոյ Յիսուսի Քրիստոսի . և ողջունեալ  
զմիմեանս՝ գարձաք ի վեստարանս Առոր Առաքելցոյ եւ  
երկրաբագութիւն աստուածամնւթ տուրբ նշխարաց տոյա,  
փառաւորելով գՔրիստոս զպանկիչն որբոյ : Եւ եկեալ  
ի սղաղառն սրանծալի բաղմեցաք . արքայքս ի միում  
բարձրաբերձ բազմականի, եւ հայրասետքս իմիում գե-  
րակրաչ գահաւորուսկի : Եւ բազում աւուրս անցուցաք  
ի հոգեւոր և ի մարմնաւոր ուրախութիւնս : Կաև հրաման  
հանաք ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնս մեր .  
դի ամենեքեան ուրախասցին ի կերակուրս եւ յըմակելիս  
ընդ ամենայն աշխարհս . և արգելցին հարկահանքն ընդ  
ամենայն տեղիս յայսմ ամի յաղսոգս ցնծութեան սրտից  
մերոց : Խակ ի հրամանէ Արքոյ Լուսաւորչիս զերծցին  
բանդեալքն, ախտառեսցին մուրհակք սրտսուականաց,  
դատ և իրաւունք ելցեն արքունո ստ ամենայն որրոց և  
այրեաց և հայրենազրկաց : Խակ ի հրամանէ քաջ արանց  
եղբօրս մեր Տրդատոյ գարձցին ամենայն գատապար-  
տեալք, որ ի քրէական մետաղ իցեն, և թողցին ամենայն  
պարտք արքունականք, ընդ որս և աղ օրհնութեան հրա-  
մանաւ Լուսաւորչիս առաքեցաք ընդ ամենայն աշխարհ-  
իշխանութեան մերում ի սպանդանոցս, և առ տնին զեն-  
միս . զի մի հեթանոսարար լիսի խրախութիւնս մեր :  
Կաև զդուանութիւն հաւատոյ սուրբ հօրս մերոյ Գրի-

գորի արձանագրով քարոզեցաք յամենայն եկեղեցիս  
ուղղափառաց . իսկ յորժամ հանգերծեալ էին հրաժարել  
ի մէնջ հոգեզարդ հայրս մեր և եղբայրս Տրդատ . Ժաղով  
եղեւ մեծ առաջի սուրբ Առաքելոց 320 Ախնկղբառոօքս  
և 24 թագաւորօքս և բազմաբիւր իշխանոքս Դաղմատաւ  
կան հազանդեցելովքս ի ներքոյ բարձր բազկի մերոյ՝  
Աստուծով աւժանդակեալ . նաև բազկակից եղբայր մեր  
Տրդատ արքայ իւրովք գահերէց մեծ ամեծ նախարարօք,  
եւթանաստւն հազարօքն . իսկ երկպին Հայրապետրս  
իւրեանց Արքեպիսկոպոսօք եւ քահանայիւր , կամաքն  
Աստուծոյ և միջնորդութեամբ Սուրբ Աստուածածնին  
և Սուրբ Առաքելոց և ամենայն սրբոց Երկոքին սղբայրս  
և երկոքին հայրապետքս և երկոքին ազգքս . Հռովմայեցիք  
եւ Հայր միաբան եւ միախորհուրդ համաշունչ եղբարք  
գրեցաք միմեանց , եւ ուխտ եւ դաշինս հաստատեցաք  
յաւիտենական ի միջի մերում առաջի փառաց Փայտիս՝  
նշանիս Քրիստոսի , արիական Լատինացիքս և անյաղ-  
թելի Թորգոմացիքս , և յաղագս հաւատարմոթեան հաստա-  
տուն և անշրելի ուխտիս մերոյ զահագին և զանգին արիւնն  
Քրիստոսի ի մեջան . խառնեազ գրեցաք Քրեր միմեանց  
արեւմտեան և արեւելեան ազգքս , որք հաւատու և սէր և  
միամտութիւն պարտիմք միմեանց , որպէս եղբայրացե-  
լոցն Քրիստոսի Աստուծոյ , ճգնելով ի վերայ միմեանց՝  
սիրելեացն սիրելի լինելով և թշնամեացն թշնամի : Եւ յեր-  
կուց ազգացա ո՞չ ոք իշխէ միմեանց սուրբ քարշել , և որք  
յանդգնին՝ սուրբ նոցա մտցեն ի սիրտս իւրեանց : Եւ  
այս ուխտաղբութիւն հաստատու մն կացյէ ի մէջ երկուց  
ազգաց մինչ ի կատարած աշխարհի . իսկ որ ոք մերջասց

յայսմ վճռէս՝ որաշեալ լիցի ի Քրիստոսական հաւատոյ,  
և անէծս զկայննին և զՅուդային և զտիրասպան քա-  
հանայիցն ժառանգեսցէ : Աստացե՛ն հրեշտակը և մար-  
դիկ՝ եղիցի եղիցի : Ըստ այսմ խորհրդոյ և մեք հրովար-  
տակ հանաք ընդ ամենայն տիեզերա իշխանութեան  
մերոյ, որք էր ընդ Աքեելս յայնկոյս Աղրիսկան ծովուն  
եւ ի միջոցն Պոնտական եւ Կանապիտկան պիտագուաց :  
Գիտութիւն լիցի ձեզ ամենայն աղգաց եւ աղանց եւ  
լեզուաց, թագաւորաց աշխարհակալաց և իշխանոց աղ-  
գաց եւ գլխաւորաց գաւառուաց, որք էք յԱղրիկեցւոց  
աշխարհիդ և յԱրաբացւոց, ի Միջագետաց աշխարհիդ  
և իմեծ Ատրոց, ի Փիւնիկաց աշխարհիդ և ի Կիլիկեցւոց,  
ի Փափացւոց աշխարհիդ ուր մեծն Նոյ հաղմեեց զտա-  
պանն, և ի Պամփիլացւոց, ի Կապալաղովկացւոց աշխար-  
հիդ, ի Բիւթանացւոց, ի Գաղատացւոց աշխարհիդ եւ ի  
Պիսիդացւոց, Ասիացւոց աշխարհիդ եւ Ոնոռնացւոց, ի  
Պրանէ Բիւզանդացւոց մինչև ի դրունի Հոնաց . և հաւա-  
տարիմ սահմանապահք իմ մեծդ Միհրան, թագաւոր  
Վրաց եւ քաջդ Ուռնայր, արքայ Աղվանից, եւ այլ  
խառնիճաղանջ բազմութիւնք առ հասարակ, որք ի Սա-  
գաստան եւ ի Գեղմատան, որք էք հաստատեալ ի հաս-  
տահեղոյս գաւաղանս երկաթի և ի Խրոխտ և յանխո-  
նարհելի իշխանութիւնս Հառվմայեցւոց : Այդ հրամանք  
ել ի հզօր կամաց իմոց կայսերս Կոստանդնեայ զի ի վերայ  
ձեր ամենեցուն կացուցի թագաւոր և իշխան միահեծան,  
զմեծ արքայն Տրդատէս, զհամամիտ և զհամակարի եղ-  
րայրն իմ և զբազկակից բարեկամն . զի հրամանաւ իմավ  
տիրեացէ Տիեզերաց, իշխան աշխարհակալ եւ հրամանա-

Հան հզօր առ հասարակ ծովու և ցամաքի . և մի ոք իշխեսցէ ի ձէնջ դիմադարձ լինել հոյակապ հրամանաց հզօրին Հայոց, կայսերակերպին Տրդատայ, որ յաղթեաց Հռչէի, բանամարտիկ բարբարտաի, առաջի Դիոկղետիանովի թագաւորի : Արդ՝ ի հասանել հզօր հրամանաց ինքնամբ և աստուածապակիթ ազաւորին թագաւորաց՝ ամենեքեան ընդ առաջ ելիք դմա արքունական ընծայիւր և ամենայն պատո ասիրութեամբ երկրորդիթագաւորութեանս իմոյ Տրդատայ արեւելեան ահեղանչան թագաւորի : Զի որպէս մեք յԱրեւմաւոս տիրեմք բոլոր աշխարհին, նոյնպէս և Տրդատ յԱրեւելս կացուցաք իշխել տիրածուր խովոր աշխարհիս : Մինսգամայն կազմի եւ պատրաստ լերուք իդէն զինուորութեան արի արտնոց եւ սազմամուտ երիվարաց զինեալը եւ զօրսացեալը հզօր զօրութեամբ մերով, և գումարեն ջիք առաջի անպատճելի եւ անսպարտելի քաջիկ Տրդատայ ի գործս պատերազմի ընդգէմ ատելոյն Վրիտորսի եւ թշնամւոյն իմոյ Շատհց մօխրապաշտի և աստուածամնորոտ անօրինի, համելով և հալածելով զզօրս նորա անդր քան զՄաղանդարտան և զՏալուրատան : Կաեւ զամենայն զէնս սրատերազմական եանս եւ զհրոգ հեծելիդ և զամենացն սրատորատութիւն երիտասարդաց և երիվարաց հրամանաւ Տրդատայ տուրէք ի կողմանս Ատրապատականաց եւ Արարայ : Եւ ժողովնեցարմաք անհուն բազմութիւնք իրրե զաւազ առ աիրն ծովու պաղագս պահակին Հոնաց Դագրանեցայ և Դարիալայ . զի և զնոսա իմեմն Տրդատ վատահացայ : Ա զջ լերուք մերով ողջ լինելովս :

Ա առն որոյ եւ մեք պատկեցաք զմեծ տրրացն Տրդատ

կայսերական թագիւս՝ լուսատու ամիամբք յօրինեալ եւ  
մեծամեծ մարդարտօք շրջապատեալ, եւ զարդարեցաք  
զհակայագոյն հասակ սորա ծովային ծիրանեօք, օքաւնա-  
կան մետաքսօք, մարդարտաւաճօք (մարդարտամազմօք),  
ևս և զանգին գաւողի հօրն իմ հօրի ածի ընդ մէջ Տրդա-  
տայ քաջի, եւ չորեք հարիւր կրկին աւժուցաւք զսա  
կայսերական եւ դիմուրական գնրդուր եւ դիմուք մե-  
րսիք, եւ արքունակրոշմ նշանաւոր կառօք եւ ծովային  
օդաթոփիչ երիվարօք ռսկէտարօք, սուսերօք հաւհայնօք  
և նիզակօք վիշապամխօք, գումարտակօք անգին գոհարօք  
եւ գունագեղ գնդօք, տպաղիննօք, սիդնայօք, խոսուկե-  
մազօք և որոտընդուստ ահագնագոչ շեփորայօք, երգեհու-  
նօք ակրանակապօք և զանոնօք յորդաձայնօք, և միանգա-  
մայն իսկ չորս հազար զարդուր եւ ամենայն պատրաս-  
տութեամբ սրազառուն իմոյ աբաստասիրեցի զսիրեցեալս  
իմ. ընդ որս և մեծավառ դշնցու մեր Մաքսենտէս և քոյր  
իմ սքանչելագեղ կոստափաց սրաստրատեցին ընծայս  
զարմանազանս, որովք սրակեացի բամբիչն արեելային  
վայելչափայի թագուհին, մեծն Աշխէն, եւ չքնաղագեղ  
օրիորդն Հայոց մեծաց, Խոսրովիդուխտ Դաւահմայն :  
Որոց առաքեցան թագս եւ պահի յակունդեայ եւ յաս-  
ակաս ամբարհնաւաճառեսիլս եւ անդամանդէս բազմաբան-  
քարա և բահուանդրս բիւրականս և վարսակալս վայելչա-  
փառս եւ զարդս բազումս յականց եւ յասկրշմեղինաց,  
գործ ճարտարաց անգիւտք եւ անգինք, Դաւդէս Դասղմա-  
տականս 120 բարձեալ ջորուջ վաթսումից արքայակա-  
նից . նոյնակէս պատկեցի զորդիացեալն իմ զԽոսրով  
գրամփիկիմ (զրամիկն իմ) իմնվ զաւակասս Կոստանդի-

նեաւ, որ ինչ մանկան հասակին է ցանկալի և Արեւելից  
անընդել եւ անուեսանելի : Իսկ հզօր հսկարապետաց  
Հայոց պարգեւեցաւ ի մերմէ թագաւորաթենէս նշա-  
նակս եւ դրօշմ. Դադմատացիս եւ վիշապագլուխ միողս և  
փանցեռն. բարձրաբարձառուս եւ զէնտ եւ զարդու պատե-  
րազմականս արի արանց եւ երեւելի երիվարաց, նժոյդք  
ծովայինք եւ պահանգք պատենազէնք, անգծելի երկա-  
թոյ, և այլ անթիւ և անհամար օժիաս ուկւյ և արեա-  
թոյ եւ ականց պատուականաց, պեհից, սպայից եւ կաղ-  
մուածոյ կրնանց, ջոկաց ձիոց եւ բեռանց թագաւորա-  
կան հանդերձանաց, որովք յրիխացուցաք զեօթանատուն  
հսկարան Հայաստանեաց : Պարգեւեցի և պիրելի եղբօրն  
իմոյ Տրդատայ զախրեցեալն իմ գիւեթղեհէմ քազաք մե-  
ծին Դաւթի, զտեղի ծննդեան Քրիստոսի ի Արքոյ Կու-  
սէն : Եւ մեպհական աշխարհ սահմանեցի նմա զպուտոն  
Ամսենիան, զկատպագովիա, զոր հանեալ էր ի Հայոց  
Պամպէ ի Աեօպիայ : Եւ այսէ քուն հայրենիքն Տրդատայ  
ի լեռնէն Արքիոյ մինչեւ իշեամն Արարատայ եւ ի Գայլ  
գետացն Ելեսապոնտացւոց մինչեւ ցնզօր գետն Տիգրիս  
մեծ . իսկ ի կողմանցն Մինհաստանեաց որչափ բազուկ իւր  
բաւեցէ եւ թուրն թափեցէ : Խնդրեցի յորբայէն  
Տրդատայ արս 300 հասակաւ և արիս թեամբ հոյակառք,  
զորս եւ Արմէնք անուանեցի . եւ կարգեցի իսպատուու-  
րութիւն արբաւնսկան գահոյից իմոց, հզօրիչք գլխոց իմոց  
եւ թիկնապահք իմ ի տուէ եւ ի գիշերի, եւ առաջապա-  
հեատք իմ ի պատերազմի : Ճամ է այսուկետեւ գալ ինձ  
ի տեսիքս և ի յայտնութիւնս, զոր եցոյց ինձ Տէր . զի յետ  
բազում ամաց իշխանիքն Հայոց տարագրեն զտունն Տըր.

գատայ եւ ինքեանկը պարագրին ի հայլենեաց իւրեանց  
եւ անկանին ընդ լծով ծառայութեան այլազգեաց զամս  
բազումն . Եզրուկ ար դիտիցին այնու ժամանակի . վի  
ասուսազանօք առաւապի ազգն Հայոց մինչեւ ցեղ հոգուց  
իւրեանց , որոց փրկութիւն ի Տեւանէ եղիցի եւ օգնու-  
թիւն յազգաստոհմէ խմնէ . քայլ այս եղիցի ի ժամանակն  
յետինա , յորում յայտնեացին նշխարք արքոցն Առաքիա-  
սէանց Քթօշից , զորս եւ ամփոփեցի առաջնորդութեամբ  
հրեշտակի Տեւան ի Բագրեւանդ գտաւարի .

Երեւեցան ի յերկրի մերձւմ հրաշք զարմանալիք փ  
հայրապետէս Հայոց եւ ի թագաւորէս . քանդի ի գոյն  
առցա առ մեզ և յանցանելն ընդ ծովս Յունական , առաւ  
քեցի ես և ժողովեցի զամանացին խեղս , զկազս և զիօյրս  
զմիակողմանիս եւ զանգամակայծն եւ զայլ առենացն , որ  
նեղեալ էին ի ալէսարէս ցաւս և ի տանջանա , և զայսապիսիս  
ժողովեալ համի զնոսա ամենեկան ընդդէմ Արքոցն  
Գրիգորի ( պորտ միանգամ աղօթիոք թժկեաց զամե-  
նեանեան , մինչեւ զարմանալ մեզ ամենեցուն ի վերաց  
ամենացնի , զոր արտար Տէր նովաւ : Եւ փառաւորեցար  
Քթօշիատա , զիօնաւորիչն սրբոց իւրոց : Պարմեալ էր  
վիշապ մի մեծ վնասակար ի կապէտովին , զոր խորտա-  
կեաց նշանաւ խաչին Քթիստոսի Սուլքն Սեղբեստրոս  
եւ արդել զնա ի յորջ իւր : Յետ այսորիկ երեւեցաւ այդ  
վիշապ մի մեծ եւ ահազին ի սահմանս մեր . եւ բազում  
վնաս առնէր մարդոց էւ անանոյ , եւ էր ի նոյն սահմանս  
եղջերու մի մեծ և ահազին , նոյնակէս և նա վնաս առնէր  
մերձակայ սահմանացն . եւ մարտնչէին ընդ միմեանս  
հանապաղ միեղջերուն եւ վիշապն , եւ ոչ ոք իշխէր

անցանել առ նորօք, զոր ըւեւալ սիրելին իմ ի մանկու-  
թենէ Տրդատ՝ զմնեալ զինքն և ամրացուցեալ նշանան  
խաչին Քրիստոսի եւ աղօթիւր Սուրբ Լուսաւորչիս, եւ  
ըստ յաջողելոյն Աստուծոյ եհար եւ սպան զվիշապն եւ  
զմիեղջերում եւ կտրեալ գհասարակ եղջիւր եղջերուին  
պարզեւեաց ինձ թիրակէս և անդեղայ թիւնահարածն ,  
իսկ ես զհասարամկ խաչամպին Քրիստոսի, զոր մայրն  
իմ բերեալ էր ինձ նշան յԵրուսաղեմէ, հատեալ զայն  
ետու Տրդատոյ, դեղթափ եւ կենաց պատճառ յաւիտե-  
նամբան ազգոց յազգու ի փառա Աստուծոյ : Պատմեաց  
մեզ փառաւոր Գրեղա Տրդատիոս վասն ամենայն անցիցն  
անցելոց, Եթէ ուրքան ընդ տանջանօք էսրի զՄուրքն  
Գրիգոր յաղագս Քրիստոսի հաւատոցն : Բախանդակ  
գերմուս ամս չորեքտասան չարչարանօք անողորմ եւ  
անմինայ հարկանելով զնա : Եւ կամ թէ ուրպէս զերեք-  
տատսան ամ էարկ զնա կերակուր օձից իխոր Վիրապին-  
որ քղեկին Արտաշատու . Եւ կամ թէ ուրպէս պատե-  
րազմեցաւ պունկական պակշտութեամբ ընդ դատեր  
քվեր մօր իմոյ, ընդ հատանանունք իմ Հռիփոփեայ ի վա-  
զարշապատ քավարի, եւ գալարսութիւն, որ յաղթեցաւ  
ի կուտէն զօրութեամբ Քրիստոսի, կամ թէ ուրպէս զա-  
նազման տանջանօք սպան զնա և գրնկերս նորա, զմնեապն  
սրբութեամբ / Սուրբն Ամենթենէս : Եւ ուրպէս յետ եօթն  
ա ուր սպանմանն Հռիփախմեայ, եւ աս ի վերայ բանարք  
կուն Աստուծոյ, այսուհարեւալ վոխեցաւ ի կերպարանա  
վայրենի վարագի . Եւ թէ ուրպէս սեւլեամբն խորու  
պիգիստոյ հանառ Սուրբն Գղիգոր ի Վիրապէն ի ձեռն  
Օտոցի նսխարարի եւ հաւատարմի արքացի . Եւ թէ ուր-

պէս Ասւրբ Լուսաւոլվիչն ազօթիւք էած ի գդայութիւն  
մարդկան դՏրդատ, և յերկրորդում աւուրն ամփոփեաց,  
զԱռուրբն Հոխիսկմէ եւ դԳայիանէ եւ զերեսուն եւ հինգ  
ընկերս նոցա, եւ յետ վեց աւուր բժշկեաց զամենայն  
Հայաստանեայս, եւ յետ վաթսուն աւուր ետես աչօք  
բացօք Առուրբն Գրիգորիոս զիջումն Միածնին ի շափար  
պաղպտանն արբունի, եւ զսիւնս չորեսին եւ զխորանն  
երկնանման, զձեւ և զյօրինուած զմբէթաշէն Կաթուղի-  
կէին եւ գայլ խորհրդական տեսիլսն, զոր ծանոյց նմա  
հրեշտակն Տեառն, նա եւ զդառնալն իւր ի մարդկային  
կերպարան յետ եօթանասուն աւուր . զի յառաջ քան  
զայս ոտքն եւ ձեռքն փոխեալ էին վասն սալասահարկու-  
թեան սատարաց Արրոցն : Պատմեաց մեզ վասն մեհե-  
նից քակման յերկրին Հայոց եւ խորտակման բազնեացն  
համայնաջինջ, եւ թէ ո՛րալէս դեւրն մարմնաւոր տես-  
լեւամբ հակառակ կային, եւ պատերազմ յարուցանէին  
պաշտօնեացըն իւրեանց ի Տարօն, ի տեղին Գիսանեայ,  
զորս զամենեսեան հայրա հանուրց Գրիգորիոս (վարեաց)  
յաշխարհն Մարաց, որ է ի հարաւակողմն Կասպիական  
ծովուն . անդ գաղաքարեցան դեւրն ամենայն հալածեազը  
ի Հայոց : Յիշեցուցանէր մեզ եւ վասն սրբոյն Նունէի  
մերոյ և Վրաց Վարդապետի, թէ ո՛րալէս ի Մծխիթայ  
քաղաքի բժշկեաց յանրուժական ախտէն զԱռումէ, ոզ  
դուստր սորա, որ էր կին Միհրանոյ աղախնորդոյն Ար-  
տաշրայ պարսկի, եւ թէ ո՛րալէս հրաշխւք քարոզեցաւ  
անունն Քրիստոսի իլեռնամէջն Կովկասու իմէջ վայրե-  
նամիտ բարբարոսացն, նաեւ զմիայնամսպատելն իւր ընդ  
գրացոյն Գեղուէնի և ընդ հօպանամիգ Ճորաց ոյն :

Զայսամեննայն լուեալ մեր՝ ի ձայն օրֆութեան ժիառան  
որեցաք զՔրիստոս Աստուած մեր, զոր՝ ի փառաց իւղաց  
փայլեաց յընդհանուր կողմանս Հիւսխոյ, յԱրեւելս եւ  
յԱրեւմուտո եւրոպական աշխարհին Արեթեան բաժ-  
նիս : Սոյնալէս եւ մեր պատեմեցաք Տրդառոյ փեսայ եղ-  
բօրս իմում զպատերազմելն իմ յունական զօրօրս ընդ  
խուժադուժ ազգացն Գոթայւոց, և զպարտութիւն իմ  
իշայնկոյս Դանուբար գետոյն հզօրի, եւ զերեւումն ի  
յերկնից աստեղաննման խաչին եւ զվերնագիրն լուսեղէն  
թէ « այսու յաղթեսցես » : Զորոյ զօրինակն ետու դնել  
իդրօշակին իմոյ և նկարել իվառս տանճաղացն և որմացն,  
նաև ի նշանս պատերազմական զինուցն և ի կորուսկս  
վեղենդիարացն, որովք զօրացեալ զօրացն իմոց հարին՝  
զհոյշն հեթանոսական հի սիսաքնակացն : Եւ զդառնորն  
խմ յաղթութեամբ ի Հռոմ : Բայց ի ճնշելն զիս երնջիս  
իմոյ, ստեցի ճշմարտութեան և դարձայ ի թշուառու-  
թիւն, իմ . զի հարաւ ի սիրո իմ սուրբն վիսփուկ, որ սպազ  
նանէ, և ոչ տայ զգալ : Դիմադարձ եղէ քրիստոնէա-  
կան հաւատոյս, մոլեկան պատերազմ յարուցի, զի զօրն  
իմ կոտորեցի, որք հաւատուցեալը էին ի Քրիստոս, զոր  
ոչ արար անուեն Տէր . այլ էարկ զանձամբ իմով զեղեւ-  
փանդական բորոտութիւն, զոր ոչ կարացին ճարտարքն  
ճեմարանին բուժել, սորինստէրն սոկրատեան և դոլեալ  
գումարքն գաղիսեան մինչև յայց ել մեզ Արեգակն ի-  
բարձանց և լուսաւորեալ թշկեաց զմեզ Աստրոս Ասե-  
թեառքն և հաւատատեաց զմեզ ի հաւատոս ճշմարիսու-  
Արդ յայտմ հետէ հետազանդիմք հօրս մերոյ հոգեւորի և  
դեմք գրագ բազւայութեան մերոյ ընդ ուիհիք հայրապետ

տացս սրբոց : Եւ մեք իներքոյ ձեռին սոցա կը ամեկասար  
ծառապր . Ա ասուծոյ և ա ասուած արեալ սրբոցս : Գիշեա  
ւաստամ ճշմարտութեամիք եթէ չորք սիւնեն յաշխաթրկա  
ի մեկում ժամանակիս : Սուրբն Մեղրեատրոս յԱրևմուտա  
և Սուրբն Գրիգորիոս յԱրքելս և Սուրբն Անտոն ի Հաւ  
րաս : Եւ Սուրբն Յակովոս ի Մծրին : Յիշտատակ նոցա  
օրհնուաթեամբ և աղօթք նոցա և ամենայն սրբոց ի վերաց  
ամենայն աշխաթրկ եւ ի վերաց սրայազգաւտ պատղատանս  
մերաց : Այդ եկեղեցի և եկեղեցյականք և վաճք և վանա  
կանք ամենայն գոյիւք իւրեանց ազաւտ և ամհաթրկ լիցին  
յամենայն դիմուական հարկաց արքունիք նաև որք ունին  
զնշան կուտաթեան և պարկեցուաթեան արք և կանայք,  
յոխազգեսաթք և պարեզօստահանդերձք պմենմեքեան ուզաւոք  
լիցին եւ արքունուատ զգեցցին . իսկ որք ամհաղանդին  
հրամանաց մերոց , և ընդ հարկաւ պրկանեն զեկեզեցի  
կամ զքահանոյ , զկրօնաւոր կամ զհաւապտաւոր , հարեալ ,  
հալածեալ լիցին յերեքացն Աստուծոյ և որոշեալ թհա-  
զորդաթենէ սուրբ հանատոցս եւ պատիփ պատուհասի  
կրեպցին ի մերմէ թափաւորութենէմ և յամենայն աթու-  
ռակազմաց մերոց . իսկ համօրէն մարդիկ սերիհական աղ-  
գացու Ռազմիստացոց եւ Հայոց աժենեւին վեցիսահաւ թէ  
լիցին . բայց յամենայն վաստուակոյ յարեանց հնդեական  
տասցին ի պրոճաւարքունիք և այլ դիմունի դրաւնն նոցա մի  
երթիցէ : իսկ այլ աղդք եւ լիզուք զորս մեծաւ օկանու-  
րազբաւ հնագանիքուցուցաք մեք եւ Հայոց նորաւ պարտին  
մեղ զգին պիխաց փայտանց : Բայց ի հնագանիքին և տան մեզ  
ուկիւնարժամիւ ըստ կապի իւտարին նորեք անգամ ի գա-  
րուն ի դիմէւն յամկուն յանանէ և յաշուն յարդեանց

մոլէ . իսկ աղքատք և օտարք ընդ այսպիսի մի յիշեացին և  
Բայց վաճառականք, որք շրջին անահք և չահին ի մերում  
պշսարհիս և յամենայն իշխանութեան մերում, և ոտիչ  
հանք եւ արծաթահանք բաժին հանցեն մեզ : Իսկ ի  
հանդ չել հրամանաց հզօրիս մերոյ, ես ինքնագլուխ Պատու  
պատս Աեղբեստրոս և ամենայն աշխարհի՝ յորժամ տեսի  
զարդու զաւակս իմ կոստանդիանոս կայսր, ոք յամե-  
նայն զօրութենէ իւրմէ զօրացոյ և պատուեաց զպտու-  
կառորն Հայոց մեծաց զԾրդառին, եւ մասունդրեաց  
դազգն Հայոց և զաշխարհն . սարն նման և նոյնհանդու-  
նակ ըստ այսմ սարասի եւ ես յօժարեցայ ի պատուել  
զմեծ խռառովանողն Քրիստոսի զգահակից իմ զԳրի-  
գորիոս . կամակցութեամբ կայսերս մեծի հրաման հանի  
ի հնագանդեալք իմ իմերձակայ յազդս և յաշխարհս իտա-  
լացւոց, Ալամանցւոց, Խապանիացւոց և Ժողովեցի զամե-  
նայն արքեպիսկոպոսունս և զամենայն ուխտ եկեղեցւոյ  
ի գոտոն գոնարացեացս արքայութեան, ի պատուեալ  
սրբազնամն Սրբաց Պետրոսի, զինայիշխանիս Քրիստոսի  
եւ Պողոսի Պոենորի հաւաքելով առ մեզ զբաղմութիւն  
սրբութեանց, որք կան իմերում աշխարհիս ի Հերակլիսի  
աղմանէն մինչ իյարձանն Աելիտեան, և ի Աւալէ կղզւոյն,  
որ հայի հանդէալ Ատլաս լերին մինչև ի Ամիկիայ կղզին,  
յորում կայ հրակատորն բռուկանիայ (այսինքն հրա-  
րուգիս) : Ապօք ամենեքումք և հզօք աջով սուլոր Առա-  
քելոցս և նշանաւ խաչին Քրիստոսի ձեռնադրեցաք զկա-  
րողիկոնն Հայոց զԱւերքն Գրիգոր՝ Պատ եւ Պատրիարք եւ  
Հայրապետ հյաւմանահան ի տիեզերական ժողովն, համա-  
պատիւ մեր հզօք աթ ոռոյս, և Երու սաղէ մացւոց և Անտի-

բացւոց և Աղեքսանդրացւոց, և օրհնեցաք զսաւ ակտուոր  
անուանմբ սուրբ Երրորդութեան՝ դմելով՝ ի վերայ արժա-  
նաւոր գլխոյ սորտ զաջ. Արքոյն Պետրոսի վարչամական-  
Քրիստոսի և արարաք զնա Գառորիարք Հայոց Մեծաց.  
զի ինքն եւ ամենայն արքուածառանիցը առաւ ինքնազդոյի  
և պիտի շիրեանց և պիտի պատացն առելով ձեռնադրին  
առաջարկութեամբ իւրեանց քաջարինն է Եւ Հայոց հայրու-  
պեան ձեռնագրէ կամթողիկոս Արքաց աշխարհին, որը  
մերոյն Նունէի աշամերտեցան եւ ուր եւ Հայ ազգ-  
ափուեալը յընդհանուր աշխարհի մէջ ոյլալեզրու քրիստո-  
նէից, իշխանութիւն ունի Հայոց Պատրիարքն ձեռնադրել  
նոցա եպիսկոպոս . ևս և աշխարհն Աղվանից եղիցի ընդ-  
հապանդութեամբ Հայոց հայրապետին . և առաջարկու-  
թեամբ Աղվանից թագաւորին Հայրապետն Հայոց ձեռ-  
նադրեացէ կամթողիկոս նոցա . և Պատրիարքըն երերին  
Եցրուսագէմի և Անտիոքայ և Աղեքսանդրիոյ յորժում  
պատրիարք ձեռնադրին՝ կամաւ եւ ընտրութեամբ Հայոց  
հայրապետին լիսի, և ուրոք նոք նոտցի յամթու պատրիար-  
քութեան, զդաւանութիւն հաւատոյն իւրոց, զոր ալսրոտ  
կրմեզ ծանուցանել զայն Հայոց հայրապետին ծանուցէ.  
զի զնա կարգեցաք մեզ գլխավախուն և հրամանահան ի  
վերաց տմենայն տօնական միջնաշխարհի . և ի յեղից  
արևու մինչև ի դրանեւ որախատին, որում և վկայեաց Հո-  
գին Սուրբ սրբութեան եւ արժանաւորութեան Արքոյն  
Գրիգորի . զի մինչդեռ կայաք ի խորանին սուրբ եւ  
զնութեամբ աղօթմն կատարէաք, ահան յանկարծակի-  
լոյս տննառելի և անդրնդէլ ի մարդկանէ էջ յերկնից ի վե-  
րայ սրբոց սեզանոցն և աղեղնանման օգօք եօթն կրկին:

կամաք կապեցաւ ի վերաց Արքոյն Գրիգորի, և Կահրաչ  
փայլմամբ ճառագայթ ափայլեաց ըստ երեսաց նորա որ  
պէտ զդէմն Քրիստոսի ի Թօնիքը : Իսկ մեք տոնենեքեան  
ապշտակը՝ ոչ իշխէաք հայել ի նա մինչեւ կատարեաց  
զծուրբ պատարութն . և ի վաքր մի փայրատել շամանդասղ  
ամպոյն, ապա իշխեցաք մօտել և տալ նման համբոյր ի  
սէր որբութեան քստ օրինացն Քրիստոնէից : Ըստ որում  
խոնաքէւալ աստուածակարգ կայսրն սուքր՝ սպասաւո-  
րեալ ի սրորեից, եկն ահիւ մեծու առաջի Առորդ Լուսա-  
ւորչին և ի ծունկս իշեալ համբուրեաց գրալըն նորա քառ  
օրինի օֆրանենի : Եւ ապա համարձակենիլ համբուրեաց  
դաշն և դժոացն և ապա զդէմնն իրեւ ի նոյն ինքնի Քրիս-  
տոս միանսալով համբուրիւ շրթանց : Ապա ասէ կայսրն  
կուտանդիանոս « ով երանելիք ի հարա սուքր հայրա-  
պետ » որ անքուն եւ անհանդիսա կալովիդ քո նմանիս  
զուտրթնոց երկնից, եւ անկերակուր կալովիդ գեր ի վե-  
րաց գոտանիք ամենոյն գիտնական վարդապետոց . տրդ՝  
աղաջեմք զքեզ սիւնդ անսասանեցի ամենայն աշխարհի-  
տառ . մեզ զհաւակտոյս մեր դաւանութիւն եւ աղօթեա-  
գորն ամենայն աշխարհի և առառել վասն մերոյթագա-  
ռութեանս, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ  
վարեսցուք զտիեզերական իշխանութիւնն . եւ այսու-  
կենօքս վերին կենացն և երկնից արքայութեան արքա-  
նաւորթացուք : Նմին նման և Տրդատն կայսերամինքս և  
ամենայն թագաւորոց և իշխանք և եկեղեցականք՝ Հայր  
և Հառմայեցիք անկանէին առ ոստ Արքոյն Գրիգորի և  
իննզին թիւն մեզաց իւրեանց և դադնութիւնն ի-  
ոյստերազմին վասն որոյ և ես Անգրեստրոս, որ ականո-

տես եղէ այսպիսի գործմանալիքաց, որով պատռուեաց Առաջական գործեամբ զայն մեծ, մեծարեցի և ես զնաց ըստ խօսեմ կարի առարտվ հմա զվական իմ պատռական, որ եր ըստ Արքոյն Ձեռակ եւթօքն, առաջին Եպիսկոպոսի Երուսալ զէմի՛ նաև ամենայն գարզ հայրապետական անձին իմոց ի ժամ ձեռնադրութեան, և զմառանքն իմ խաչաձեւ և զգաւանդանն իմ ցեղեցիկ ի գեղազէց ականց և ի մագքուր մարդարանաց յօրինեալ և զամենայն ազապք պատռագի արրոյ սեղանոյս, զոսկեցին ակիս և զմանշմանց ի միավիերի՛ ականց տաղազիոնաց բազմակշռաց և միորն իմ այխառակ, որ Էր փակեղն Յիսուսի, նաև գրծի բարացի ձեռն բազեքն հանդերձ երկոցունց առաքելոց Պետրոսի և Պողոսի, և ընտառու ակունա պահծառս և պատռական մարդարիտ ճուհարականս և այլ բազում զսրդս անգինս և անդիւսու ամենայն աշխարհաց, զար առաքեցի ուր խորանացն, որը ի խորին Հայո են, յորում է ջ յայտնապէս Միաձին Արդին Աստուծոյ և ուկի ռառամբ բաղիսեաց զանորաց ըստիւտա անդիուցն, նաև արրութեան ակնեկին սանոյն իմոյ Արքոյն Հոփամափեթի և մօքն քառասութեանց Գայիս նեայ և առենայն ջահազգեատ կուսանացն սանուժել որի որդացն, զատերացն Հոռոմոց և մարցն Հայոց և Արաց, պայծառ եւ պանծաղի պատրաստութիւն պարգևեցի պաշտկանց կուսանամին նոցա բատ արժանի սրբութեան նոցա, նաև միայնանի Արքոց կարապետին Յովհաննու Եւ Աթանազինեայ առաքեցի սակի ծածկոց ծալովի եւ ապարժաշ սրբոյ սեղանոցն և բազում ազապք ի պէտս եկեղեցւոյն եւ Եղիարյ, որոց միաբանեալ մեք կայսրս եւ Հայրապետս մասնաւորեցաքի սեղանն ի տարին երկու

սանդղանգու տակը ի հարկացն Միջազգեասաց, նաևս առա-  
մել տուաքեցաթ ընծայա բազուան Ընծայեաց Սուրբ Ա. Ա.  
պաւած ածնին և Ա արագայ վերնակրօն եղբարյն և Սուրբ  
Հօրն Պ Առնդեայ, նաև ամենայն եպիսկոպոսացն և քահա-  
նայից և կրօնաւորաց և կղերթեպասացն եկեղեցւոյն, որք  
եկեալ էին զշետ Լ պատորչին Հայոց, ետու տուրս մեծա-  
մեծս և պատրիարքուցի զամենայն պիտոյս նոյն ընդ ծով  
եւ ընդ ցամաք ճանապարհին, որ յԱրեւել նաև զօրս  
արքունականս մինչև ի ժամանակ Հայոց . պարգեւեցի և  
նորապատուկ Պարթեիստ մերոյ յիշտոտակ յաւիտենական  
ազգաց յազգու ի յԵրու սաղէմ քաղաքի իշւեան Հայոց  
աղօթականացն զմիայադանն Արքոյն Յակոբայ, եղրօն  
Յահաննու, զի ի յարրու նազկան գոնձուցն շինեսցեն զեկե-  
ղեցի եւ ածցեն պարիսապ բարձր շուրջանակի եւ ի ներքս  
սրակս և մենեակս աւունձնականու արանց և կանանց ի  
Հայոց եկելցցն, և ռսմիկ նոցու և ամենայն սիխոյը ի գուլ  
եւ ի գնալն յարքամուստ լիցի ։ Պատղաստեցի եւ տեղի  
պատարագի Արքոյն Գրիգորի ի Յարութեան մեծի եկե-  
ղեցւոցն զՊարզդոթաց զիսաշելութեանն և զմնանից դու-  
տայն եւ զմիջի կանթեղն մշտավառ, որ կան երեք կան-  
թեղք ի վերայ գերեզմանին Վրխատոսի յիշատուակ Լա-  
տինացուց և Հայոց և Հեղենացւոց ։ Գրեցի հրովարտական  
ընդամնականու առ Աւետորան Հայն տիտուակալ պատ-  
րիորքունս, որ յԱրեւել զի զՀայոց հայրապետն համա-  
սրատիւ տեսցեն ինքեանոց մանաւանդ թէ և նախագահ  
իսկ վասն զի յերկոտասանն Առաքելոցն չորբն անդ կա-  
տարեցան . անդ կայ եւ պատկեր Փրկչին; զոր տաքենաց  
Արքարու, որ յառաջ քան զամենայն թագաւորս նու հա-

ւատեաց ի Գրիմտպս Աստուած . անդ կայ եւ վայտեղի, և  
պարկերն Աստուածնեին, զոր Տէրն տեսանագրեաց Եւ  
աւրհեաց յաւոր փոխման Աստուածամօր . անդ կայ եւ  
խաշամասն Պատրիկիեայ , որ էր ի պարանոցի Սրբոյ  
կուսին Հոխիսիմէ օրիորդին, եւ այս մասն Հեղինէի Եւ  
Կոստանդիանոսի, զոր մեք պարզեւեցաբ Տրդոսուց . անդ  
կայ և գեղարդին Ղունկիանուի հարիւրագետաի, որով կու-  
խեցաւ (խոցեցաւ) կող Փրկչին և բղինեաց ջուրն արիւն  
Խանուկ միլոտութեան եւ հաջորդութեան . անդ է աջն  
Յովսեփայ Արևմաթացոյն, որ պատեաց եւ թաղեաց  
Դէր . անդ է և շիշ իւղայն ; զոր աւրհեաց Տէրն և ետ  
ի ձեռքս Առաքելոցն, որովք հրանդք առողջացան և մե-  
զառորք արդարացան, որպէս պատմէ Սուրբն Մարկոս  
թափիչ և աւետարանիչ . անդ է և բովանդակ նշխարքն  
Մկրտչին, զոր Յովհաննէսաւետարանիչն եհան ի Հրէաս-  
տանէ ի յԵփետոս, և Փերմելիանոս եալիսկոպոսն երեր ի  
Կեսարիայ, և Սուրբն Ղեւոնդէս Սրբոյն Գրիգորի պարու-  
գեեաց, նոյնողէս և Սրբոյն Աթոնագինեայ, որ եղայրը  
էր Մարիամայ, մօր Վրթանխափ և Ռատակիսի . անդ է ն  
աստուածարեալ Սուրբ արքայն Տրդատ և սատուածան-  
տականն Գրիգոր զուաքթոնն, որոց տուաք հրանան զի  
յամենայն գնացս ճանապարհաց իւրեանց, ուր և հանդի-  
պեսցեն, նշխարք սրբոց տուանց ամենայն հակառակու-  
թեան ամենայն ոք մօսն պարդեւեացէ նոցա, որպէս եւ  
մեք զրացուկս նրկոց Առաքելոց պարզեւեցաք և այլ անթիւ-  
մասունս . վասն որոց յետ մեր վեհագոյն հրամանացս Հա-  
յոց հայրապետին կայ իշխանութիւն, զորինչ և կամեսցի  
ըստ առաքելական կամոնացն կապել և արձակել ի յեր-

կինս եւ յերկրի . աւքհնեալքն ի Հայոց հայրապետէն  
աւքհնեալ եղիցին ի Քրիստոսէ եւ ի սրբոց Առաքելոց եւ  
ի մէնջ եւ յամենայն սրբոց , եւ բանագրեալքն ի նմանէ : ի  
նմին կացցեն մինչև զզջասային . և հրաման հանէ Հայոց  
հայրապետն ի Հայս եւ ի Հռոմէն , ի Վիրս եւ յԱղվանէն ,  
յԱսորիս եւ ի Պարտ ի ծովէ մինչև ի ծով եւ ի գետոց  
մինչեւ ի ծագս աշխարհի եւ ի գրունս Օքախատին :

Այս գիր միաբանութեան և սիրոյ և հաստատ հայրե-  
նագրութեան ի հետ Հայոց գրեցու հրամանաւ մերով  
Կոստանդեայ կայսեր . եւ Սեղմետրոսի պատի ի մեծ  
պիւնչողութիւն և ի ուժու սուրբ Առաքելոց յատին լեզուաւ  
մակագրեալ եւ արքունական մատանեաւ մերով կնքեալ  
եւ ստորագրեալ . եւ զհաւասարն այսմ թղթոյ եւ միա-  
բանութեան թուղթն ի հեռ Տրդատայ եւ Արրոյն Գրի-  
գորի եղաքիշամբուն արքունի . իսկ միւս գիրս փոխադրեալ  
ատենագրին Հացոց թագաւորին Տրդատայ մեծէ .  
Աղաթանգեղարի , բայց ճարտար գրչի և տարեալի Հայ  
ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ , որ է օքնեալ յաւ-  
տեսնա . ամէն :

# ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

## ԱՏՈՒԳՈՒԹԵԱՆ

### ԴԱՇԱՆՑ ԹՂԹՈՅՆ

Զոր կյանքանիշինու մեծ ինքնակալին Հռովմաց և Ա. Մեղադասութիւնը Հայրապետու Հռովմաց տուած են մեր Տրամադրութիւն և Ա. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին :



### ՑԱՌԱՋԱԲԱՆ :

«Հազարէ բար ցհար ու ի պարագացէն  
ու ու ցներ ու ի առաջցէն ու ու » :  
Ք. օրէն. Ը. 7 :

Արդարեւ ով որ կուզէ ու կրաղձայ ազգային պատմութեան մը ստուգութիւնը քննելու և խմանալու, անշուշտ առաջին փոյթը պիտի ըլլայ օտար ազգաց կարծիքական գրութիւններուն տուած շփոթութիւնը մերժելու, եւ մանաւանդ աշառութեամբ եւ կողմասիրութեամբ

գրուած խօսքերը հերթելու, և ապա ազատամիտ ողուզվ պիտի քննէ զանի նոյն իսկ աղջային վագերացեալ ժամանակագրութենէն, որպէս զի նոյն աղջին արժանաւ հաւատ վկայեալ անձինքներէն մատենագրուած ու ստուգուած ըլլայ :

Որովհետեւ ամեն մէկ ազգ իւր տղգոյին վիալսասանութեան ու դիալուածոցը առաւել ծանօթացած կըլլայ քան թէ օտարին, ըստ անածին թէ « Առաւել գիտէ տիմարն ի տան իւրում, քան իմաստունն ի տան այլոյ, ասոր համար եւ Կալմէթ մեկնիչ իրաւունք ռանեցառ Սուլբ Գրոց վրայով խորհրդածութիւն ընելու ժամանակի (Յեսուայ Ճ. 7.) այսպէս գրելու . « Յայնա՝ որք վերաբերին առ վիալսանութիւն իւրաքանչիւր ազգի կամ աշխարհի, պարու է անսալ այնոցիկ՝ որք են ի նմին ազգէ կամ յաշխարհէ, բարոյապէս համարձակեալ յայն կարծիս, թէ նոքա լաւագոյն եւս տեղեկացեալ են իւրեանց սեսլհական անցից քան զայլ ոք օտարազգի » :

Ուրեմն այն Ագարանգեղոս անուամբ մեր եկեղեցական մատենագրութեան վերջը գրուած ստուգապատում Դաշնաց թղթոյն վրայով անտեղի կարծիքական խորհրդով եւ կողմանակցութեան կրիւք գրուածները եւ գայթակղութիւնները կըմերժուին սյս տեղ, և վլաւերական գրութիւններէն արժանահաւատ անձանց հաստատուելով՝ անոր ստուգութիւնը հաճելի պիտի ըլլաց ճշմարտասէր եւ ազատամիտ աղջայնոց, որում բարեմանույթ թեանը համար կամ միւսմ յաւէտ անձնանուէր աղօթարար առ Տէր Յիառապ Քրիստոս :

ՄԱՏԹԻՈՍ ԿԱՐՊՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ :

## ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Այս Դաշտանց թողթը անժխտելի երդմանք հատուառեցին իւրեանց մէջը կատանդիանուա կայսրն Հռովմաց և Տրգառաթագաւորն մեր և առարքն Անդրեսորուա հայրապետն Հռովմայ եւ սուրբն Գրիգոր լուսաւորիչ Հայրապետն մեր (1), երբ որ հսկենոր փառազարդութեանմբ սիրուկյութիւնն եւ խնդակցութիւնն կընէին՝ անձամբ իսկ տեսութիւն ըներդ միմեանց հետ ի Հռովմ։ Այս զի կաւրաքանար կայսրն Առառանդիստու հոգեգղուարձ ցըն ծութեամբ Տրդատ թուղարակ որին նորուահատուատ հաւասարցեալ ըլլաղն վրայով նոյնալէ Տրդատ թագաւորնուազ կուրտիանար հոգեպարար բերկրանօք՝ կատանդիանուանքն քրիստոնէական համատով լուսաւորուեցն վրայով։

(1) Գիտել արժան է, զի այս Դաշտանց բուդրս յետ ժամանակաց ունենաւուա կամ իւսուայախառնեան օրինակազիրների մեռով տեղ տեղ այրացրուած եւ իւսուաբարուած է՝ տարտելոց յառեցուածներ իւր մէջ քննուենելով, ինչպէս կիսատովաներն ունեցաւացէն և Միքրայէլ Չամելան (ի Պատմ. Հոջ. հատ. Ա. էջ 10 և 643) և Պուկաս իմանքնեան (ի Հետիսու. Հայուստ հատ. Գ. էջ 258 ի ծանօթ)։ Իսկ մեր աց աշխատութեան նպատակը՝ ոյխոյ րլրայ միայն հարազատ բնագրին տուգորիւնը հաստատել՝ ցուցանելով արժանահաւատ մասնեաց վիայութեամբ, բէ կեղծիք չ' այն, այլ՝ հշմարիս։

եւ կրիս առաջեց և ըստ առաջ Առաջ  
Հայոց պատմութեան ու կանոն գույք է բնա-  
րան և առաջ պատմութեան ըստ Բենակ  
դաստիարակ գույք է բնաւոր թշու զան պա-  
տմութեան մասն իւրաքանչ ։

Զայ կառավար Արքա առաջ գույք  
առաջ և Արք կառավար առաջ գույք է բնա-  
րան պատմութեան կանոն գույք է բնաւոր  
զան Արքա առաջ գույք և զան պատմութեան  
առաջ եւ առաջ պատմութեան առաջ և զան  
ընտիր զան հանդերձ ։ Առաջ զան Արքա  
զան է Արքա առաջ գույք ։ . . . Զայ կառավար  
առաջ առաջ թագավոր պատմութեան պատմութեան  
առաջ պատմութեան, եւ Հայոց պատմութեան առա-  
ջ խարհամնութ Դրանն՝ պատմ անան կոչէր Անդրեադոս,  
որը մեծաւ սիրով պատմի պատրեալ ընդ առաջ Եղանձին.  
և տուեալ հանդիսաւ շնորհս անել ժամանակս ինչ անդէն  
ի ամեղերամրան քաղաքին ։ Ապա զարմացեալ առաջ  
ծասէթ կայսրն կառավանդիանաւ հարցանելով զարդայն  
ջրդաւ, թէ զիա՞րդ ո՞րպէս առ քեզ եղին Աստուծոյ  
սրան չելիքն ։ . . . Ա ան որոյ զարմացեալ կայսրն կու-  
տանդիանոս, խոնարհեցացեալ զանձն՝ անկանէր առաջի  
սրբոյն Գրիգորի, զի օրհնեսոյի ի նմանէն ։ Եւ բազում  
վայելուչ մեծարանօք պատմի արարեալ նմա, իրեւ  
խոստովանողի Քրիստոսի ըստ արժանաւորութեան  
նորա ։ ։

« Սայնպէս և արքային Տրդատայ՝ իբրև եղբօր սիրելոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա առաւել, դաշինս կուէր ընդ նմա, միջնորդ կալեալ զհաւատան՝ որ ի Տէր Քրիստոսն էր. զի անշուշտ մինչ ի բուն գհաւատարիմ սէրն ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն. զի եւս քան զեւս առաւելագոյն արքայն Հայոց հաստատէր ի յԵրրորդութիւն ի հաւատասն, պատմէր և վասն վկայիցն Աստուծոյ, թէ ո՞րալէս, եւ կամ զի՞նչ օրինակ վկայեցին . . . : Ապա յետ այնորիկ մեծարեալ լինէին դարմանօք մեծապատիւ շքեղութեան կարգօք յարքունեացն եւ յեկեղեցեացն, եւ ի պատուական իշխանաց քաղաքին. եւ մեծամեծ պատարագօք և երևելի պարգևօքն պատուեալ սիրով » . (Ագաթան. տիալ Վենետ. էջ 646-651) :

Տե՛ս եւ ընթերցիր Զենորայ եպիսկոպոսի աշակերտի արրոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ այս մասին ըրած պատմագրութիւնը (եր. 25. 75-92) : Խորենացի (Բ. ձդ) : Ստեփաննոս Ասողիկ (Բ. ա.) : Եւ աւելորդ մի համարեր լսել նաև Յովհաննէս Պատմաբան Կաթողիկոսին վկայութիւնը, որ այսպէս կը գրէ : « Յետ սցարիկ ապա գնացեալ եւս ընդ արքային Տրդատայ Աստուածակարգ կայսրն կուտանդիանութիւնու բազմօք իմն եւ նազելի եւ վայելու մէջ մեծարանօք պատուէ զօտրք Հայրապէտն իրբեւ զիւնդամին Մարտիրոս առաջին անկանելով և աղօթօնուի բականս եւ գրմարտիւնու պատուէ զօտրք Տրդատայ Այսպէս զնա, կուտանդամիրեալ եւ Տրդատայ հանդերձ հանեալ յուկիապատ կառաւ մեծառ շքեղութեամբ յուղարկէ զճանապարհոյն » (տիալ Մոսկուսի յէջ 24) :

Եւ երկու առաքելապատիւ եւ բազմարդիւն Սրբազն Հայրապետներն ալ իրենց աստուածահաճոյ վաստակներուն եւ հոգերուղիս աւետարանական քարոզութեանց պատուղներուն վրայով կզմայլէին, ինչպէս դրեն ստուգապատում մատենագիրք :

Զայս կատուգէ Ադաթանգեզոս ատենադպիրն Տրդատայ. « Ապա իրրեւ լուսու զայս ավենայն, կըսէ, մեծ արքայն Հայոց (Տրդատ), խորհուրդ առնոյք վասն ճանաւ պարհացն այնոցիկ, հանգերձեալ կրազմէր առնոյք ընդիւր զմեծ Արքեպիսկոպոսն Գրիգոր և գնարուն որդին Ուշտաւակէս եւսիսկոպոս և զմիւս եւսիսկոպոսն Պլոդրիանոս... Եւ այլ բազում մեծամեծօք, եւ եօթանասուն հանդարաւ ընտիր զօրուն հանդերձ՝ խաղայր գնայր յԱյրարատ գաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ... Զոր իրրեւ լուսու աստուածակարդ թագաւորն պատուակալ այժուղնկոս ապանդիանոս, եւ Հայրապետն մեծ արքեպիսկոպոսն աշխարհամատ Դիանն՝ որում անուն կոչէր Աեղքեստրոս, որք մեծաւ սիրով պատիւ արարեալ ընդ առաջ ելանէին. և տուեալ հանդիատ՝ շնորհուունել ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին : Ապա զարմացեսլ աստուածասէր կսյսրն Կոստանդիանոս՝ հարցանելով զարքայն Տրդատ, թէ զիա՞րդ ո՞րպէս առ քեզ եղին Աստուծոյ սքանչելիքն... : Վասն որոյ զարժացեալ կսյսրն Կոստանդիանոս, խոնարհեցուցեալ զանձն անկանէր առաջի սրբոյն Գրիգորի, զի օրհնեացի ի նմանէն . եւ բազում վայելուչ մեծարանօք պատիւ արարեալ նմա, իրրեւ խոստավանողի Գրիստոսի ըստ որժանաւորութեան նորա » :

Ա. Սայնպէս և արքային Տրդատայ՝ իրաւունք եղած սիրելոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա առաւել, դաշինս կռէր ընդ նմա, միջնորդ կալեալ զհաւատսն՝ որ ի Տէր Փրիտոսն էր. զի անշուշտ մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի մէջ թագաւորութեանցն պահեացեն. զի եւս քան զեւս առաւելագոյն արքայն Հայոց հաստատէր ի յԵրրորդութիւն ի հաւատսն, պատմէր և վասն վկայիցն Աստուծոյ, թէ ո՞րսկէս, եւ կամ զի՞նչ օրինակ վկայեցին . . . : Ապա յետ այնորիկ մեծարեալ լինէին դարմանօք մեծապատիւթեղութեան կարգօք յարքունեացն եւ յեկեղեցեացն, եւ ի պատուական իշխանաց քաղաքին. եւ մեծամեծ պատարագօք և երևելի պարզեօքն պատուեալ սիրով » . (Ագաթան. տիալ Վենետ. էջ 646-651) :

Տե՛ս եւ ընթերցի՛ր Զենոբայ եպիսկոպոսի աշակերտի սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ այս մասին ըրած պատմագրութիւնը (Եր. 25. 75-92): Խորենացի (Բ. ձղ): Ատեփաննու Ասողիկ (Բ. ա.): Եւ աւելորդ մի համարեր լաելնաւ Յովհաննէս Պատմաբան Կաթողիկոսին վկայութիւնը, որ այսպէս կը գրէ: « Յետ այտորիկ առաջ գնացեալ եւա՛ ընդ աբքոյին Տրդատայ Աստուածակամրգ կայրեն կյուտանդիմնութ բազմօք իմն եւ նազելի եւ վայելուշ միջարդանուք պատուէ զօուրը Հայրապետն իրիւ զինդաննի մարտիրոս առաջիւ անկանելով և աղօթօ նուի բականա եւ զրժնութիւնս ի նմանէ հայցելով: Եւ այսպէս զնաւ պատուապիրեալ եւ Տրդատաւ համուերծ հանեալ յուսկիապատ կառաւ մեծաւ շքեղութեամբ յուղարկէ զճանապարհոյն » (տիալ Մոսկուայի յէջ 24):

Եւս եւ մեր Շնորհալին Ներսէս դրէ (ի վ իոդաս. 360  
և 370) :

« Ըզկւոտանդեայ դարձն լուեալ,  
Որ էր Հոռվիմայ թագւորեալ,  
Յայն ճանապարհ զօրօք ելեալ.  
Եօթանասուն հազար ընտրեալ:  
Յառաքելոցն յաթու հասեալ,  
Սուրբ ոսկերացն երկրագեալ:  
Ի յարքային պատուաիրեալ,  
Հայրապետէն սիրով պատուեալ:  
Գրիգորիոս վկայ եղեալ,  
Խոստովանող վերընկալեալ:  
Եւ զՏրդատ փառաւորեալ,  
Որպէս հրաշխւք վոխակերպեալ:  
Քրիստոսական կրօնիւք խրատեալ,  
Եւ ի հաւատոս հաստատեալ:  
Ի յուխոտ դաշանց միաբանեալ,  
Թագւուրիացն երկուց եղեալ »:

Այս սիրակցութեան եւ ուրախակցութեան - մէջը  
առակաւին մէկզմէկէ անհամբ եւ տեղով չի մէկնելով,  
միաբան եւ միասիրոտ հաստատեցին այս Գաղանց  
թուղթը՝ հոդեւորականեւ քաղաքական իրաց և գիտուա  
ծոց և գործողութեանց գրայով ապհաններ և օրէնքներ ձ  
ղնեցով : Վ առն զի այն տեղ հանգիստացեալ էին գիշա-  
ւորապէս երկու քաղմարդիւն սուաքելայաջորդ Արքա-  
զան եւ գերբնադիր Հայրապետոներ, այսինքն սուրբն  
Սեղբեսորոս Հայրապետն Հոռվմայ եւ սուրբն Գրի-

գոր Հայրապետն մեր . Եւ երկու աստուածասէր եւ մեծահաւատ թագաւորք ; Կոստանդիանոս եւ Տրդատիոս :

Այս ամենը յայտնի կերեւի ազատամիտ բանասիրայ առջեւը , երբ որ առանց կրից կարդալու ըլլան այն Դաշնանց թուղթը՝ որն որ գրած է Տրդատ թագաւորի ատենակապիրն՝ ստուգապատումն Ագաթանգեղոս : Այս գրքին վերջը կը տեսնուի՝ եթէ հաւատարիմ գրիչէ օրինակուած ըլլայ , եւ եթէ առանց կողմնակյութեան տպուած ըլլայ :

Ապաքէն թող այս տեղս յայտնի երեան ելլեն ճշմարտապէս եւ ստուգաբան վկայներնիս , եւ հաստատեն այս թուղթին ստուգութիւնը , մերժելով այլ եւ այլ կարծիքներն ու սխալ մեկնութիւններն :

Նաեւ սուրբ Վրթանէս աստուածարեալ հայրապետնիս կը հաստատէ իւր այն թուղթին մէջ՝ որ գրեց իրեն եալիսկոպոսներովը եւ ազգիս նախարարներովը մեծին Կոստանդիանոսի որդւոյն Կոստանդ կայսեր , խնդրելով որ Տրդատայ որդին Խոսրովը Հայաստանի վրայ թագաւորեցնելու ջանագիր ըլլայ օգնականութիւն հասցնելով . որպէս զի Հայաստան ապահով և աղատ մնայ Պարսից բռնաւորութենէն և ուրիշ թշնամիներէ . վասն որոյ այսպէս գրեց . « Եսիսկոպոս Վրթանէս եւ որք ընդ նուվառ Եալիսկոպոսները եւ ամենացն նախարարք Հայոց մեծաց , Տեառն մերոյ Կոստանդեայ կայսեր ինքնակալի խնդալ : Յռւշ լիցի քեզ պայման ուիտի հօրն քո Կոստանդիանաի , որ առ մերում թագաւորին Տրդատայ . և մի՛ տռպես զաշխարհն քո Պարսից անաստուածից , այլ

օդնեացես մեզ զօրօք՝ թագաւորեցաւցանել գոփղի Տբգա-  
տայ զլսուրով եւ այլն. (Խոր, Գ., ե) :

Այսպէս ալ Դաշանց թուղթին վկայութիւն եւ հաս-  
տառութիւն չե՞մ մեր Եղիշէ սուրբ վարդապետին  
գրածը, որն որ Փոքր Թէոդոս կայսեր ուղած է սուրբ  
եւ երջանիկ կաթուղիկոսն մեր Յովաչի՛ ազաշերպ որ  
օգնութիւն ընէ Հայաստանու Ա արդանանց քաջամար-  
տիկ գորավարաց, որ քաջ արիութեամբ ախոյեան քրիս-  
տոնէական հաւատոյ կային ընդդէմ Պարսկա, եւ կը  
տագնաստէին համայն ազգայինք մեր յայնժամ եկեղեցա-  
կանոք եւ աշխարհականօք յերեսաց չարաչոր խարդա-  
խութեան ամենաթշուառ ուրացելոյն Ա պատկայ :

Ահա այս խնդրանաց թուղթին եւ կայսերական կող-  
մանէ քննութեանը մէջ կը յայտնուի Դաշանց թուղթին  
հաստատութիւնը, ինչպէս գրած է. « Յովաչի եալիտկո-  
պոս բարդում եալիկոպոսակցօք իմովք եւ ամենայն զգիք  
Հայոց . . . առ մեծանունդ Թէոդոս կայոր, բազմասցի  
ողջոյն մեր առ քեզ » . եւ յետոց յիշեցուցանել կուտայ  
Դաշանց թուղթը յիշառակարան անունով այսպէս. « Որ-  
պէս մեք իսկ ունիմք լանսուատ յիշառակարանն գառա-  
քինի նախնեացն ձերոց » եւ այն եւ արն :

Այս խնդրանաց թուղթը առ կայսրն Թէոդոս մասու-  
ցանելէն զինի, սկսան քննելու յիշառակարան անունով  
ցուցուած Դաշանց թուղթը, որ ուխտ համառութեան  
ալ կըսուէր. վասն որոց այսպէս գրուած է. « Եւ իրքեւ  
յանդիման եղեն (կրեշտակը Հայոց) մեծի թագաւորին,  
եւ ընթերցան զգիք պազաւանոց Հայոց աշխարհին եւ  
յիշառակարանն նախնեացն, բազում մատեանք ի մէջ

եկեալ ընթերցան, որ զնոյն ժախտ հաստատութեան իներքս գոտանէին.»; (Եղիշէ. յէջ 54, 55 նոր տպ.) :

Այս տուգագապառվամ Դաշանց թուղթին՝ մեր ՏԵՐ-  
ՊԱՍ արքային պատեհադպիթ Ագաթանգեղամին խօսապէ՛ռ  
գրիչ ըլլալու կը հատաստէ Մովսէս Խորենացի առ բր  
վարդապետնիս ։ Որովհետեւ երբ իսկսի ծանօթաթիւն  
տուլ երանելի Նունէի վրայ, որ սրբոց Հրիփիսիմեանց ըն-  
կերներէն մէկն էր (օր քրիստոնէ ութիւնը համարձակ եւ  
անվեհէր քարոզելուն հսմար) Արաքերուհի ալ անուանե-  
ցաւ), վկայութիւն կը բերէ Ագաթանգեղամին՝ լսերդի-  
« Զոր համարձակիմք ասել (Նունէ) Առաքելուհի եղեալ,  
քարոզեաց ի Աղաքրջաց սկսեալ առ դրամբը Ալանաց եւ  
Կասպից մինչև իսակմանս Մատրթաց, որպէս ուսուցանէ  
քեզ Ագաթանգեղա» (Բ. գիրք. Պրակ. ձգ.) ։

Սոյն այս վկայութիւնը՝ որ կը բերէ Ագաթանգեղամին  
Խորենացի առ բր վարդապետնիս, բնաւ չեմք գտնար  
Ագաթանգեղամինը ընդհանուր պատմութեանը մէջ, այդ  
միայն կը կարդապամք անոր գրիչէն ելած Դաշանց թուղթին  
մէջը : (Տե՛ս Ագաթ. երես 340. տիպ Կոստանդն.) ։

Այս տեղը թէ որ մէկը իւր կարծիքը հաստատելու  
համար քաէ, որ երկու թագաւորք քաղաքական իրաց  
համար գաշնակցութիւն ըրին, իրարու հետ, եւ ոչ թէ  
երկու հայրապետներն ալ իրենց մէջ միրոյ Դաշնաք մը  
դրած որպան, և այն և այն։ Զկարծեմք, սիրեցի ընթեր-  
ցողը, որ այս երկու աստուածազօր և մեծահաստ երա-  
նելի թագաւորներն միայն մարմնաւորները և քաղաքա-  
կանը վայեցացնելու եւ հաստատելու փոյթ ունէին, եւ  
կամ իրենց թագապառութիւնը ընդարձակելու և ապահով

ընելու կը ջանացին, այլ մանուռանալ հոգեւորը առաւել կը ցանկացին հստատել : Վ ասն զի գիտէին ու քաջ սորված էին թէ՝ « Հոգի առաւել է քան զմարմին » : Եկեղեցւոյն Քրիստոսի առաւել փափագողը էին, և Քրիստոնէական հաւասար տարածմանը փոյթ ունէին . և քրիստոնէից ազատութեանը՝ սիրակցութեանը եւ միաբանութեանը ցանկացողը էին . արտաքուստ արքայական ծիրանեօք երեւէին, բայց ի ներքուստ առաքինութեամբը քրիստոսազգեաց էին : Վ ասն որոյ խորհրդակից ունէին այս երկու թագաւորները՝ Կոստանդիանոս և Տրդատ իրենց հոգեւոր առաջնորդները, այսինքն՝ այն երկու Հայրապետները՝ ոուրին Սեղմեստրոս Հոռվմայ, եւ սուրբն Գրիգոր մեր լուսաւորիչը : Ասոնցմով այն Պաշանց թուղթը առաւել հոգեանը ուխտերով կնքեցին քան թէ քաղաքական դաշնադրութեամբ : Ահա ասոր համար այս վերնագիրը ունի այն Պաշանց թուղթը . « Թուղթ սիրոյ եւ միաբանութեան մեծի կայսերն կոստանդիանոսի եւ առաջ պապին Սեղմեստրոսի եւ Տրդատայ բազաւորին եւ սրբոցն Գրիգորի » :

Ուրեմն, ազատամիտ եղբայր, թող խելքերնիա առնէ ճշմարտուասիրութեամբ՝ որ այս գաշնադրութիւնս միայն քաղաքական իրաց վրայով չէ՛ր, այլ հոգեւոր քրիստոնէավայել սիրակցութեամբ, եւ աստուածահամոյ բարեւպաշտութեան եւ քրիստոսական անժխտելի և խոստովանելի հրամանին վրայով էր, որն որ տասնտիկ կը պատուիրէ Քրիստոն սուրբ Աւետարանաւ . « Պատուիրան նոր տամ ձեղ, զի սիրիցէր զմիմեանո . որպէս սիրեցի եռ զծեզ, զի եղութ սիրես ծիր զմիմեանս : Յայսմ գիտասցեն ամենեւ

բեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանա» (Յով. ժգ. 34-35):

Նայէ կարդա՛, ազգասէ՛ր ընթերցաղ, այն Դաշտանց-  
Բղթին պատճառը, եւ հասկնառ՝ որ «Քրիստոնէական»  
տիրոջն առիթովք հաստատուած է, և ոչ ուրիշ պատճառից  
համար, ինչպէս, որ գրուած է. « Կամօք Աստուծոյ եւ  
միջնորդութեամբ առը Աստուածունին և սուրբ Առաջ-  
բելոց և առենայն Արրոց, երկորին Այբայրը և երկու-  
քին Հայրապեակին եւ երկորին ազգքը, Հռովմայեցիք եւ  
Հայր, Ախարան, եւ Ախարտրհուրդ համաշունչ եղբարք  
գրեցաք միմեանց, եւ ոխաւ եւ զաշին հաստատեցաք  
յաւիտենդական, ի միջի մերում առաջի մասուաց վայրտի-  
նշանիս Քրիստոսի, արխական Լատինացիքն եւ անյաղը  
թելի Թօրգոմացիքը: Եւ յաղագու հաւատարմութեան  
հաստատուն եւ անջրելի ուխտիս մերոյ, զահադին Եւ  
զանցին արիւնն Քրիստոսի ի մելան խոտնեւալ գրեցաք  
Քրեքք միմեանց՝ արեամաեան եւ արևելեան ազգքը, որ  
հաւատ եւ սէր եւ միաբանութիւն պայրտիմք միմեանց՝  
որպէս եղբայրացելոցն Քրիստոսի Աստուծոյ՝ ճգնելով  
ի վերաց միմեանց մահու շափ, եւ մեռանելով յօժարու-  
թեամբ ի վերայ միմեանց, սիրելեացն՝ սիրելի, եւ  
թշնամեացն՝ թշնամի լինելով»: (Ագաթ, 334. տիստ-  
կուտ.) :

Ահա այս Ագաթանգեղակն առնելով կը գրէ Յովհան-  
նէս վորդապետ՝ մականուանեալն Վանական՝ իւր  
Հարցմանց ճառին մէջ, եթէ « Չորեքին նոքա (այս է՝  
առը Անդրեանուան Հայրապետն Հռովմայ, եւ սուրբ  
Գրիգոր Հայրապետն մեր, եւ երկու արքայք՝ Կոստան-

դիմանաւեւ Տրդատ) «Քրիստոսի ուրեմնին Խմելան խնուն  
նեալ՝ գրեցան եղբարք » :

Առաջ նման կը պիտի եւ այլ երկու Պատոմի չնմինիս,  
վարդան թագիծրերդացին եւ Ափրակու Գամնձակեցին,  
որք ցիշեազ վանականի աշակերտներն էին : Ասոնցմէ  
առաջինն կը գրէ և Ձոր (այօթնքն՝ զհաւառաւն Կոստոն  
պիանոսի ի Քրիստոս) լուեալ Տրդատոյ եւ սրբոյ Գրի-  
գորի չուգան առ նա Խօթանասուն հազար հեծելուք, եւ  
եղեն գաղճադիրք միմեանց : Եղին երիտ ազգայքն  
և երկու պատղըն Գրիգոր և Անդրեստրոս դաշնութիւն  
կեազ եւ մեռնմելի ի միմեանց մերայ : Զգիր ուժամին  
առան, ի պատճեն թապահմ յահաւոր խորհուրդին (ի Պատմ.) :  
Եւ երկրորդն մւա՛ անոր համաձայն : « Գնալ եզեւ նման  
(այսինքն՝ պրայն Գրիգորի) ընդ մեծի ուղրաքին Տրդատոյ »:  
Ի Հոռվիմ ի տեսաթիւն նշխարաց սրբոց Առաքելոցն  
Պետրոսի եւ Պօղոսի եւ Անծի թագաւորին Առո  
տանդիանասի եւ պրոյ հայրապետին Անդրեստրոսի  
դմել ուխտու եւ դաշինա ի միջի խրեանց » (ի մեղքան  
Պատմ.) : Ըստավոր պատեղի անտեղի այլն :

Հիմա այս միայններուն առաւած հաստատութեանը  
նականը եմէ Միաբթարեանց տպած Ադաթամնդեղոսի  
վերջը, այն Դաշանց թօւղթը վերցնելուն նայելով ըստնք  
թէ շինծու է եւ անտեղի, եւ այլն :

Ախիթարեանք անկամայ կամօք կողմնասրահութիւն  
ընելու երբեմն սղվորեցան, վասն որոյ ճշմարտութիւնը  
կամ լրութեամբ ծածկելու փոյթ ունեցան, եւ կամ  
մթին ու երկպիմի բառերով նսեմացուցին : Ինչպէս  
ունեն, թէ որ այս ստպատանելի խոհեմութիւնը չընկեն :

աղստառաթիւննին, ու հանգստութիւննին, հարկու պիտի՝  
կորսնցնեն, եւ համելի չերենան պիտի Փրոբականտայտ։  
Ժողովոյն առջեն և անոր երեքտատան կարդինալներուն  
ներկրացութեանը։

Աղեկ գիտեն Մխիթարեանք, որ այն Գաշանց թուզ-  
թին մէջը քանի մի պարբերութիւններ կան, որոնք ան-  
հանոյ եղեցած են։ Փրոբականտայի նորանոր դրութիւնն-  
ներուն է առջեն առաջական պատճեն առաջական պատճեն։

Գիտեն եմ՝ որ Լուսիններէն թարգմանուած այն Գաշ-  
անց թուզթին օրինակը՝ որն որ Պիտա չորրորդ պատէն-  
վկայուած ու հաստատուած է, Միջանու։ Ամբողջան  
զգաւուանք մէջ անելրանեցի արգելեալ կը մնար : Սաոր  
համար, ընդուրձակ կը գրէ Հոենալզոր պատմաբանք։  
(Հաստոր ժե)։ Բայց այժմ գիտեն՝ որ նոյնու Խուռականի։  
Թարգմանուած ու հրատարակուած է Եւրոպայի մէջ։ և  
հարկաւ կարդացած են Քարելեթթի հեղինակէն թարգ-  
մանուած։ Պերուաթէցի, եկեղեցական պատմութիւնը,  
որուն մէջ յատուկ ընդուրձակ ծանօթութեամբ կը հաս-  
տատէ Գաշանց թուզթը։ (Հաստ. ա. գիրք է. Համ. 48.)  
Երես 332-335. պարտած Թուքանայի Ֆրենձայ մայրա-  
բազարը յամի Ցեաքն (242)։

Եւս եւ չե՞ն մի դիտեր Մխիթարեանք, թէ այս Գաշ-  
անց թուզթը Հումանցու Վաստիկանու գրատան առաջին  
գրապետ։ Ամբողջիուն Յաւատիննեանք՝ կը վկայէ Փրոբեն-  
տեան ժողովոյն վրայ ըրած խորհրդածրւթեանը մէջ, որ  
ի Հուովմ տպաւած է, ի թուտիկանին 1838 (Երես 369),  
թէ այս Գաշանց թուզթը ձեռուագրի մը մէջ մինչեւ հիմայ-  
կաց Ահա այս թուզթը Մխիթար Գաղղիացի քահանայն

Փարիզ տպած է՝ մեծին կոստանդինոսի գարծոց կարգը, որով կը հաստատէ, թէ այն Դաշնաց թուղթը՝ մեծին կոստանդինոսի օրովը գրուած է :

Գիտեն այս պատուելիները, որ սրբոյն Ներսեսի Շնորհ հավոյն ընդհանրական ու եկեղեցական գրքերնուամ մէջը բնուածին մերժելի ու ժխտելի բան մի չիկայ, բայց բոլորը եթէ հաւատարմութեամբ ապելու ըլլային, հարկան ափառի տպէին « Սահմանք Հաւատոյ » անուանեալ ճառօրէնք գրափած ընպիր եւ ուզգափառ վարդապետութիւնը, եւ անոր Աւոր՝ Եկեղեցայ թւանդութեանցը վրայ այն պղծաւ միտ գրութիւնը . « Վասն որոյ ասոնք մէկ դի ձգելով՝ եւ Շնորհալւոյն ընդհանրական մատենագրութեանը անունը անդամ ծածկելով՝ կողմնակցութեան ու աշառութեան խորհրդով՝ անուանեցին. այն տպուած մատենին անունը՝ « Նահակրանի Ներսեսի Շնորհալոյ, Գրիգորի կարողելոսի և Ներսեսի Լամբրոնացոյն » :

Ասոնք քաղաքը աշառութեան հոգւոյն թելագրութիւնն կը համարաւին, որ թէ պէտք աշխարհի մարդկանց հաճելի կերեւնայ՝ իրեւ գործ խոհեմութեան, բայց առաջի ճշմարտութեան տառենին. Ասութոյ Ամենակալի կը պարտաւորի (Սաղմ. ծր. 7-8 : Գաղ. ա. 1.0 : Եւ Սարգիս շնորհ. ի Մեկն. Յակ. թ. 1—մառ. զ) :

Ահա այս ամեն աշառութիւնը եւ մարդկային մնդոտի երկիւթը՝ մերժելով Զամշեան Հ. Միքայէլը, Դաշնաց թղթոյն ստուգութեանը համար շատ վկայութիւններ յառաջ բերելով կը գրէ, ոչ միայն Հայոց Պատմութեան բազմաշխատ գործին մէջ մատենագրելով (հատ. ա. երես. 642 մինչ ի 644), այլ եւ « Առհան Հաւատոյ ոռջ-

զափառութեան ազգի Հայոց ո անուամբ՝ ուղիղ դիտու զութեամբ շարադրուած գիրքին մէջ այսպէս պրած է՝ Դաշանց թզթին համար « Հայր կամակար մատը ընդունին զայր թուղթ, որոյ եւ մեծ եւ անդրժելի նշանակ այն խոկ է, զի Հայր յառէա զգուշութեամբ պահեալ են դօրինակ առաջար թղթոյ ի մէջ խրեանց քան թէ Հռովմայեցիք, առ որս գոյր եւ օրինակ նորուն յաւուրո Սեղբետրոսի : Լատինք անհոգութեամբ կորուսեալ են զայն, խոկ Հայր ո՛չ միայն չեն կորուսեալ, այլ և զի մի արգեօք կորիցէ երբէք, առեալ ասպազրեալ են զնոյն, եւ ափուեալ են այսր մանդի, եւ ամենայն Հայր որպէս ընդունին զմատեան Ագամթանգեղոսի քարտուղարին մեծին Տրդտայ, ընդ նմին և զայն թուղթ իրըև մատն նորին ընդունին » (գլ. ե) :

Ինչո՞ւ համար անհոգացան եւ չեն կետեւիր մինչեւ ցայսօր այն Հռովմայ կորուսալը գտնել, ո՛չ գահակալքն Հռովմայ, ո՛չ կարդինալքն Փրոբականուայու, եւ ո՛չ ընկերութիւնն Յիսուսեան : Ասոր պատճառը անհոգութիւն չէ, այլ յայտնի նախուանձ : Վասն զի այն Ագամթանգեղոսին զրչէն երած ստուգապատում Դաշանց թզթին մէջի քանի մը պարբերութիւնները՝ արդարեւ յետոյ եկած կարդինալներուն նախանձուիլ տուին, եւ անոնց թելադրութեամբ զրգութեցան վերջին դարերու Հռովմայ գահակալաները նոյն թուղթին կորստեանը վրայ ներքին համեզմամբ ուրախանալու : Ահա այս տեղս քանի մը պարբերութիւններ դնենք : Նախ յայտնի կըլլայ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Հռովմայ գահին մէջ հրամանահան ըլլալը, որուն կը վկայէ կայսրն Առաջ 3.

տանդիանոս յասելն . և Խակի հրամանէ սրբոյ Հուսունորչիս ազատեացին գերեաղք , արձակեսցին կապեալք , զերծցին բանտարկեալք , պատառեսցին մուրհակք պարտապանաց . զատ և իրաւունք եցեն յարքունուստ ամենայն որբոց եւ ացրեաց եւ հայրենազրկաց : Ընդ որս եւ աղօրծութեան հրամանուն Հուսաւորչիս առաքեցար ընդ ամենայն աշխարհ իշխանութեան մերում ի սպանդանոցս եւ յառանին զենլիս , զի մի հեթանոսաբար լիցի խրախութիւնն ։ :

Անդանօր ի Հուսվմ յայտնի եղած սրբոյ Հօրն մերոյ սրանչելի հրաշագործութիւնը՝ ըստ վկայութեան կայսերն Առաւանդիանոսի . և Եցրեւեցաւ եւ յերկրի մերում հրաշք զարմանացի ի Հայրառպետէս Հայոց , ևս և ի Թագաւորէս : Քանզի ի դաշն նոցա առ մեզ եւ յանցանելն ընդ ծովին յունական , առաքեցի ես եւ ժողովեցի զամենայն խեղս , զիազս , զկոյրո , և զմիակողմանիս և զանդամալոյծս , եւ զայլ ամենայն՝ որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս եւ ի տանջանա , եւ զայրախի ժողովեալրս հանի ընդդէմ սրբոյն Գրիգորի , զորս միանգամ թժշկեաց ըզնոսա զամենեսեան սուրբն Գրիգոր աղօթիւք . մինչեւ զարմանալ մեր ամենեցում ի վերայ ամենայնի պոր արարծէր նովաւ , և փառաւորեցաք զբրիստոս զիառաւորիչն սրբոց իւրոց ։ :

Մանաւանդ այն տեղ ակներնեւ ամենեցուն փառաւորեաց Յիսուս Փրիստոս իւր կենպանի վկայ սրբոյն Գրիգորի Հուսաւորչին ճգնաղական վարուց հրաշալի մաքրու փայլ սրբութիւնը եւ երկնահանգոյն շքեղութիւնը : Եցրու որ անմահ պատարագին վրկարար խորհուրդը կը կատա-

րեք, այն տեղ անձնառելի լոյս փառաց ծագեցաւ անողր  
վրայ, ինչպէս վկայեց սուրբն Անդրեասորոս Հայրապետն  
Հռովմայ. « Մինչդեռ կայսք, կըսէ, ի խորանին սուրբ,  
եւ զնուիրական աղօթան մատուցանէաք, ահա յանկար  
ծակի լոյս անձնառելի եւ անքնոտել ի մարդկեզէն բնութե-  
նէա՝ էջ յերկնից ի վերայ սրբոյ սկզբանոյն, եւ աղեղնանը-  
ման օգօք եօթն կրկին կատար կապեցաւ ի վերայ սրբոյն  
Գրիգորի. և արփափայլ փայլմամբ ճառագայթափայլեաց  
լոյս երեսաց նորա որպէս գորէմնն Քրիստոսի ի Թագոր  
ի ակ մեք ամենեքեան ափշէաք և ո՛չ իշխէաք հայել ինա  
մինչեւ կատարեաց զսուրբ պատարագն, եւ ի փոքր մի  
փարասել շամանլաղ ամպոյն առփա իշխեցաք մօտել եւ  
ուալ նմա համբայր ի մէր սրբաթեան ըստ օրինաց քրիս-  
տոնէից : . . . Ապա ասէ կայսրն եւ ես Անդրեասորոս .  
Ո՞վ երանելիդ ի հարս սուրբ Հայրապետ, որ անքուն եւ  
անհանգիստ կալովդ քո՛ նմանիս գուարթնոց երկնից, եւ  
անկերակուք կալովդ գեր ի վերոյ գտանիս ամենայն  
հրեշտակաց : Աքդ աղաչեմբ զբեզ, Անդր անսասանելի  
ումենայն աշխարհի, ուսո՛ մեզ զհաւատոյ մերոյ զդաւա-  
նութիւն, եւ ազօթեա վասն ամենայն աշխարհի, եւս  
առռուել վասն մերոյ թագաւաճրութեան, զի խաղաղու-  
թեամբ եւ հանդարսութեամբ վարեսացուք զկեանս մեր,  
եւս առաւել զսիկեզերական իշխանութիւնս . եւ այս կե-  
նօքս վերին կենացն եւ երկնից արփայսւթեանն արժա-  
նաւորեացուք » :

Ապա այն կորուսոր այլովք հանդերձ չար ու վաս-  
նախանձու հոգին պատճառեց, եւ անով՝ այն Գաշանց  
թուզթը անբայտ ընելու վայթեր եղան . բայց ի՞նչ չահ-

« Զի՞ք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ թիցի, և ոչ գաղտնի՝ որ  
ոչ ծանիցի եւ եկեսցէ ի յայտ » (Ղուկ. ը. 17):

Տեսէ՞ք շար նախանձու դառնադառն պտողը. յիշե՞ց  
ցե՞ք այն բարոյական առածը թէ՝ « Վատատես աշաց է  
նշան՝ նեղիլլուսով փայլման մերձաւորին : Բուոցն ազդ  
չհանդուրժէ պայծառութեան ըստաւորին մեծի՝ յոր վա-  
յելեն արծուիք : Բարիքն ինդակից լինին ընդ բարիս-  
այլոց » . (Տաղ. առած. 38):

Թո՛ղ նախանձու հոգին թելազրէ ու համոզէ հակա-  
ռակասէր կամքերը յերանելեաց ի սրբոց վկայեալ. Ամե-  
նամլալին. Վստօւծոյ առջեւը հաստատուած ու սատղիկ-  
ուխառադրութեամբ կնքաւած անանկ մէկ դաշնադրու-  
թեան թուղթ մը անհետ ընել եւ ի կորուստ մատնել :

Թո՛ղ կողմնակյութեամբ ու աչառութեամբ զարմա-  
նալի լուսթեամբ մը բացայցյու ճշմարտութեան դէմք-  
դրայեն : Բայց դու ո՛վ ճշմարտասէր ընթերցող, առև թէ  
ո՛րովէս մեր բարեացապարտ աղջին՝ անոր յատուկ-  
պատշտանն Տէր Աստուած Ամենակալ՝ այն երանելի  
սրբոց Դաշնադրութիւնը իրրեւ գանձարան սիրոյ եւ  
միուրանութեան անկորուստ պահելու համար՝ կարողա-  
ցուցերէ անընդատ տպել և ընթեռնուկ մուառութեամբ,  
յիշելով մեծ Քահանայապետին մերոյ սրբոց Հօրն Գրի-  
գորի Լուսաւորչի հոգեւոր փառաց եւ ընորհաց առաւե-  
լութիւնը եւ անհամեմատ բարեմատնութիւնները : Ինչ  
պէս որ մեծահաւատ Մահուսի Ճանիկ բարեյիշատակ  
Ամիրայն հոգեսիրական և աղջասիրական փոյթ ունեցաւ  
վերստին ևս տպել տալ յամի Տեառն 1824 ի պատրիարք-  
կութեան կարապետ հոգելոյս Արքադան Ալք եպիսկո-

պոսի նոյն Ագաթանգեղոս մատենանկը՝ Դաշնանց թուղթով մէկ տեղ, որուն հին ձեռագիրը գտնելով Պալատի խմասամազերճ Գէորգ պատուելին՝ ընտրելագոյն գաղափարներու հետ բաղդատած էր; և նոյնը յիշեալ մահուեսի ջանիկ Ամիրային յանձնած մեծիմաստ Գրիգոր պատուելոյն, որ այն աղ ամենայն զգուշութեամբ վերստին քննելով եւ տարագրութեան սրբագրութիւնը ընելով՝ իրա լոյս ընծայած է:

Այս իրաւունք ունին ոմանք հարցանելու, եթէ Յունաց լեզուաւ գրուած Ագաթանգեղոսի մատենադրութիւնը կայ եւ կը գտնուի Յունաց մէջ, ուրեմն ինչո՞ւ համար այս Դաշնանց թուղթը անոր հետ չտեսնուկը ու չգտնուիր: Այս խնդիր արժանաւոր:

Այս տարակրյուը կը լուծէ Եզիչէ սուքը վարդապետնուս մատենագրութիւնը, որ ինչպէս վերը գրեցինք, կը պատուի արքոց Վարդանանց քաջնահամակաց ժամանակը Յունաց կայոր Փոքր Թէոդոսին օգնութիւն խնդրելու համար՝ եկեղեցականօք եւ աշխատհականօք նամակ գրելին՝ յիշեցնելով Արքին վեհապառութեանը յիշատակարան նախնեաց անուամբ այն Դաշնանց թուղթը՝ որտեղետեւ Յունաց կայսերական գրատանը մէջ յիշատակարան նախնեաց անուամբ գրուած ու պահուած էր:

Արտքաւ ուրեմն մեր աղքին այն գրութիւնը, եւ Թէոդոս կայսեր անոր միայով ըրուծ քննութիւնը՝ կայսերական գրատառունեն գրաւած մատենանկերով: Առաջինին համար գրուածէ Վարդանանց կողմանէ խրկուած գրին մէջ. « Ուայէս եւ մեք ունիմք գրանիուստ յիշատակարան առաքինի նախնեաց ձերոց »: Եւ երկրորդ՝ կայսերա-

կամ բնեութեանը համարդգրուած և Եւ (իսկ) ընթերց ցան զգիր պատղատանաց Հայոց աշխարհին և դիմուա կարանան նախնեաց, բազում մասուեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքո գտանէին և (Եղիչէ նոր տիպ Անեատ, գլ. գ. երես 55):

Հիմանկ սովէց կիմանամք՝ որ Յունաց կայսերուկան մաստենագրութեանց մէջ՝ այս Դաշանց թուղթը կը յի շատակուի ու կը գրուի յատուկ յիշատակաբան նախնեաց անունով : Թէ որ Ագաթ անգեղութեատութեանը հնա որոնեն՝ կարող պիտի ըլլան գտներու :

Իսկ թէ որ յիշատակարան նախնեաց անունով ալ չգտնան, անշուշտ պիտի ըսեն, թէ այն մեծ հրկիզութեանը մէջ միւս ընտիր ընտիր մատեաններուն հէտ հրոյ նարակ եղած է . արտն վրայով կը պատմեն այս Յոյն պատմիչները, կեղրենոս միայնակեաց և Զոնարաս թէ կ. Պօլսոյ մեծ դրատունը Յունաց Զենոն կայսեր ժամանակը այրեցաւ յամի Տեառն 476, որուն մէջ այրեցան, կըսեն, հարթաց քառն հազար գրեանք :

Կը պատմեն եւս այս Յոյն պատմիչները՝ Զոնարաս, կեղրենոս, ու կոստանդին Մանասէ, թէ իսաւրացի Լևոն ամբարիչո պատկերատմարտ կայսրը՝ երկուտանն շերմեռանդ կրօնաւորները այրելու համար՝ տուրք Ստիլիա անուն ասմարին մերձ եղած իմաստափրաց բնակութիւնը յանկարծ կամք յանկարծ հրգեհել տուաւ յամի Տեառն 730, եւ անոր մէջ յիշեալ երկուտանն կրօնաւորները զոհ եղան ճշմարտութեան համար, զոհ եղան նմանապէս երեք հարիւր երեք հազար ընտիր մատեանները :

Հիմայ պիտի ըսենք, թէ որ այն Դաշանց թուղթին

օրինուակը յիշատակարան նախնեաց անունով՝ Յունաց մէջ անհետ եղած է, անտարակոյս այրած է միւս այնչափ հազարաւոր մատեաններուն հետ :

Թէ որ փոյթ ունին եւ կը ցանկան վերստին ձեռք բերելու իրենց կորուստը, կարող են թարգմանել տաղ ի Հայկականէն ի Յոյն լեզու :

Ինչպէս կեսարու Պաղեստինացւոց Եւսերիոս եսլիակալունին<sup>4</sup> եկեղեցական սլատմարանին Քրոնիկոնը (Ժամանակագրութիւնը) խոպառ կորսուած էր՝ կում սոյն վերոյիշեալ հրկիզութեանց մէջ, եւ դամ անհոդութեամբ : Բայց մեք ունէինք ի Յունականէն ի Հայ լեզու թարգմանուած մեր սրբազն թարգմանիչներէն, որով թարգմանուեցաւ ի Հայկականէն ի Յոյն լեզու հՅ տարի յառաջ . եւ այսպէս ստացան իրենց բազմուժանակեայ կորուստը :

Ասկից կը հետեւի՝ որ շատ անգստմ անցեալ դարերու մէջ գրա որ յիշատակութիւններուն եւ մատենագիրներուն կորուստը Փափագայ ժամանակիներու մէջ աւերակներէ եւ անծանօթ խորչերէ բարեբաղաբար երեան կեղէ . ինչպէս դարապատութերէն, հնախօսութիւններէն եւ օրագիրներէն կը լոեմք ու կը կարդամք :

Ահա այս օրերս կարդացինք Վենետիկի Միսիթարեանց բազմավէպ օրագրին 16 թիւը 15 Օգոստոս 1850, որուն մէջ նշանակուած է թէ՝ ի Հոռվմ Զեզարինի անժւն Դիքսին պալքատին դիւանի խորչերուն մէջը շատ հնագիր Լատիններէն լեզուաւ գրուած նամակ մը գտնուերէն որն որ Լենտուլս-Պորլիոս Հրէանտանի կուսակալը խրեեր է Տիրերիոս կայսեր՝ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ

սքանչելի եւ զարմանալի տեսութեանը վրայով՝ անոր ծանօթութիւն տալու համար :

Այդ՝ երանի թէ այսպէս բարեբաղդ ժամանակի մը հանդիպէր, որ Լատինական կամ Խոտալական լեզուաւթարգմանուած վերոյիշեալ Դաշանց թղթոյն օրինակ ները՝ ծածկուած խորչերէն յայտնուէին իծանօթութիւն ամենեցո՞ն : Այն ժամանակը՝ այս Դաշանց թղթոյն վրայով սխալ կարծեաց մէջ յամառեալներուն միտքը գուցէ համոզուին. որոց տացէ Տէր հոգի ճշմարտութեան ի փառս պաշտելի անուան իւրոյ :

---

## ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ :

Ապա կնքենք այս տեղ փոքր ի շատէ խորհրդածութիւննիս. Դաշանց թղթոյն ստուգութեանը վրայով ինչու որ որչափ մեր տկաք մնաց դատողութիւնը վերահաս եղած էր, հապատասուեցաւ վաճերական վկայութեամբք սրժանահասատ եւ ճշգրտարան ազդացին մատենագիրներուն :

Ուստի թէ որ մեր բարեմիտ եւ բանասէր հոդեւորականաց եւ աշխարհականաց հաճելի ըլլայ այս փոքր աշխատութիւնս, պատիւն ու յարգը մեր ահծին չի վերաբերիր, այլ յաէտ մեր ճշգրտապատում մատենագիրներուն :

Դարձեալ՝ հարկ է մեզի ճանչնալ Աստուածային  
տեսչութեան մասնաւոր ու մեծ ամեծ շնորհացը այն գոր-  
ծողութիւնը, որն որ բարեպաշտ ազգիս լրութեանը վե-  
րայ մշտնջենաւորած ըլլալով՝ ժամանակ ժամանակ փոյթ-  
ունեցեր են բարենախանձ առաջնորդները, ուսումնա-  
կան պատուելիները և ազգասէր բարեպաշտ իշխանները  
ձեռք բերած եւ ունեցած նախնի սուրբ հարց գրաւոր  
արդիմկները և եկեղեցական պատմութիւնները տպա-  
գրել տալ, զորոնք կը վայելէ սիրելի ազգիս լրութիւնը.  
Եւ փառք գոհութեամբ հանդերձ կը վերընծայէ առ Տէր  
Յիսուս Քրիստոս Փրկիչն մեր, ճանաչելով եւ խոստո-  
վանելով զնոյն ինքն օգնական ու պաշտպան իւր վերայ,  
որով զինքը երանելի կը համարի ըստ մարգարէին Դաւ-  
թի. « Երանի Ազգի՝ որոյ Տէր Աստուած օգնական է  
նմա » (Աաղմ. լր. 10) :

ՄԱՏԹԵՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ :



affectionately, and I hope you will be equally well & happy  
again. I am sending you a copy of my number in the New York  
Review, which you may see in the office of the Reviewer or of the New  
York Standard. It is a full account of my present condition, & you  
will see that I am still in good spirits, & have had no relapses  
since my return from Europe. I have been doing a great deal of  
writing, & have written a good deal more than I have time to do.  
I have got a good many things ready, & I hope they will be  
well received. I am sending you a copy of my number in the  
Review, which you may see in the office of the Reviewer or of the New York  
Standard. It is a full account of my present condition, & you will be  
affectionately yours, & ever your friend, J. M. W.

BOSTON, JULY 27, 1851. —

## ԴԱՇԱՆՑ ԹՂԹՈՑ

ՔՆՉՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԵՐՉՈՒՄ

**ԱՐԱՐ**

Կ. Վ. Շահնազարեանց, միարան Մորոյ կաթոսին և  
Սնդամ խորհրդարանի կ. Ճեմարանին Տեսոց Լազա-  
րեանց որ ի Մուկիայ :



Քաղաքական և կրօնական մրրիկներէ ցանուցիր եղած  
և ընդ մեռեալս համարուած ազգերուն աներևոյթ ողիէ  
մը կենդանաբար փչում մը զգալով, իրարու մօտենալու,  
յօդուելու, նորոգուելու և առջի կենդանութիւննին ստա-  
նալու համար վսեմ ճիգեր թափելու տեսարան է եղեր  
մեր դարը :

Մեր աղգէն ալ հազուագիւտ հասուն անձինք, մէկ  
կողմէն Նախախնամութեան շարժող եւ վարօղ մատը  
նշմարելով Արեւելրի իրեղութեանց մէջ, միւս կողմէն

ժողովուրդը իր Խմբրութենէն արթնցնելու, տգիտութեան խաւարէն ազատելու, վերածնութեան եւ քաղաքակրթութեան ակնկրսութեամբ աչուզնին դէպ ի Սուրբ Հուսաւորչի Աթոռը ուղղած ատենը, ահա Տէր Մասթէոս, Վեհափայլ Կաթողիկոսը, այս տարուան Մոսկայի Ճանաբար անուն օրոպղրի միջոցաւ (եր. 237-244. 253-260) «Հաստատորին առուզութեան դաշանց բղրոյն, զոր Եղուսանտիանու մեջ ինքնակաշն և սուրբն Անդրեատրու հայրապետն Հռոմայ տուած չեն մեր Տրդատ քագաւորին եւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայրապետին » անունով երկու յօդուած կհատարակէ»:

Զգիտելով, բայց ի սակաւուց, թէ այլ ընթերցագաց վրայ այս հրատարակութիւնս ինչ տպաւորսւթիւն ըրեր է, անոնց առջին ինչ արժէք ունեցեր է, փութամք մերինը անկեղծաբար յայտնել. վասն զի այսպիսի յիշատակարանի մը մեր եկեղեցւոյ գլխէն վաւերականութիւն ընծայելը կրկին նշանակութիւն ունի, մանաւանդ մեր օրովը, երրոր ներսի եւ զրսի թշնամիք այլեւայլ լէզէոններու բաժնուած՝ Լուսաւորչի քրտամբ հաստատեալ եկեղեցւոյ անդամները, ոմանք Հռոմայ ցուպին պակապատակարին կրազողեն, այլը Փոտի քղանցից տակ հաւաքել կշանան, ոմանք ալ Կոր աշխարհէն եկած նորսակրօններուն պատուաստել կդիտեն, ամենքն ալ ամբաւ հոգեւոր և մարմնաւոր բարիք երազելով ու մեր ժողովը դեսնը խոստանալով»:

Ինչ և մինի այլոց կարծիքը իրենց ազօթելու կերպին, ասդիէն անդիէն կրօնքի առուտուրով ինչք և պատիւ շորթելուն եւ հոգինին ուղած ճամբարման փրկելուն նկատ-

մամբ, մեք, թէև նուսաստ վարդապետ եկեղեցւոյ Հայոց, որպէս զի Հերոդիադաները նորէն չկաքաւեն ու գլուխ մը խնդրեն, դեռ քննազատութիւնս չսկսած, կյացտնեմք և միանգամ առ յաւիտեան, թէ ըստ մաքմնոյ Հայկայ որդի գոլով, ըստ հաւատոց Լուսաւորչի ծնունդ, մեր եկեղեցին այլոց համեմատութեամբ մաքրագոյն եւ խաղաղասիրագոյն կճանաչեմք եւ քաղոքակրթութեան ու փրկութեան բոլոր պայմանները իր մէջը պարունակօղ։ թէ փառաւոր կտեպեմք Լուսաւորչի, Սահակայ, Ներսիսի և Մեսրոբայ հետ դժոխք երթալ քան թէ Լեռնի, Փոտի և Լիւտերի հետ՝ արքայութիւն։ և իբրև այսպէս, քրիստոնէութեան հիմն եւ հոգին սէր ըլլալով՝ կայրեմբ անկեղծաբար եւ անխտիր ամեն քրիստոնէացներ, տմեն յունադասան, հռոմէական եւ բողոքական Հայեր, որոց ամեն հոգեւոր եւ մարմնաւոր բարիք կրարեմաղթեմք, այլ բնաւ չեմք փափսագիր, որ կրօնական միաբանութեան պատրուակու մեր եկեղեցին որ եւ իցէ եկեղեցւոյ աղախին ըլլայ։

Ըստ որում 1,500 տարուան ազգային պատմութիւնը, որ գրասեզանիս վրայ է, կվկայէ թէ այսպիսի միաբանութիւններէ մեր ազգը ծանրագոյն կորուստներ կրեր է։ եւ այսուհետեւ ալ կրէ պիտի, եթէ նախնեաց ոմանց տկարամուութեան օրինակին հետեւ։ Կրօնական դաւանութիւնս ալ տալ, այս, վասն զի քրիստոնէայ և վարդապետ ըլլալէս յառաջ մարդ պտեղծուեր եմ, մանաւանդ հայ մարդ։ Այդ իբրեւ Հայ կփափագիմ, որ ազգս ոչ միայն ազտոտ լըլլոր, այլ եւ իր հայրենիքին ինքնիշխան տիրէր,

բազմաբանիան հրահամագներով ծաղկեց, աշխարհաշինութեամբ փայտէր, դինուորական և ընտանեկան առաքինութիւններով նախանձելի ըլլար, մարդկութեան օգտակար անդամ եւ իր նախահօրդ արժանաւոր ժառանգ վերջապէս կրտեմաղթեմ որ իր բազմածամեմակեայ ստրկութեան գարշութիւնը ճանաչելով՝ ինքն աղ ցանկար, օր յառաջ մարդկութեամ նախատակին հռուեմատ, աղաստըրէն ապրիլ. վասն զի Աստուած զմարդ ազատ եւ ինքնիշխանա տեղծերէ : Այս է ահա իմ քրիստոնէական եւ քաղաքական սկզբունքը . այսպէս ըլլալու են անշուշտ ամեն հարազատ Հայոց, եթէ կցանկան մեր ազգի վերանորոգութիւնը :

Գամեք մեր ինդրոյն : Տասը տարի յառաջ մեր ու մեծահաւատու Ամիրայի մը մէջ, 1824 թուին, Ագաթանգեղոսի պատմութեան վերջը Պոլիս տպուած Դաշանց թուղթի, եւ ասոր նման շինծու բաներու վրայօք առարկութիւններ եղան, որ օրէ օր զայրանալով բաւական տարածայնութեան տեղի տուին : Մեծապատիւ Ամիրան իր բալոր կեանքը ճարտարապետական արուեստին նուիրած ըլլալով, եւ ըստ օրինակի այլ ճոխերու մեծահանաւատութիւնը իրեն մեալհամկան ստացուած կարծեցով, այլոց անմիտ եւ անտեսանելի հաւատքը իր նիւթական և տեսանելի լարովը, չդիտեմ որմէ, չափելու ազատութիւնը ստացերէր. թէ և մեծահաւատու Ամիրան ճախիսութեան, բրիստոնէ ակսն և քաղաքական պատմութեանց, ազգային և արտաքին մատենադրութեանց, եկեղեցւոյ ընդհանութեանը եւ մասնաւոր վարդապետութեանց, վերջապէս, զբան և նոր շեղսւաց կարեւոր եղած հմտութիւնները այլոց

աշքով կարդացեր՝ այլոց խելքով աղ կպնդէր, թէ այն  
տպած Պաշտին թուղթը, Աւետարանի պէս, վաւերա-  
կանէ և ընդունելի . մեք աղ թէև կընդունէինք Տրդա-  
տոյ, և Կռատամատիանոսի մէջ քաղաքական դաշնագրու-  
թեան մը գոյութիւնը, սակայն կպնդէինք, թէ այն տպածը  
սոսկովի սուտերու վիհ մընէ, թէ անիկայ ծայրէ ի ծայր  
անձունի և անկառատակի հանգամանքներու շղթայ մըն  
է, թէ անոր մէջ այնչափ տող եւ բառ չկան, որ չափ  
վրիպակիներ, և, հետեւարար, թէև ներելի է Ամիրայի  
մը ընարունիլ զայն իրմէն նախնեաց հարազատ գործ, սա-  
կայն պատմագէտ, հնագէտ, բանասէր, լեզուագէտ,  
եկեղեցական աւանդութեանց հմուտ, և որ աւելինէ,  
ողջպամիտ և ձմբարուասէր անձ մը, առանց իր արժանա-  
ւորութիւնը որոնակովս ընելու չկրնութիր և անխարդախ  
և նախնի դարերու յիշածակայդան ընդունիլ զայն ու ի  
պահանջնեղ հարկին, անոր վրայ յենուլ :

Այս առարկութիւնը, ինչպէս իր բնութենէն կհետեւի,  
ոքարգ հնագիտական ինդիր մընէր, որ կաթողիկոսի,  
Աթոռի, Պատրիարքի, նաև ռուղղամի ճարտարապետի  
որոշման, ընդունելու թեան կամ չընդունելութեան հետ  
յարակեցաթիւն չդամէր, անոնց իրաւասութեան շրջա-  
նէն բոլորտին գուրգ ըլլոգիզ, պակայն մեծահաւատ Ա-  
միրան մարդկային տրամաբանութիւնը անբաւական հա-  
մարելած այնպիսի արտօմաբանութեան մը սիրեց հետեւիլ,  
որ իրաւաւերը միշտ զօրքուորին կտույ : Թիւրքաստան,  
այս քանուարամինեան յաւերթական ապատուանարամը,  
արգանգուայի գույքը հանձնէ հետէ որիշ տրամաբանութիւն չէ  
հանցցեր . որ բիրու ոյժը և փայլուն մետաղը ամենայն

Համարուեր են, եւ օրէնքը, իրաւունքը, նաև  
մարդկային արժանաւորութիւնը՝ ոչինչ։ Ըստ այս  
տրամաբանութեան մեզի պէս նուաստ եւ պանդուխատ  
վարդապետի, ճարտարապետի նման ճոխ Ամիրայի, որոց  
ականձները մանկութենէ ի վեր ծառայ եմ բառերու  
սովորած էին, պատմական եւ հագիտական խնդրոց  
վրայով, դիմագրութիւն ընելը թերահաւատութեան  
անլուր յանցանք համարուելու էր, մինչեւ ժողով գու-  
մարել, յիշատակարաններ պատրաստել, պատրիարք,  
քարոզիչ, սեղանաւոր համախմբել, յուսացվածք քրիստոն  
յանցանքս առանց պատասխանս լսելոց, դատապարտել.  
բայց ժողովը, զիա ոք Կոստանդնուպոլախ պատուեցի ու-  
սումնականացը, Ամիրայի ակնկալութեանը ներհակ  
վախճան ունեցաւ։ Արդոյ եւ գիտնական պարզացը  
Մկրտիչ Սոմճեան, Զօրացեան, Աթուն էֆէնատի,  
Գալուստ Կոստանեան եւ այլք անվեհեր համարձակու-  
թեամբ իմ կարծիքու պաշտպանեցին։

Այն ատենէն ի վեր կսուէր երբեմն երթեմն, թէ ճար-  
տարապետեանները, որպատմէ մէկն էր Օրբիագիւղի քա-  
րոզիչ Տէր Մատթէոս արհին, այժմեան Ա Եհավոս  
Կաթողիկոսը, պատմական եւ վարդապետական մա-  
տեաններ կը բրեն Ամիրայի կարծիքը ուժավցնելու  
հսմար։

Այսպիսի առարկայից վրայ ճշմարտուէր հոգավավ խըն-  
դիր յարուցանեցը լուսաւորեալ երկիրներու մէջ ծեռն-  
համներու միայն պահուած է, ուր համեստ բանասէրը  
նախապատի, նախարարի, ծայրագոյն ռազմապետի,  
նաեւ պապի կողէն ծնած կարդինալի հետ ազատքէն

վիճակու իրանունք ունի, որ եւ մեծառեծ ու անպատճելի  
արգիւնք ող ունեցաւ կրանդուտ երեւակացութեանէ  
Շնորի ան հագարումէկ ամօթայի պատրանք երևան հա-  
նելով, տղիսութեան և զիւրահաւանութեան կանգնած  
վիթխարի աշտարակներ կործանելով եւ քննադատու-  
թեան (կրիտիք) ջահով քանրականութիւնը զինելով՝ այն-  
պէս հնոց եւ նորոց գրուածներու մէջ ձեւմել տաղով։ Մեր  
մէջն ալ, եթէ չեմք ուզեր մարմնով իննեւտաններորդ  
դարու մէջ ապրիլ ու խելքով՝ միջին դարու, այսպիսի  
խնդրոց քննութիւնը եւ լուծումը միտյն ձեռնհաս ու  
սումնականներու թողը էր և ոչ թէ անձեռնհաս ճշխե-  
րու կամ բարձրաստիճան անձերու, որ իրենց թիւր կար-  
ծիքը ոսկի հորթին կոթնցունելով՝ ամեն խնդրոյ մէջ  
կենտուին, ամեն բան իրենց հաճոյիցը համեմատ կորոշեն,  
տաղանդը և աշխատասիրութիւնը կարհամարէեն, ազա-  
տութեան ու ճշմարտութեան ոգին կոսրաննեն, բանա-  
սիրութեան ճգտումը ու ճիգը կիսղդեն, քննադատու-  
թեան և յառաջադիմութեան առջև թումբեր կկանգնեն  
ու մեր քաղաքականօրէն թշուտուաղգը հոգւով և մոռք  
ալ կթշուտառացունեն։

Մըրէն տասը տարի մեր վիճարսնութեան վրայէն  
անցեր էին. ճարմարապետեանք գրաւոր բան մը չկրա-  
տարակեցին անոր վրայով, որ մեք ալ գրով պատաս-  
խանէինք։ Այն ինչ վէճը մեք մուցած կհամարէինք,  
ահա Տէր Մատթէոս կաթողիկոսը կնորոգէ, որով եւ  
զմեզ ի արմատասիստնագրութիւն կստիաէ։ Եթէ այս հրա-  
տարակութիւնը իւր Արքապնութիւնը կաթողիկոս ըլլալէն  
յառաջ ընէլ, մեր համբառանութիւնը կանոնաւոր կեր-

Այիս կրթար շարժմանիցիլ և լուծուիլ մէկը զմիւսը համեւ կերպված այժմ, որ ինքը կաթողիկոս է, և մեք՝ վարդապետ, բնեադատութիւնը այլ կերպարան կառնու : Եթէ նորին Սրբազնութիւնը կամի համանգամմայն դպտախաղ և դատաւոր ըլլալ. այսպիսի ապօրինաւորաւթիւն չեմ ընդունիր և ցվերջին բնիոն անոր դէմ դնելու պատրաստ եմ : Առ այժմ ուղղութիւնը մեզ չներեր առանց ակներեւ ապացուցի նորին Վեհափառութեանը այժմիսի դիտաւորութիւն քեծայել, և բոլորել այս Հայ գրագէտա : Խար Սրբազնութիւնը օրադրութեան անպարհգը իջնաղով, ամեն բանապիրի իրաւունք տուերէ իր պաշտպանած փասու բննադատութեան տակ ձգել : Մեր աղ, որ կաթողիկոսի ու վարդապետի մէջ եղած տարակայթթիւնը կճանաչեմք, ներկայ բնեութիւնս ճեպնարկելով, ոչ մեր հմտութիւնը ցոյց տալու, ոչ ալ ողորմելի վիճաբանութեան հաճոյը բնենալու համար յանձն կառնումք, այլ վասնդի վարդապետէ և կաթողիկոսէ վեր մարդկութեան իրաւունքը կճանաչեմք, և ամենէ վեր՝ ճշմարտութեան նուիրական իրաւունքը, որոյ առջև խոնարհելու են և կաթողիկոս եւ վարդապետ եւ ամիրայ եւ հրեշտակ :

Սրբազնագոյն կաթողիկոսը Ա. Էջմիածնի ամենամոխ գրաստունը և Ռուսիական Հայաստանի այլ վանօրէից գրայարկերը իր տեսչութեան բակը ունենալով, եթէ հսգար իիշեալ Դաշնաց թղթոյ, երկոտասաներորդ կամ Շամփուռեամսոց դարէն յառաջ գրած հարազատ օրինակ մը գտնել և հրատարակել, անչուշտ, շնորհակալութեամբ ընդունէինք պիտի իր հնասիրական փոյթը : վասնդի անով մեր պատմութեան կարկածելի կետերէն

Առաջիւմ սաւորեմ . կամ թէ Ագրաթ անդեպես ոչ զատաման  
թե ան հնագոյն օքինակ մը , 7.00 տարի յատաջ գրած .  
եթեւան հաներ հանդերձ Պալքանց թվից պատճենովը .  
առավ աղ դպրուեալ կարեւոր ծառացութիւն ըրած կը պար  
ապրացին պատճեն ենինը . կամ դէթ տարած Պալքանց  
թուղթը բննութեան տակ ձգելով , և , անոր վասերա .  
կանաթեանը ջամագովութիւն գրելէն յառաջ , բայց  
թէ անոր ո՛ր կամքները նախնեաց հարացան գործ կե-  
րեւին , որեւը իշետնաց ներմուծեալ . ասով աղ իր ճա-  
մագուակը հոգւոյն հրապարակամբան պայման թիւն . մը  
առանձ կը լի : Ա յս բաններիս թէ ոչ մէկը ըրած մէկն ի-  
մէկ կամթողիկորսիան կոնդակով մեր գրագիտաց ընդու-  
նելութեանը արածարկեց այնպիսի առասպելայօդ գրուած  
մը , որ բառն ի խռովն վրխակաց ամբարտակ մըն է .  
որոց հայերէն ոճը ծայրէ ի ծայր բորոտէ , որոց պատճեն  
կան հայաստաթիւնները ամեն տողի մէջ կարգուազի աչ-  
քին կը պարնեն , որոց մէջ անվատիք գրուածուած Պարզին  
րէն . թիւրքերէն . թարարերէն . Արարերէն բառերը  
որոնք Ագրաթ անդեպես յարուն համեմատութեամբ  
շատ նոր են և անոր հարազատութեանը դէմ կրոգորեն .  
կարելի է . դիւրու յաճճն առնուլ մեր լուսաւոր գարուն  
մէջ այսպիսի շոշափելի և զգայի պատրանք . հուրաւո՞ր  
է . առանց ծագր ըզալու . նաեւ կամթողիսի մը ըսկէ .  
և Ամէք Ունիթուեանց պատրանքը , եւ կերէք իրեւ  
կը սաւորչի գործ : Եթէ ամեն Հայ կոտանստին կա-  
տակեցին ակսեալ մինչեւ Գերապատին Հասունն , ա-  
մենց միամացն ընդունին զայն իրքե նախնեաց հարացան  
յիշտուակարսն , մեր նուաստութիւնը տակաւին բողոք .

պիտի ամենուն պէս: թէ անիկայ խարդախեազ է, թէն 109 և եղիսկովուսոց, կաթողիկոսաց, ամիրայից, պատվից, կարդինալաց կնքով ալ վաւերացնուած ըլլայ, վասն պիշտ համարիմ: Թովմայի պէս յամբ հաւասար ու երրէք չուրա նալ, քան Պետրոսի պէս պիւրառ հրաւագ և առժկամոցն ուրանալու ու առաջ առաջ առաջ առաջ առաջ:

Հյախ այս հաստատեմք, որ Ադամթանգեղեայ պատ մութեան հնագիր օրինակներէն, այսինքն տակէ 700 տարի յաւարջ գրուածներէն, և ոչ մէկը այս Օրաշանց թողթը կաղաքունակէ և այսպէս է: Պարիսի գրատան օրինակը, որ Հայոց ԶԳ (703) թուին Ռիկմ քաղաքը գրուած է: այսպէսէ նաև Վենետիկի ԶԳ (799) թուին Դերջան գրուածը: այսպէս ալ ըլլալու են Ա. Էջմիածնի, Սայ, Երաւաղէմի և այլ գրատանց հնագիր օրինակները, որոնց մեծ արարթուու կաղապահեն, թէ այս Օրաշանց զիրը մետաղանիերնորդ գարեն յառաջ անձանօթէր Հայոց Երկրորդ Վենետիկի Մխիթարեան Հարքը յանկապէս կմայեն Գաշանց թօւղթի խանգարուած ըլլալուն: այս պէս գրելով 1835 թուին տպած Ադամթանգեղեայ պատմութեան յառաջարանին մէջ, եր. 14, « Յանկայի » էր և ընթերցուած մի հարազատ և անխոսրդախ գրեաւ: « իսկ խանգարելոյն գայենրիկ զրդոյ դաշտեց, ունել ի կն » եւ ի մուեթրական Ա. օրինակիս Փարփղեան, յորուն « յիք գլխավիճ, որպէս և ոչ ի Բ. օրինակն հնագիր գրեաւ: » ի ԶԳ « : Ըսել է որ Մխիթարեան Ռւխան ալ այս Դաշնագրին խանգայաննը նկատմամբ մի եւ նոյն համու զումն ունիր. ինչ որ մեք: Անցնիմք ուրիշ կարևորագոյն գիտելեաց:

Սրբագնուագոյն կաթողիկոսը Ա. Կուսաւորչի Հռոմ  
երթայլը, անոր Ա. Սեղբեստրուախ հետ անժխտելի երդմամբ  
դաշինք դնելի ասլացուցնելու համար քանի մը Հայ և Հայ  
յանդրոն քանի մըն ալ այլազգի և այլակրօն մատենագիւ-  
րերու գիրքու համար եւ գլուխ ի մէջ կրերէ Ճռաքաղի  
240 երեսը : Այլ որպէս զի արգոյ հասարակութիւնը  
աղէկ համոզուի, եւ ամեն բարեմիտ մայր ակներեւ տես-  
նէ, որ Սրբաղնագոյն կաթողիկոսի հարած անժխտելի  
երդմամբ դաշինք դնել խօսրը անոնցիէ եւ ոչ մէկուն մէջ  
կայ, և թէ մեր գլուխիրայ մերժելու առիթը ոչ կամակորու-  
թիւնէ ծամարութեան դէմ, ոչ ողի հակառակութեան,  
կամ ըստ Տէր կաթողիկոսին անտեղի կարծիքական խոր-  
հութեան եւ կողմեակցութեան կիրք : Ասոր համար կատի-  
սիմք նորին Բարձր Սրբազնութեան ցցուցած հեղինակ-  
ներու ոչ բկ երեսահամարը, այլ բուն խօսքը շարել հոս-  
որպէս զի ամեն հայուզէտ կարդայ, խորհրդածէ, տրա-  
մարանէ և եզրուկացունէ :

Ա.հաւասիկ Տէր կաթողիկոսի բնվկայ բերած հեղինակ-  
ներէն առաջինը, որ է Զենոր : Այս մատենագիրը եր. 19:  
կըսէ թէ իր պատմութիւնը Ազգաթանգեղին յառաջ զը-  
րերէ . եր. 44 հարեւանցի ոճով այս չափ միայն կիսոսի,  
և իսկ Եղիսակար նկնալ ի ճանապարհին հանդիալեցաւ  
որրոցն Գրիգորի և Տրդուտայ . և խնդրացեալ յոյժ դար-  
ձաւ պինթ նոյն միւնչև ի Հռոմ քաղաք » . եր. 40 յաւելու  
միայն Տրդատայ համար խօսելով « Ի ժամանական յոյ-  
նոսիկ լուր եհաս ի դուռն արքայի (Տրդատայ) թէ կոս-  
տանտիանու կտյան հաւատաց ի Քրիստոս Աստուած .  
և դադարեցոյց զհակածանան եկեղեցեաց քաջութեամբ  
4.

կայեալ զթագաւորութիւնն ։ Ապա խորհուրդ ի մէջ առեալ գնաս ի գուռն կայսեր վասն գնելոց դաշինք խողոքեան ի միջի ։ Պարձեալ եր. 43. « Եւ ինքեանք յառաջեալ գնացին , բազում աւուրց օթեւանք զանց առնէին , մինչեւ հասին ի Հռոմ քաղաք . և անդ կացեալ տակաւ աւուրց գարծան մեծաշուք պատուավ ։ » ։ Ա եր- ջապէս եր. 49. « Այս ամենացն գործեցաւ ի գալ նոցա ի Հռոմայ ։ » ։ Ա հմւասիկ տեժիանելի երդմամբ հաստատեալ Դաշանց բրոյն կրուանիանուի . և Տրդակայ , Սեղեն արոսի և Լուսաւորչաց մէջ , Արքազնագոյն կաթողիկոսի բերուծ առաջին և ամենահին վիճակ , որոց չորս հաստած ներուն մէջ մեք և այլ ամենայն հայութէաք կոստանդի անոսի և Տրդակայ մէջ գրած իսպանարքեան դաշնքէ դատ ուրիշ յիշաւուկութիւն չեմք կարդար , այսինքն սիմափոփ դաշն , զոր մեր կուապաշտ թագաւորները անկէ 400 տարի յառաջ , ըստ հարկին դրեք էին Հռոմայ Հա- սարակապետութեան և կայսերաց , Պարսից և Վրաց և այլ աղգաց հետ : Բուզմնդարան , եր. 125. :

2. Տէր կաթողիկոսը Զենօրին ետք Խորենացիի Բ. Գիրք , չորրորդ գլուխը յատաջ կրեթէ ի վիկայութիւն ան- ժեխտելի երդմամբ հաստատեալ Դաշանց բրոյն : Այս պատկառելի հեղինակը բանաղով՝ այսպահ ինչ միայն կը կարդամք հոն , օ Ընդ հանգչելն Շապէոյ , արքայի Պար- սից , ի պատերազմացն և ի գնազն Տրդակայ իշում առ սուրբն կրուանիանու ։ Ա ոկէ զատ ուրիշ բան չկայ Խորենացիի երեք զրոց մէջ , այսինքն ոչ 70,000 զօրք Տէրասայ Հռոմ երրալը , ոչ Ա. Լուսաւորչի անձք ուղեկից բրազ , ոչ Սեղենաորոսի անունը , ոչ ալ անոնց մէջ ան-

Ժիառելի կողմանկը գաղն դրսէցը : Պորբարդ և հինգերորդ  
դարաւ մատենագիրներէն Անկէն իմէկ Տէր Կաթողիկոսը  
մետաստաներորդ դարու Սանեվաննաս Ասողիկ պատմա-  
գրին կանչնի , որմէ , ինչպէս և վերոցիշեալ երկուքէն ,  
առաջ , իզուր վկայաթիւն կինուէ յապացոյց անժխտելի  
երդմամբ հաստատեած Դաշնաց բարսէ : Պժապատաւար  
անոր մէջն ալ Խորենացին տարբեր բան մը չեմք կար-  
դար , որ ահա , եր . 51 . « Այլ իշեալն Տրդատայ իշուն  
առ տորբն Կրտսանտիանու նիսթէ չարիս Շապուհ իվե-  
րայ մերոյ աշխարհիս » : Ասկէ զատ այս պատմագրի մէջ  
այլ ակնարկութիւն չկայ ամենեւին , որ ինչ եւ իցէ կեր-  
պիր Արքազնագոյն Կաթողիկոսի բնաբանին ձեռնոտու-  
թայ :

Եղեւի թէ Տէր Կաթողիկոսը Խորենկացիի Գիրք Գո-  
գուսին Եւ բուն իմաստին ներհակ իմաստ կընծայէ , որ  
եթէ գրուածին պէս կարդացուի ու հասկցուի , բորբ-  
ուն մեր համոզումը կայդարացունէ . այսինքն է . քաղա-  
քական դաշնադրութիւն մը Կրտսանտիանուի և Տրդատայ  
մէջ , որոյ պայմանները հաւանականաբար պիտի ըլլային ,  
1. Հայոց Տէրութիւնը տարեկան հարկ մը տար Հոռմա-  
յեցւոյ . 2. անոնք ալ իրենց զօրքովը պաշտպանէին  
Հայաստանը Պարսից դէմ : Ամիկայ յայտնի կերեւի  
որբոյն Վրդանիսի . Լուսաւորշայ որդւոյն առ Կոստանտ-  
ինյար , Մեծ Կոստանտիանոսի որդին , գրած նամակէն ,  
որ է այս . « Յուշ լիցի քեզ պայման հօրեն քոյ Կրտսանտի-  
անոսի , որ առ մերում քագաւորին Տրդատայ (ուր Լուսա-  
ւորչի և Անդրեապոլիսի անուններ չեն յիշաւիր) , և մի տացես  
դաշիւթին քոյ (իման Հայաստան) Պարսից անհապտածից .

այլ օգնեցես մեզ գործք թագաւորեցուցանել զորդի ՏԵՐ-  
դատայ զԽոսրով»։ Կոստանտին կայսեր պատուիսանը այս  
նամակին աւելի կհաստատէ մեր Ենթադրութիւնը, վասն  
զի անոր մէջ ուշադրութեան արժանի հետեւեալ տողերս  
կկարդամք . « Յոդատոս ինքնամկուլ կոյսր Կոստանտոս :  
ՄԵԾԻ ՎՐԴԱՆԻԹԻ Եւայլն .։ Առաքեցի ԶԵՂ զօր յօգնա-  
կանուրիւն և հրաման բագաւորեցուցանել ձեզ զխոսրով :  
զորդի արքային ձերոյ ՏՐԴԱՊԱՅ . որպէս ողի բարեկարգու-  
թիւն հաստատեալ , մեզ ճառայեալիք հաւասարմու-  
րեամք »։ Թա՛ղ արդի ամեն բարեկամ կամ թչնամի, բայց  
ողջամկու և հայագէտ անձնը այս թղթակցութիւնը ուշի  
ուշով կարդաբէն ետեւ , ըսեն անկեղծ սրար թէ Հայոց  
կողմէն ժառայութենէ զատ , ու Հռոմայեցւոց կողմէն զօրու  
օգնուկանուրենէ զատ ուրիշ բան կաջ արդեօք անոր մէջ :  
Խնչո՞ւ ուրեմն Սլրազնագոյն Կաթողիկոսը անոր բուժ  
խմաստին ներհակ իմաստ ընծայելով կյաւելու գրել այս-  
սկս , եր . 240 , թէ « Այս սիրակցութեան եւ ուրախաւ-  
կցութեան մէջը տակաւին մէկզմէկէ անձամբ եւ տեղով  
շի մեկնելով (կարդա չմեկնելով) միարան եւ միասիրտ  
հաստատեցին այս դաշանց թուղթը հոգեռուական և քա-  
ղաքական իրաց և դիսուածոց և գործողութեանց վրայով  
առհմաններ և օրէնքներ դնելով . վասնզի այնտեղ հանդի-  
տայեալ էին գլխաւորապէս երկու բազմարդիւն (առաջ մէկ  
ստորակէտ կալակսի) առաքելոյաջորդ սրբազն եւ գեր-  
ընտիր հայրապետներ , այսինքն սուրբն ԱԵՂԲԵՍՈՐՈՍ  
(մէկ ստորակէտ կալակսի) հայրապետն Հռոմայ եւ սուրբն  
Գրիգոր (մէկ ստորակէտ կալակսի) Հայրապետն մեր .  
(միջուկիտի տեղ ստորակէտ դնելու է) և երկու ստորուան

ծառէր Եւ մեծահաւատ թագաւորք, Այսատանդիսանո՞  
(կարդա՛ Կոպոսնոյիս, ըստ որում՝ Լատիներէն անուն  
է եւ ամեն ազգի մէջ տէր գրուի), Եւ Տրդատիու : Յան,  
կոչի էր տարաբէն որ նորին Անհավառութիւնը համեր  
ցոյց տաղ թէ տւատի՞ (ըստ որում դաշնագրի մէջ այն  
պիսի բաներ չկան) քազեր է հագեռորական իրացվոյցը  
ուստի ասինանենկը ու օրենքները : Դարձեալ ի՞նչ պատ  
ճառաւ Աեղածագորին բազմադիմ և գերանիր ածա  
կաններ կրնծայիէ : Մեք 14 էն աւելի Յայն եւ Լատին ո՞ին  
ու նոր եկեղեցական պատմագիրեր կարդացինք ու եւ ոյ  
մէկուն մէշք այսպիսի վիպոյոն ածականներ կտանք : Աեզ  
բեստրուս, արդամքեւ, պարկեցտ եպիմկապը մըն էր որ  
շատ ծեր Հատնայ եկեղեցւոյ հովիս կորդուելով՝ ամենեւ  
փն նշանագր գործ մը ըրբաւ այսպէտ է նաև Արքուն  
Ֆլետիի, Քրիստոնէութեան պատմագրի վկացութիւնը ու  
զոր ուզողը կրնայ հոն կտրդալ, Հատոր Ա. եք. 43 ու

Արքազան Կաթողիկոսը կշարունակէ ու որոնք յայտնի  
կերեւին ազատամիտ բանսապիրաց առջեւ, եղբ որ սուսաց  
կրից կադրակու ըստան այն դաշնաց բուժքը՝ (բայթի տեղ  
սառակէտ վարելու է մեր ուղղագրութեանը համեմատ),  
որ գրամ է Տրդատ թագաւորի պատենագործին՝ տուսագա-  
պատաւմն. Ագամ անգեղուս : Այս գրքին վերջը կըտես-  
նուի՝ երէ հառատարիմ գրիչէ օրինակուած ըստայ և երէ  
սուսաց կողմեակցութեան տպուած ըստայ :

Ճուաքաղի 237 երեսը կգրէ Արքազան Կաթողիկոսը  
թէ Կոստանդիանոս եւ Աեղքետորոս տուեր ևն այն Օբաւ  
շանց թուզթը Տրդատին ու Լուսաւորչին . արդ եք. 241  
կգրէ թէ Ագամ անգեղուս գրերէ դոյմի : Այս կրկին հա-

կասութիւններէն որպէս հաւատամիք որպէս զի սխալ  
կարծիք չունենամք , ծուռ մեկնութիւններ չտամք , մե-  
ծահաւատ ըլլամք : Կամ թէ Ճանիկ ամիրայի տպել տու-  
ած դաշանց գիրը հաւատարիմ գրիչէ օրինակուածէ թէ  
չէ կամ առանց կողմնակլցութեան տպուած է թէ չէ ,  
ի՞նչպէս կարեմք այս ընտրութիւնը ընել . որու դիմեմք ,  
որու հարցնեմք անոր հաւատարիմ օրինակը ստանալու  
համար . մի՞թէ Արբազան կաթողիկոսը իրեն էական  
տուային և վերջին պարոք չսեպեր բուրքախու , բարարա  
դողանց , արաբամարտնաց , գտղինքարբան , միով բանին  
այս բարելական բանդապուշանքին ջատակովութիւն գը-  
րելէն յառաջ , անոր անխարդակի եւ հայերէն օդինակը  
տեղ մը գտնելու հրատարակել , որպէս զի ամեն ողջա-  
միտ բանասէր անոր հարազատութեանը մրայ վստահե-  
լով՝ ընդունէր անկասկած իբրեւ նախնեաց արժանահայ-  
ւատ յիշատակարան . մի՞թէ Արբազան կաթողիկոսը  
չգիտէր , որ , եթէ Կոստանտինոս մերայեռց Գնու այս  
պիսի դաշինք դնելու ըցըար , առենոպղպիր ալ ունէր  
նօտար ալ , քարտուղար ալ , ու Ագաթանգեղոսին պէտք  
չունէր . մի՞թէ Արբազան կաթողիկոսը չգիտէր , որ  
Հռոմայեցւոց դիւանագրութեան ոճը ծայրագոյն կամաց-  
րելութեան հասեր էր Յգոտոսոփի եւ անոր յաջորդաց  
օրույր . եւ այս ոճի գլխաւոր յատկութիւններն էին ճշ-  
տուիին , պարզութիւն , համառօտորիւն , ինչպէս անոնց  
այլ տէրութեանց հետ դրած դաշինքէն կտեսնուի . ընդ  
հակնուակն , իրմէ ջատագովիեալք , անաչառաքար խօսե-  
լով , ոչ զինադրութիւն է , ոչ քաղաքական դաշն , ոչ  
խաղաղութեան ուխտ , ոչ առեւտրոյ արոյժմտագիր : ոչ

մարգարէութիւն, ոչ պատմութիւն, ոչ աշխարհագրութիւն, ոչ վկայաբանութիւն, ոչ գուշակութիւն, ոչ յայտնութիւն, ոչ պարզեւագիր, այլ անճոռնի անդունդ մը, որու մէջ ամենայն բանի կտորներ կան եւ ամենեւին, ամբողջ բան մը չկայ, որու ամեն անուն կպատշաճի, բայց և ոչ մի անուն սեպհական :

Այս կարծեցեալ Դաշնադիրը կսկսի նախ յոգնակիթուով յանուն Ամենասուրբ Երրորդութեան, իբր կուակ կայսերական . քիչ մը վարը Եւաբիոս պապը Սեղբենստրոս կըլլայ (որ յայտնի վրիապակ է) . ապա Տրդատայ եւ Լուսառօքչի Հռոմ երթալու պատմութիւնը կընէ . անկէ ետքը անոնց ուխտագնացութիւնները, Խրախճանքը եւ կոչունքը, ասկէ կցաթկէ յանցաւրաց ազատութիւն տալուն, ապա Խաչափայտի յիշատակութիւնը կընէ (որ դեռ չէր գտնուեր), Քրիստոսի արինը մելանի տեղ կը վարէ, և հեթանուզութեան օրէնքը կհաստատէ, այսինքն զսիրելին սիրել եւ զատելին ատել . Կոյեան տապանի շնութեան պատմութիւնը կընէ, Սագաստան եւ Դեւմաստան Հռոմայեցոց երկիր կդարձունէ, (որոց երբէք Հռոմայեցիք չտիրեցին), Տրդատ բոլոր Ասիոյ և տիեզերաց թագաւոր կկարգէ (ասոր նշանախեցն անգամ պատմութեան մէջ չկայ), Դարբանդ Հռոմայեցւոց տակը կդնէ (որ Սրաբայ օրովք այս անունը առաւ, այսինքն կոստանտիանոսէն 350 տարի ետքը), Տրդատայ որդի Խոսրովը օտար ծիսով մը կոստանտիանոսի որդւով կը պահպուի, Բեթհեղէմ քաղաքը և Կապավուլիս Տրդատայ կտայ . հոս յոգնակին եղակիի փոխուելով, տեսիլը եւ յայոնութիւններ կպատմէ (թերևս Կոառանտիանոս

յանկարծ մարդարի ուկան հոգի առնելով), Արշակունեաց անկումը, Հայոց զերութիւնը կդուշակէ, անոնց փրկութիւն կխօստանայ իր ժառանգներէն (որոնք հակառակը ըրին), Լուսաւորչի Հռոմ գործած հրաշքը կը պատմէ ախտացելոց վերայ. Կապիտուխոնի մէջ վիշապ մը կսպաննէ Սեղբեստրոս, հատ մըն ալ Տրդատ կսպաննէ միեղջերուի մի հետ (որ այն ատենը Հռոմ տեսնուած չէ), զոր եւ Կոստանտիանոսին իրրեւ թիւնահալած թիւրակէս կլնծայէ, Կոստանտիանոս ալ Տրդատայ կապարգեւէ Երուարադէմէն Հեղինէի ձեռամբ բերուած խաչափայտը (որ 10 տարի ետքը գանուեցաւ). ապա Լուսաւորչի չարչարանաց պատմութիւնը կսկսի, Տրդատայ սիրահարութիւնը կարառմէ. Կոստանտիանոսի քեռ դատեր հետ, անոր խող դաւնալը, բժշկուիլը, հաւատողը, Հայոստանի մեջենից քակտումը, դեւերու Կապիցից ծովի հարաւակողմը Հայաստանէն փախչիլը (երանի թէ իր խելքի ցնդեմ ալ հոս լիշէր), Վրաց հաւատողը, Տրդատայ ձօպանածիգ մենամարտութիւնը (որ Հռոմէն դառնալէն յետոյ եղաւ), Կոստանտիանոսի Պահուք գետի ճախ կողմը ըրած կոխւը եւ հոն լուսեղէն խաչ տեսնելը (այս երեւումը Տիբեր գետի վրան եւ Հռոմայ մօտերը եղաւ), Կոստանտիանոսի զքրիստոնեաց հալածելը, անոր բորտիլը, Սեղբեստրոսէն լուսաւորուիլը (որք ամենայայտնի սուստ են, ըստ որում Կոստանտիսանոս Եւսեբիոս եպիսկոպոսէն մկրտուեցաւ Նիկոմիդիա իր մեռնելու ատենը), զինագինը կյիշառակէ (այսինքն խարած. այս տուրքը այն ասենը դեռ չկար, ու Մահմետեանց գիւտ է, 400 տարի ետքը), Լուսաւորիչը, արգէն պատրիարք ըլլալով,

**Նորէն Սեղբեստրոսէն** պատրիարք կձեռնադրուի (որոյ նմանը դեռ քրիստոնէութեան մէջ տեսնուած չէ), կըսէ որ անոր յաջորդները իրենց եպիսկոպոսներէն ձեռնադրուին (ասոր հակառակ Հայոց կաթողիկոսները անկէ ետեւ երկար ատեն Կեսարիա գնացին ձեռնադրութիւն առնելու համար, ինչպէս ամեն Հայ գիտէ), Լուսաւորիչը Սեղբեստրոսի զիասփիշան կկարգուի եւ հրամանաւոտ Երուսաղէմայ, Անտիոքայ եւ Աղէքսանդրիոյ պատրիարքաց (այս ալ հակառակ պատմութեան եկեղեցւոյ). Լուսաւորչին անտեղի տղայական գովութիւններ կտայ, կոստանտիանոսին սերոքէք կծառայեն. Սեղբեստրոս Լուսաւորչին կտայ Քրիստոսի փափեղը եւ Պօղոս Պետրոս առաքելոց եթիու ձեռութերը (թէեւ երկուքն ալ Հռոմ կմնան), պարզեւներ կուղարկէ Վարագայ վանքին, (որ դեռ շինուած չէր). Ա. Յակոբայ վանքը Հայոց կտայ, (որ Խաչակիրներու ատենը Հայոց անցաւ). Սեղբեստրոս Լուսաւորչին կապելոյ և արձակելոյ կարողութիւն կտայ, (զոր 20 տարի յառաջ ստացեր էր ի Կեսարիա Ա. Ղևոնդէն) ևայն, ևայն, և այն :

Ահա այս Դաշանց թղթի բովանդակութիւնը, որոյ ժամանեց են ծայրէ ի ծայր աղճատաբանութիւն. ահա այս ցուցանքաւոր Դաշանց թղթի ծուծը, որւ ինչպէս իր խառնափնթոր ոճէն, իր նիւթոց խառն իխուռն հոծութենէն կերեւի, աւելի դեղին տենդով բախած ուղեղի ցնորք է, քան թէ ճարտար խարեթայի գիտ. որ, որչափ թանձրամիսւ և ռամիկ անձերու ղարմանք կապատճառէ, այնչափ ալ և աւելի՝ կիրթ ճաշակաց և վարժմտաց զգուանք : Գո՞նէ եթէ Բաղդասարի Խաչիֆայից

Հազար և մէկ գիշերի զուարճութիւնը և բարոյականը ընծայէր անիկայ, տակաւին, իրրև վէպ, մարդ, անգործ ատենը, կարէր կարդալ: Այսուհետեւ փոյթ չէ, թէ վեհակայլ կաթողիկոսներ այսպիսի դանդաշմունք իրենց ծիրանեօքը կծածկեն . բարեբախտաբար ճաշակը և ընտրութիւնը ուրիշ հեղինակութիւն չեն ճանաչեր, բայց եթէ գեղեցիկ, բարւոյ և ճշմարտափ:

Սրբազան կաթողիկոսը վերսպիշեալ երեք պատմիչներէն զատ չորրորդ մըն ալ ի. մէջ կրերէ անժխտելի Պաշանց թուղթը հաստատելոյ համար. այս վկասէ Եղիշէն:

1842 թուին Ա ենետիկ տարած Եղիշէյի պատմութեան մէջ շշափելի վրիպակներ և խանգարնեանք պակաս չեն: Անոր պատմական ընթացքի մէջ սրբալիստ մաստերով խանգարմունք ընելու վկան ալ կոստանտնուպոլիս տպած Թուվմայ Արծրունին է. ուզողը կրնայ հոն կարդալ. եր. 39: Բայց և այնպէս զիցուք վայրկեան մը թէ Եղիշէյի գրուածը այնպէս անապական տողուեր է որպէս հեղինակի գրիչէն յղացեր և ծներ է. այլ կայ մի անոր մէջ ուղղակի կամ անուղղամի ակնարկութիւն մը « Առաստիւնուսի, Սեղթեառորոսի, Տրդառոյ և Հռաստրյի մէջ անժխտելի երդմամբ հաստատած Դաշնաց բուդրին »: Եթէ կան այնպիսի հոգեւտեսք, որոնք սրբոց Վարդանանց առ Թէոդոս կայսր գրած նամակին խորհրդական մեկնութիւն տալու շնորհը ունին, կամ անոր յայտնի իմաստին տակ գաղտնի իմաստու երեւակայելու ձիրքը ունին, մեր բազմամեղ նուաստութիւնը այդպիսի. ձիրքէ զուրկ է: Խօսիմք յայտնապէս. միթէ այս հայերէն նամակը եթէ հայերէն կարդացուի, տակաւին մեր համոզումը չպիտի

արդարացունէ, այսինքն ինչ որ ըստիք արրոյն Ալրդանիսի առ Կոստանուա գրած նամակին համար :

Նախ հարևանցի ըսեմք, որ յիշատակարուն բառը ոչ Հայոց, ոչ Յունաց, ոչ Հռոմայեցոց մէջ Դաշտանց բուղը կամ Ռիտա հաւատապարեան չէ նշտակեր երթէք և չի ալ կրնար նշանակել, ինչպէս Տէր Կաթողիկոսը կպեղէ : Ովոր կամի այս բառի միշտ իմաստները իմանալ, թուղ կարգա Վենետիկ, 1837թուին տպած Հայկազեան Բառարանի Բ. հատ. 359 երեսը : Ըստմք երկրորդ՝ որ սրբոց Ալարդանանց առ Թէոդոս գրած նումակին մէջ Երանուն տիանասի, Լուսառյի, Սեղմասոցուի անունները չկան ամեննեին : Ըստմք երրորդ՝ որ այն նումակին մէջ գրած է թէ Տրդատ Հռոմաց եպիսկոպոսացեան Քրիստուի հաւատոքը բնիդունեց (Եղիշ. եր. 123), որ արշինամեւատու տիսխմորաբու է, ապա թէ ոչ՝ Ագաթանգեղոսէն սկսեալ մինչև Հ. Մկրտչէ Գամչեանը, Կոմենն ալ տուտ հաննելու է, որոնք միաբան կրտսեան թէ Ա. Լուսաւորիչ զՃրդաս հաւատոքի թերաւ, միջրտեց և հաղորդեց . այս ալ յայտնի է, որ քրիստոնեայ ըլլալու համար ատմանէ առելի պայմանները շեն արական ջուիր Քրիստոսի եկեղեց ցաց մէջ : Ինչո՞ւ ուրեմն Արքազնագոյն Կաթողիկոսը այս առենամատ անր վրիտակը յտեսնելու կզարնէ և կճգնի մեր անհամեմատ : Լուսաւորիչը Սեղմեստրոսի ոտքը տանող անկէ Կաթողիկոսութեան կրկին ձեռնադրութիւն առնել առուող դաշնագիր մը հասարաւնել, որ մեր նախնեաց բոցը անձանօթ էր :

Ըստմք չորրորդ՝ որ սրբոյ Վարդանանց առ Թէոդոս ուղարձ նամակը այն պայմանագիրերը կակնարկէ, զորա

մեր թագասորները Տրդատէն յառաջ դրեր էին Հռու-  
մայի հասարակապետութեան և կայսերաց հետ, աղայ-  
մանազիրեր, որ մեր երկիրը Հռոմայեցւոց պաշտպանու-  
թեան տակ կղնէին, անոնց հարկ տալ յանձն կբառնուին,  
անոնց զօղքը մեր երկրի մէջ կպահէին, որոյ անջրելի  
ապացոյցերն են Խորենացի Գիրք Գ. Ժ. Ժ.Ա. Գլակ  
Զենորայ. 40 և 41 երեսները : Ըսեմք վերջապէս, թէ  
սրբոց Վարդանանց նամակը « Յովաէփ եպիսկոպոս առ  
մեծանունդ Թէոդոս կայսր . . . որ խաղաղաբէր մարդա-  
սիրութեամբ ձերով տիրէք ծովառ և ցամաքի . և չիք ոք  
յերկրաւորացս, որ ձերում անարդել տէրութեանդ ընդ  
դէմ դաւենայցէ : Որպէս մեք խակ ունիմք զանառու յիշա-  
տակարանն (պատմագիր, արծանագիր, այլ ոչ բնաւ  
Դաշտանց բուղը) զառաքինի նախնենացն ձերոց (և ոչ նախ-  
նեցն ձերոյ, այսինքն, Կոստանտինոսի), ունեղալ  
զերոպէ անցիթեւ տիրեցին և Ասիացւոց կողմանցն ի տահ-  
մանացն Սերաց մինչև ի կողման Գաղերուի . և ոչ ոք  
գտաւ ստամբակեալ և ելանել ընդ ձեռն նոցա . և յայն-  
չափ մեծ իշխանութեան՝ դատավակերտ մեծ և սիրելի  
զՀայոց աշխագին անուանէին (դաստակերտ բառին մեկ-  
նութիւնը մէկը չկարաց տալ մինչև հիմայ, ըստ մեր գի-  
տելոյ դաստակերտ այն աշխարհը կնշանակէ, որ թէւ  
Հռոմայեցւոց դաշնակից և հարկառու՝ այլ Հռոմայ Ծե-  
րակուտի իրաւաբանութեանը տակ չէր, կայսեր կամքէն  
միայն կախուած ըլլալով ) : վասնորոյ և նախնին մեր Տրդ-  
դատիոս յիշելով զառաջին սէրն Զեր, որ ի տղայութեան  
փախուցեալ ի հայրասպան մարդախողիսող հօրեղբարցն  
խրոց՝ ապրեալ սնաւ յերկրիդ Յունաց . և ի ձենջ բացա-

արեալ տիրէր հայրենի աշխարհիս » և Սուրբ Եղիշէյի յա-  
մբցուցածը « Եւ իրրե յանդիման եղեն մեծի թագաւո-  
րին, և ընթերցան զթուղթ պաղատանաց Հայոց աշ-  
խարհին և զյիշատակարանն նախնեաց, բազում մատեանք  
ի մէջ եկեալ ընթերցան, որ զնո՞ն ոխտ հատատոքեան  
ի ներքս գտանէին » Տէր Մատթէոսին հակառակ են :

Ողջամիտ և պատմագէտ անձեր ո գառաքինի նախ-  
նեացն ձերոց, ուեելով զԵւրոպէ տնօյին և տիրեցին և Ասի-  
ացոց կողմանցն » խօսքը կարդալով երբէք մեծն կոս-  
տանտիանոս հասկնալու չեն հարկաւ . որովհետև անիկայ  
Ասիոյ մէջ թիգ մը գետին յառաւ . ոչ ալ առաքինի նախնեաց  
բառերովը՝ Թէոդոս կայսէր նախահարքը հասկնալու են :  
Մեծին կոստանտիանոսի ցեղը Յուլիանոս ուրացողի  
մահոքքմբ վերջացաւ 363 թուին և յունիսի 26 ին . Թէո-  
դոս ալ անոր հետ ազգականութիւն կամ խնամութիւն  
անդամ չունէր առենէին՝ գոլով ինքը Կիլիկեցի Թէոդոս  
զօրապետի թուը : Կոստանտիանոսէն յառաջ Հռոմայե-  
ցոց սահմանը Ասիոյ մէջ ինչ որ էր նէ՝ անոր օրովն ալ  
նոյնը մնաց, ոչ պակաեցաւ, ոչ աւելցաւ :

Եւրոպայէն Ասիա անցնող, և Հռոմայեցոց ասհման-  
եերը Մերացմէ մինչեւ Գաղերոնի կողմերը ընդարձակող  
և Հայաստանի տիրող եղան Վրիստոսէ իրը 67 տարի  
յառաջ Լուկուլլոս, Պոմպէոս, Բենդիդիոս, Անտո-  
նինոս, Կորրուլոն զօրավարները, որոնք սակաւ առ-  
տակաւ ոչ միայն Եփրատայ աջ կողմը եղած Հայոց գա-  
ւառները շորթեցին, այլ և Արգարի օրովն ալ մեծ Հայոց  
վերայ տուրք դրին, Երվանդ Բ. օրովն ալ Միջագետքը  
ինցեցին : Տրայանոս նորէն վտարանջեալ Հայաստանը

նուաճեց : Անկէ ետքը մինչև Տրդատայ հօր Խոսքովի օդը  
մեր երկիրը երբեմն ազատ մնաց Հռոմայեցոց լուծէն,  
երբեմն նուաճեալ . ամեն պատերազմէ ետեւ, ինչպէս  
ընդհանրական սովորութիւն է, դաշինք դրաւեցան մերոց  
ու Հռոմայեցոց մէջ, ու այնպէս խալքաղական յարա-  
բերութիւնները սկսան :

Տրդատ, իր հօրը մահուանէն ետքը, երբար 261 թուին  
Յունաստան փախաւ, Վիկիանու կամսին, Կարու և  
Դիտկղետիանոս կայսերաց դիմեց և ոչ թէ կուսանտի-  
անոսին, որ դեռ ծնաժ չէր (նա ծնաւ 272 կամ 274 թուին) .  
Տրդատ Դիտկղետիանուէն, 286 բուին Հայուսուի բագաւոր  
կարգուեցաւ և ոչ թէ կուսանտիանուէն, որ 306 ին կրապը  
եղաւ : Տարակուառողը կրնայ կարդալ Խորենացի Գիւլք  
Բ. 76, 77, 79 և 82 Գլուխները : Տրդատ ոչ թէ կու-  
տանտիանու կայսեր սէրը զիշերով Յունաստան միախաւ,  
այլ անկէ յառաջ եղած կայսրեցուն, որոնք երբեմն Հա-  
յաստանի օգներ էին Պանթիսից դէմ . ուստի քննօվան  
տրամաբանութեամբ հետևունելու եմք, որ զիշատակա-  
րանք նախնեաց, բազում մատկանք բառերը կուտանտի-  
անոսի ամեննեին չեն վերաբերիր, այլ անկէ յառաջ եղող  
Դիտկղետիանոս, Պրորոս, Տակիբորս, Տրայանոս և այլ  
կայսերաց և գորավարաց կվերաբերին, ըստ որւամ անոնք  
էին, որք զՏրդատ թագաւոր դրին, զՀայաստան ազա-  
տեցին և դաշինք դրին Տրդատայ և այլ թագաւորաց  
հետ : Որովհետու միշեալ նամնակը կուտանտիանուէն  
յառաջ եղող Հռոմայ գորավետները և կայսրերը կակ-  
նարկէ, անոր համար անհիմն է բալըրովին . Վեհափառի  
չորրորդ փասոր :

Հոս տեղ կարեռը համարիմ միշել Արբանզան Կաթուղիկոսի մոռցած միւս ևս պատմագիր, որ Արշակունեաց օրովք մեր երկիրը կեցեր է ու այս դաշինքի քաղաքական ըլլալուն կվիայէ : Այս պատմիչս է Փոստոս Բուզանդ :

Յորիանոս կայսրը կնամարգութեամբ Պարսից հետ խաղաղութիւն կընէ 363 թուին, Հայաստանի կինդ հարաւային գաւառները անոնց կտայ և Հայոց թագաւորէն ձեռնթոփ կլինի. Ամիեն Մարկեղյին. ԺԵ. 9. Եւտրոպ. Ժ. 17. որով և առջի աճզանիր Առատանտիանոսի և Տրդատայ դրամ դաշանց ուխոր կպատռէ : Պարսիկները Յունաց աղ ևս Հայոց օգնելու կասկածը չունելով՝ Հայաստան կարշառեն, կապականեն, կքանդեն, շատ գերի և աւար առած, ընդ որս և Տիրան արքայն, Պարսկաստան կը դառնամ : Հայերը Յունաց վանութիւնը և իրեւայ խեղածութիւնը տեսնելով՝ և Պարսից կրակապաշտութենէն ու կառաղութենէն սոսկալով՝ վերստին Յունաց թագաւորին կգիմեն յանձն առնելով և Զի ծառայեացն նեան հեազանդութեամբ, և լինիցի նու նոցա թիկունք օգնականութեամբ յինդրել վրէժս իրշնամեաց նոցա . . . զոր իրրելուան կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ միութով և բազում պատրաստութեամբ ի խնդիր ելանէր իրին հասելոյ . և օգնական և թիկունք լինելը աշխարհին Հայոց : Մանաւանդ զի զոյլատն լիշեալ զոյլատնցն կուելոյ զերշմանցն հաստատութեամբ ի մէջ կացներն Առատանտիանոսի և ի մէջ բագաւորին Տրդատայ նզեալ էր : Փոստոս Բուզանդ. Երես 54-55 :

Սուլր Լուսաւորչի և Տրդատայ ժամանակակից կամ մերձաւոր ազգային վաւերական աղրիւրները անաշառաւ-

բար քննելով և անոնց մէջ անժխտելի երդմամբ կոստան-  
տիանոսի և Սեղբեառոսի, Տրդատայ և Լուսաւորչի մէջ  
հոգևորական իրաց համար դաշինք դնելոյ և ոչ ամենափոքր  
ապացոյց մը գտնելով, անցնիմք արգ միջին դարու մա-  
տենագիրներուն, որոց մէջ Կյիշէ Արքազան Կաթողի-  
կուր Յովհաննէս պատմաբանը և Ներսէս Շնորհալին  
իրու վկայը :

Նախ այս ըսեմք, որ հայրապետ մը աստուածաբանից  
ժողովի մէջ իր առաքելական աթոռը բաղմեալ՝ մէկ ձեռը  
Ա.Գիրքը, միւս ձեռը՝ Եկեղեցւոյ ոռորք հարց վարդապե-  
տութիւնը ունելով՝ Եթէ հաւատոյ և կրօնի վերաբերեալ  
պարզ խնդրոց վրայ, իր աթոռակացաց համահաճութեամբ  
որոշում մը հրատարակէր, անոր հօտը պարտաւոր է զա-  
նիկայ ակնածութեամբ ընդունիլ, միայն թէ այն որոշումը  
Ա. Վրոց և եկեղեցւոյ փարդապետոքեանց վրայ հիմնուած  
ըլլայ : Բայց երբոր Հայրապետ մը, թէև մեծահամբաւ  
և գիտնական, կրօնական խնդիրները մէկդի դնելով՝  
գրականութեան, արաաքին գիտութեանց և արուեստից  
ասլարէզը իջնայ, այնուհետև անիկայ Ֆիզիկայ վար-  
ժապետէն, իբրև գրագէտ, մազի մը չափ տարբերութիւն  
չունի . այնուհետև ամեն բանասէր կատարեալ արտօ-  
նութիւն ունի անոր գրածը քննելու, դատելու, և գտած  
վրիպակները դատապարտելու յանուն ճշմարտութեան,  
յանուն բանականութեան, զորս ամեն բանաւոր էակի,  
Եկեղեցականի և աշխարհականի, անխստիր բաշխեր է  
բնութեան Հեղինակը : Այսպէս է եղեր հին և նոր իմաս-  
տասիրաց դատումը, այսպէս ալ ըլլալու էր հարկաւ :

Ըստծս օրինակաւ բացատրեմք . մեր կաթողիկոսաց

**Աշխանէս Յովհաննէս** Պատասխոնակերտցին գրեթէ երեք  
հաղար տարուան Հայոց պատմութիւնը գրերէ . սակայն  
ինքը 70 , առ առաւելն՝ 100 տարի ապրերէ : Նա իր  
ժամանակի իրողութեանցը կրնար անձամբ հասու ըլլալ ,  
ստուգել և իր ըմբռնմանը համեմատ արձանագրել . բայց  
այս կերպիւ 50 կամ 100 տարուայ միջոցի իրերը հազիւ  
կարէր ստուգել , անդին 2,900 տարուան եղելութիւնքը  
քննելու ձեռնհասութիւն չունենալով , ըստ որում , դեռ  
ինքը աշխարհ չեկած , անոնք պատահեր էին : այնուհետեւ  
կարտաւորէր իրմէ յառաջ երկաց մատենագիրներուն  
դիմել , անոնցմէ քաղել իր պատմելիքը , օրինակի աղա-  
գաւ , Խորենացիէն . սակայն այս ալ , անոր պէս , 100  
կամ 120 տարի ապրերէ և իր ատենի իրողութիւնքը  
կրցեր է ճշդել , իրմէ յառաջ անցածներու ստուգու-  
թիւնն ալ Մարիբասին , այլ քուրմերու և Հեթանոս  
մատենագէտներու վկայութեանը հաւատալով ընդու-  
ներ է . այսպէս իրարմէ փոխ առնելով՝ կերթան , կհասնին  
մեր ու ամեն ազգաց պատմիչները մինչեւ անդիր աւան-  
դութիւնը , կամ , դիւցաղուններու շրջանը :

**Արդ** , օրինակի համար , ենթադրեմք թէ Կրեսոսի  
Լիւդացւոյ , կամ Աժդահակ Մարի սպաննողը Տիգրանը  
չէր , այլ ոք էր . սակայն այս բանս Մարիբաս Նինուէի  
մատենին կամ՝ ուրիշի հաւատալով ընդուներ է , իբրև  
Ճմարիտ , զոր Խորենացին ալ Մարիբասին հետևելով  
ընդուներ է . որոց հետևեր են Կաղանկայտուացին , Ուկ-  
տանէսը , Յովհաննէս Կաթողիկոսը , Ասողիկը , Վար-  
դանը և այլք՝ իրարու հաւատալով : Համարիմք թէ մեր  
օրովը Աժդահակայ կամ Կրեսոսի օրովը գրուած հարա-

զատ պատմութիւն մը Երեան Եղէր ու անոնց մակը այլ  
օրինակ պատմէր, միթէ ասով մեր պատմիչները նեն-  
գաւոր համարուելու էին, ոչ բնաւ, անոնց հաւատար-  
մութիւնը և յարգը այնուհետև ալ անարատ մնալու էին:  
անոնց մեծագոյն պակասութիւնը իրենց թերի քննադա-  
տութեանը տալու էր, որ արգարե հին ստենները շատ  
դիւրին բան չեր:

Եթէ հազար կամ երկու հաշար տարի յառաջ Երկա-  
թուղի, չոգենու, հեռագիր, կամ գոնէ կանոնաւոր  
երթևեկութիւն ըլլային այլև այլ ազգաց և տէրութեանց  
մէջ, անտարակոյս, շատ անցք տեղնախռով և ճշդիւ կի-  
մայուէին և կարձանագրուէին: Եթէ հին առենները  
տպագրութեան արհեստը ըլլար, ու խրաբանչիւր մա-  
տենագրի գործը իր ձեռամբը տպուէր, անշուշտ, այժմ  
շատ մարդեր իրենց թանկագին գրերը տաժանելի քննու-  
թեանց չէին ծախեր: Եթէ հիները նարերու չափ ըն-  
տրութիւն և նրբախոյզ քննութիւն ունենացին, և եթէ  
դարչելի խարդախութիւնը անմեղութեան սրստղուակը  
իր վրան առնելով՝ ճշմարիտ մարգարէից դէմ սուտ մար-  
գարէներ չհանէր, ճշմարիտ Առաքելոց և Աւետարանաց  
զէմ սուտ աւետարաններ չհանէր, (որոցմէ շատերը  
գեռ այլ և այլ քրիստոնէից մէջ կպտտին, ինչպէս են  
Գորտոսակ, Ավրակոսակ, Պօղոսի տեսիլը, Ադամաց  
տպաշխարութիւնը, Տիաթեկը, Քրիստոսի մանկու-  
թիւնը, Օրհնութեան ձկոր, Անթաղչելի մատեանը,  
Մանեայ շինած աւետարանի մեկնութիւնը ևս յշն ևս յշն  
ևս յշն, որոնք Հայերէն ալ թարգմանուած են, ինչպէս  
Սամուէլ Անեցին կվկացէ): Եթէ նենգութիւնը և պժ դարի

շահասիրութիւնը ծշմարիստ հրաշխ և մասանց հակառակ առւտ հրաշք եւ մասունք զիեղծէին, հարկաւ շատ մարդիկ դժուարահաւաստ չէին ըլլար այսօր, և շատ անգամ սուտէն ազատելու այլ ճար չպանելով, անոր հետ ծշմարտութիւնն ալ չէին մերժեր, ինչպէս Արտեր ըրաւ. այլ ըստ որում թշնամին ամեն տեղ իր որոմը ցաներ է, եւ գրեթէ ամեն բանի մէջ շատ կամ քիչ խարէութիւն մտեր է, ի՞նչ ընելու եմք այսուհետեւ, հերքելո՞ւ եմք ամեն բան իրուեւ խարդախեալ, քաւ միցի. Փրկչի պատուերը, « քննեցիք զգիրս. մի՛ աւենայն հոգոյ հաւատայք », մէկ հստիկ ասլահովագոյն ճամբայ կերևի մեղ. ոչ տփխուաց պէս թանձրամիտ եւ դիւրահաւան ըլլալու եմք, ոչ սկեպտիկեանց պէս՝ ամեն բանի մրայ կասկածուտ. մեք Թուվմայի, Հայոց Առաքելոյ, հաւատոքը ունիմք. ով ինչ կուզէ թո՞ղ երդէ եւ սրատուիրէ, թէեւ անիկայ ամիրայ, պատրիարք, կաթողիկոս եւ կմշտակ ըլլայ, մինչեւ անձամք չըննեմք, հասու չըլլամք, չհամոզուիմք, հաւատալու արամադրութիւն չունիմք, թէեւ բիւր բանազրանքի ալ շառաչիւն լսեմք :

Դառնամք մեր կաթողիկոս մատենադիրներուն : Արդ Տէր Մատիթէոս Կաթողիկոսը վերոյիշեալ հինգ ազգային մատենագրաց հետ զՅուհաննէս կաթողիկոսն ալ վկայ կկանչէ անմիտեցի երդմամք հաստատած Պաշտօն թղթին : Ճռաքաղ. եր. 240 : Եթէ Երուսաղէմ տպած Յովհաննէս կաթողիկոսը հարազատ է, ինչպէս որ կսիրեմք հաւատալ. անոր մէջ այսպիսի վկայութեան եւ ոյ նշանախեց մի կայ. անկէ զատ Պարիսի գրատունը եղած ձեռագիր որինակներն ալ սաքէ անցրէ անցուցինք, ինչպէս նաև Աէն-

Արտօնի գաղղիերէն թարգմանած Յովհաննէս կաթողիկոսը, որ այս վայրկենիս սեղանիս վրայ է : Ահաւասիկ Երուսաղէմ տպած Յովհաննէս կաթողիկոսի . եր. 26 այս նիւթի վրայով գրածը, « Յետ այսորիկ ապա զնացեալ եւս ընդ արքային Տրդատայ յաստուածակարգ կայսրն կոստանտինոս, բազմօք իմն եւ նազելի եւ վայելուչ մեծարանօք պատուէ զառուրբ Հայրապետն, իբրեւ զգենդանի մարտիրոս՝ առաջի անկանելով և աղօթս նուիրականս և օրհնութիւնս ի նմանէ հայցելով . և այսպէս զնապատուասիրեալ եւ Տրդատաւ հանեալ յուկիապատ կառս՝ մեծաւ շքեղութեամբ յուղարկէ զմանասլարհայն » : Ասկէ զատ Յովհաննէս կաթողիկոսի պատմութեսնը մէջ, ոչ յառաջ, ոչ յետոյ, տող մը և բառ մը չկայ, որ այս դաշինքս հաստատէ : Այս պատմութիւնը ոչ Լիւքսորի նշանագրով դրոշմած անդրիին կնմանի, որ մեկնելու համար Շամազօվիոնի հանճարին կարօտի, ոչ ալ Վանայ կամ Բիսութունի բեեռագիր ժայռերուն, որ Գոտֆրիտի տաղանդին կարօտի . Յովհաննէս կաթողիկոսը, ընդ հակառակը, հայերէն է, Մեսրոպեան տառով դրոշմատէ, եւ տասնամեայ մանկանց անգամ իմանալի : Արդ Նորին Սրբութիւնը, մեր կամ այլոց թիւր կարծիքը փարատելու համար, թուղ հաճի իմացունել թէ անոր ո՞ր գլուխը, ո՞ր երեսը, ո՞ր տողը իրմէ ջատագովեալ անժիռուելի եղդմանք հաստատեալ Դաշանց բուղը կապացուցանեն : Թէեւ այժմէն իսկ վատահ եմ, որ անոր մէջ այսպիսի վկայութիւն չկայ :

Անցնիմք Ներսէս Շնորհալիին : Այս Հայրապետի բանաստեղծական հանճարը, ալարկեցտութիւնը, եւ

աստուածաբանական գիտելեցաց մէջ ունեցած շափառք հմտութիւնը յայտնի են ամենուն : Չափառք ասացի, ըստ որում այսպէս է նաև Հայաստանի Հնախօսութեան հեղինակի և Միքայէլ Ասորի կաթողիկոսի կարծիքը անոր նկատմամբ ; Իրրեւ հայրապետ, այո՛, Ներսէս Շնորհալին հաւատոյ խնդրոց մէջ, վերը ըստնուս պէս, վայելուշ հեղինակութիւն ունի, եթէ իր որոշմունքը յեցեալ ըլլան Ս. Գրոց և Ս. Վարդապետաց վրայ . այլ միթէ՞ իրրեւ վիպասան ալ նոյն հեղինակութիւնը ունի : Այն ատենը, առողջ տրամաբանութեան հետեւլով՝ այս հեղինակութիւնը ոչ թէ անոր, այլ Մարիբասին եւ Քաղցէացի քուրմերուն ընծայելու է, ըստ որում անոնք են իր վիպասանութեան աղբիւրը . Վեհափառ Կաթողիկոսը կնեսնէ՞ թէ ծուռ տրամաբանութիւնը ուր կտանի :

Շնորհալին, իրրեւ վիպասան, որ պատմութենէ վար իմաստ կրնծայէ, եթէ անժխտելի երդմամբ Տրդառայ և կոստանդիանոսի, Լուսառոյի և Սեղբեառոսի մէջ հաստատեալ դաշին վրայով բացարձակ բան մը գրած ըլլար, տակաւին ես ու ամեն բանասէր կատարեալ իրաւունք ունէինք զանիկայ ընդունելէն յառաջ, անոր բուն աղբիւրը գտնել և հարազատութեանը վրայ բոլորովին համոզուիլ . վասն զի Շնորհալիի և Լուսաւորչի մէջ ուր հարիւր տարի անցեր են . ութէ դարու մէջ ալ, խարդախ անձեր շատ բան կրնային բաջազել Կոստանդիանոսի և Տրդառայ վրայ : Եթէ Շնորհալին ալ Դաշանց թուղթի վրայով որոշակի բան մը գրած էր, տակաւին մեր առաջադրութիւնը կհասաւատէր, ըստ որում ինքը Խաչակրաց ատենը կապրէր . Դաշանց թուղթն ալ յատկապէս այն առենի

շէնք է : Դիմախոտապար, Շնորհադին, վերը յիշած  
մատենագիրներուն պէս, Տէր Մատթէոս կաթողիկոսի  
կարծեացը հակառակ է : Բաւական է, հայերէն Քերա-  
կանութեան մը կողերը քիչա՞ը ծամել, Շնորհադիփ վի-  
պասանութեան երկու տողի իմաստը անվթար հասկնա-  
լու համար, որ է այս . « Ի յուխու դաշանց միաբանեալ բա-  
զաւրացն երկուց եղեալ » : Ո՞ւր են Լուսաւորչի և Աեղ-  
թասրտափ անունները ու անոնց անժիշտելի երդմամբ հա-  
տառած դաշինքի ապացուցք : Մի՞թէ երկու թագաւորաց  
մէջ դաշինք զնելէն կհետեւի, որ երկու հայրապետքն այ  
դաշինք դրած ըլլան :

Շնորհագիփ դարձ (ԺԲ), որ Խաչակրաց Արևելք ար-  
շամելու ատենն է, որ ատեն արեւմտեան քրիստոնեայ-  
ները ու Հայերը առջի անգամ զիրար կտեսնէին և իրա-  
րու կրմտանենային, Օտոքենեան հարստութեան ալ  
սկիզբն էր : Արեւմտեան քրիստոնեայները Արևելք բա-  
րեկամ քրիստոնեայ ժողովուրդ կինոտէին, Հայերն  
ալ Մահմէտականներու եւ Յոյներու նենգութենէն ու  
կեղեքանքէն զղուած՝ նոր բարեկամ վիճուելու պէտքը  
կզգային, մանսուանդ երբ իմացան այն ատենի Պատերու  
անկուպար տիրապետութիւնը Արևմտեանց վրայ : Այս  
ատենս է, անսուրակոյս, սյն տպեալ կեղծ Դաշանց  
թուղթի բուն թուականը : Արգա՞քն, ինչ դժուարութիւն  
կար այն խառարամած ժամանակները, երբոր Հայաս-  
տանը աղեկոծեալ, Հայերը տարագիր, գրականութեան  
լոյսը մարած, մաստեանները ցանուցիր անձաւներու, ծը-  
մակներու և քանի մի վանքի մէջ հազիւ լըզըն ասպնջակա-  
նութիւն կգտնային, եթէ քանի մի ոամիկ և շրամիտ ան-

միեք Լատինները և Հայերը իդարու մօսէցնելու , և անսույց փոխագալօծ համակրութիւնը զօրացնելու մասք պյուղիսի բարեպաշտական խարէութիւն մը հնարիէին , եւ Լուսաւորչի աւ Տրդատայ պատկառելի անուանց լնծացելով՝ պարզամիտներուն հաւատացունէին . այն խոսւարամած գարերուն մէջ կրաեմ , որ 1,000 տարիէն ի վեր Հայաստան եղած Գեղարդը Խաչակիրները նարէն Անտիոք կդառնային , որ 1,100 տարիէն հետէ Ս. Աստուածածնի հիմնայառակ եղած խրճիթը Պաղեստինէն գաղթեցունելով , ծովու վրայ օղապարիկի պէս քալեցունելով , արատերով , սփններով , տանկրով եւ կահ կրասափով ամբողջ Խոտայիոյ Լորետան քաղաքը կիջեցունէին : Թողում յիշաստակել Պետրոս Առաքելոյ յորս ամբողջ ձեռողբները , Յովհաննէս Մկրտչի երկու , և Անդրէսս Առաքելոյ երեք ամբողջ զղոյնները , Քրիստոսի տասն և յորս բնենները և մէկ հարազատ դաստուակէն ժեստ երեք անհարազատ դաստուակները , որոցմէ մէկին մեծահաւատ ամիրայի մը պրդի ու խատի գնալով անցեալները , վասն մեր ամրաւ մեզաց , հրաշք ալ տեսեր է : Համեստութիւնը կհարկէ պիս լուել հոս ուրիշ խայտառակութիւնները , որոց վրայ Մահմէտականք , Հրէայք և Օդայիդի վայրենիք անգամ կիմնդան . բայց զորաիրեւ ծշմարիս և հարազատ խել մը մեծահաւատներ կրնդունին եւ կհաւատան : Ահաւասիկ այս խաւաբարեք դարու ընծաններն , որոցմէ մէկն է անշոշտանժիսէի երդմամբ հաստատուած Դաշտաց բաղրդ , որոյ հապելուն կօժանդակէր մեծապէս մեր ու Հռոմայիցի թագաւորաց ըրած քաղաքական դաշնադրութեանց աւանդութիւնը :

Երանէ թէ Սրբազնագոյն կաթողիկոսլշիր խախուտ  
առաջարկութիւնը զօրացնելու համար կիրակոս Գան-  
ձակեցիի պէս ծանծաղամիտ արեղայի մը վկայութեան  
չդիմէր . որպէս զի մեք ալ չստիալուէինք իր Սրբութեանը  
յիշել անոր պատմած վանքի մը ճառայութիւն ընող արջու  
գերեզմանի բրած հրաշագործութիւնները , դևի մը կնիկ ը-  
շացը և Հայ մարդու մը հետ պակուիլը . եր. 195 . ձիերու ,  
ուղաներու , մեռելներու և բաղեայ պատկերաց խօսիլը . եր.  
239 . և այլ ասոնց նման բաջաղանք : Յովչաննէս վանա-  
կան եւ Վարդան վարդապետները , երկուքն ալ թէեւ  
պարկեշտ և բանիրուն անձինք կերեին , այլ իրենց դարու-  
կնիքը , որ է զիւրահաւանութիւն և կրիտիսի թերութիւն ,  
երկուքի ճակատն ալ դրոշմած է , ուստի և ոչ բոլորովին  
արժանահաւատ : Մանաւանդ , անոնցմէ 100-150 տարի  
յառաջ արդէն այս շինծու Դաշանց թուղթը հնարուած-  
էր և բոլոր Հայսաստան պտտեր :

Տէր Մատթէոս , Վեհանիառ կաթողիկոսի , յառաջ  
բերած հայ մատենագիրները յապացոյց անժիտելի երդ-  
մամբ հաստատեալ Դաշանց բղրոյն ընդ մէջ կուտանտիա-  
նուի և Ցրդառայ , Լուսաւորչի և Սնորեառորսի մի առ մի  
քննելով եւ բոլորովին իր կարծեացը ներհակ գտնելով ,  
քննեմք այժմ նոյն Դաշանց գիրը իրու հայ գրականու-  
րիւն , իբրև պատմական յիշատակարան :

Փոյթ չէ ամենեւին եթէ սրբազան պապերէն եւ հոռ-  
մէական կարգաւորներէն ոմանք ընդուներ են զայն , եւ  
այլք մերժեր . հոգ չէ ամենեւին եթէ Պատոս Պ. զանիկայ  
վաւերացուցեր ու Միլանի գրատունը դրեր է , եթէ Վա-  
փէլլէթի քահանայն զանիկայ թարգմաներ ու Պէրքաւ-

թէլի եկեղեցական պատմութեան մէջ հրատարակեր է, եթէ Մինէր քահանայն Պարիս տպեր է զայն, կամ թէ Մխիթարեան Վ. Մխիթարանութիւնը չէ տպեր, ինչպէտ Վ եհատիառ Կաթողիկոսը կդանգտի : Գաղղիացւոց, Գերմանացւոց, Իտալացւոց, Անգլիացւոց գրականութեանցը հմուտ եղողները աղէկ գիտեն, որ Եւրոպացիք Հայոց, Յունաց, Պարսից, Այրարաց, Թիւքքաց, Հնդկաց, Չինաց եւ այլ ժողովրդոց վրայ այնչափ առասպելներ երևակայեր, թարդմաններ և տպեր են, որոց թիւն անգամ շգիտցուիր : Էական խնդիրը հոս է, թէ այս Դաշանց թուղթը Հռոմէական, Յունական, Բողոքական Հին կամ նոր, եկեղեցական կամ աշխարհական երևելի մատենագիրներէն ընդունուած է թէ ոչ: Ահա խնդիրը ասոր ալ պատասխանը, որչափ ես գիտեմ, խոշոր երկաթագիր ՈՉ մըն է : Այս գիտուններս տակաւին հայ գրականութեան հմտութիւն չունէին որպէս զի իրենց փաստերը աւելի զօրաւոր հիմերու վրայ հաստատէին :

Մեղաւորս, որ Հայ եմ, եւ հայ գրականութեան մկրնաւորութեանը, բարգաւաճութեանը, անկմանը և նորոգութեանը չափաւոր հմտութիւն ունիմ, չեմ կըրնար, եթէ շատ ալ ուզեմ, այն Դաշանց թուղթը ընդունիլ իրբե հայերէն բարգմանութիւն նախնեաց : Ագաթանցեղոս. եր. 15 ինք զինքը հոռանյեցի եմ կըսէ, հրոմէական հայրենի և յոյն դպրութիւնով վարժած . եր. 19 Տրդատայ երկրորդ անգամ Հռոմ գնալը կալատմէ և կոստանտիանոսի հետ ուխտ դնելը առանց Մեղրեսարոսի և Լուսաւորչի անունները յիշելու : Իր պատմութիւնը հրամանաւորքայից գրերէ . եր. 15, 16 և 29 : Երեխ թէ Տրդատեան

Խապովի օրովն աղ կեցեր է նա Հայաստան . մանուսին  
Գրիգոր, կըսէ Տրդատի քով գնաց, որ Լիկիանոս կոմին  
ապաւիներ էր . եր. 39 և 86 կըսէ որ Տրդատ անորմէ  
թագաւոր պատկռելով Հայաստան դարձաւ . եր. 43  
(օրով Խորենացին հակառակ կելլէ, որ Տրդատայ թա-  
գագրութիւնը Դիտկղետիանոսի կտույ . Գիրք Բ. Գլուխ  
ԶԲ.). Հոխիսիմէ կոյսք նախ Հռոմայեցոց քարտաքէն էր  
կըսէ և քազակաշ տահմէ . եր. 109, ապա. եր. 119 Յունաց  
աշխարհէն, որով ինք իբեն կներհակէ ու յիշեալ կոյսի  
հայրենիքը տարտամ կմնայ : Անոնց թիւը 70 էր կըսէ,  
ընդ այս և ընդ կիմ . եր. 152, 159, 326, որոցմէ 37 հոդից  
Հայաստան նահատակուեցան, մնացեալ 33 ցրուեցան  
ասդիս անգին : Հս ըյալու էր բնականաբար Նունէ կոյսի  
պատմութիւնը, զոր Արքազան Կաթողիկոսը յումպէտս  
Գրաշանց թուղթի մէջ կպնոտէ : Աստուած զսուրբն Գրի-  
գոր Հայոց քարոզիչ կռւղարկէ . Աստու ած Հայոց վա-  
համացապեսութիւն կպարգեէ . եր. 568. Հայերու ազատ  
և մեաբան ընարութեամբը Գրիգոր մեր Եկեղեցեցացն իբրև  
Աստուծմէ տեսիկրով յացանեալ Քահանայական կկար-  
գուի . եր. 591, 592 և 596. որ Կեսարիա, այսինքն առա-  
ջին Հայոց մայրաքաղաքը երթալով՝ Քահանայական  
կարգի լութիւնը կատանայ . եր. 598. 400 բիւր հեթա-  
նոս կմկրտէ . եր. 619. 400 Եպիսկոպոս կձեռնադրէ .  
եր. 634. զՄիհիտակէս, իր որդին, Հայոց մեծաց հացրա-  
պես կամ կարողիկոս կանոնադրէ : Տրդատ հանդերձ  
Գրիգորի . Կուտանտիանոսը տեսներու կերպայ . եր.  
648. Կուտանտիանոս դաշին կոէ ընդ եմա (այս ինքն,  
ընդ Տրդատայ, եւ ոչ ընդ ենցա, այսինքն, ընդ Տրդու-

տույ եւ Գրգիգորի) միջնորդ կայսեր զհաւառուն ։ որ ի Տէր քրիստուն էց զի անշոշա մինչ ի բռն զհաւառորին սկզին ի մէջ բազաւոյութեանցն պահեցեն ։ Ագաթանգուն Տրդասայ հրամանաւը կոդրէ զայս ամենայն լուս օրինակի շունական ճարտարարեամ, որով և իր պատմութիւնը կը վերջանայ :

Արգամիէ աւելի յայտնի և պարզ Արայիւթիւն չկրնացր ըլլար, որ Ագաթանգուն ատենադպիղը, իբրեւ ականառեն կապատմէ, թէ Կոտուանիանս ծրդառայ նեռ միացի քաշինք որուա քրիստոնէական հաւատքը միջնորդ բնենութ երկուց բազաւոյութեանց մէջ աւելի հաւատարմաքեամբ պահելոյ համար : Հոս ոչ Աեղքեատրոսի անոն կայ, ոչ Լուսաւորչի, ոչ Քրիստոսի միրկարար արիւնը մեշտնի տեղ գործ ածելու լրացնթիւնը կայ, ոչ ալ Արքազան կաթոզիկասի երկակայած հոգեռոշական և քաղաքական իրաց և դիսուածոց և գործովութեանց վյացալ սահմաններ և օրէնքներ դնելը : Ասկէ ալ ուղիղ տրամարանութեամբ կհետեւի, որ եթէ Ագաթանգունոսի պատմութիւնը ճշմարիս է, ուրեմն Դաշտաց բռնքը տուտ է. ընդ հակառակն, եթէ Դաշտաց բռնքը Ագաթանգունոսին է և ճշմարիս ուրեմն իր պատմութիւնը տուտ է. ըստ որում այս երկուքիս մէջ եղած հակառարիսնը տնմիաբանեցի է և առենքնուոց միասքի կզարմէ :

Ագաթանգունոսի պատմութիւնը յունարէն գրուած բարձր վրայ առարակոյ չկայ. անոր յունարէն քնագիրը տակառին կայ, անոր բարդը օրինակներէն գունէ. մէկն անգամ այս շաղաղի Դաշտանց թուղթը չունի : Այս յունական բնակիւս Աետակրաստիս ալ կյիշէ եւ Բողլանդեաններու

Խազովի օրովն ալ կեցեր է նաև Հայաստան։ մանուշին  
Գրիգոր, կրտէ Տրդատի քով գնաց, որ Լիկիանոս կոմմին  
ապաւիներ էր . Եր. 39 եւ 86 կրտէ որ Տրդատ անորմէ  
թագաւոր պատկռելով Հայաստան դարձաւ . Եր. 43  
(օրով Խորենացին հակառակ կելէ, որ Տրդատայ թա-  
գագրութիւնը Դիտկղետիանոսի կտայ . Գիրք Բ. Գլուխ  
ՁԲ.) . Հոխիսինէ կոչք նախ Հառմայեցոց քարսքէն էր  
կրտէ և քաջակազ տռհմէ . Եր. 109, ապա . Եր. 119 Յունաց  
աշխարհէն, որով ինք իբեն կներհակէ ու յիշեալ կոյսի  
Հայրենիքը տարտամ կմնայ : Անոնց թիւը 70 էր կրտէ՝  
ընդ այս և ընդ կին . Եր. 152, 159, 326, որոցմէ 37 հոգիք  
Հայաստան նահառակուեցան, մնացեալ 33 ցրտեցան  
ասդիս անգին : Հսո ըլլալու էր բնականաբար Նունէ կոյսի  
պատմութիւնը, զոր Արքազան Կաթողիկոսը յումպէտա  
Գաշանց թուզթիմէջ կավճառէ : Աստուած զուգրն Գրի-  
գոր Հայոց քարոզիչ կաւարկէ . Աստուած Հայոց Քա-  
հանարարկեառոքիւն կպարզեէ . Եր. 568. Հայերու ազատ  
և միարան շնորութեամբ Գրիգոր մեր եկեղեցւան իրրե  
Աստուածմէ տեսիզրով յայտնեալ Քահանայակետ կկար-  
գուի . Եր. 591, 592 և 596. որ Կեսարիա, այսինքն առա-  
ջին Հայոց մայրաքաղաքը երթալով՝ Քահանայական  
կարգի լութիւնը կատանայ . Եր. 598. 400 բիւր հեթա-  
նոս կմկրտէ . Եր. 619. 400 Եպիփակուրու կծեանտղմէ .  
Եր. 634. զԱրիստակէն, իր որդին, Հայոց մեծաց հայրա-  
պետ կամ կարողիկոս կանոնադրէ : Տրդատ հանդերձ  
Գրիգորիո Կուռամտիանուար տեսնելու կերպէայ . Եր.  
648. Կուռամտիանու դաշինս կոէ ընդ ենա (այս ինքն,  
ընդ Տրդատայ, եւ ոչ ընդ ենցա, այսինքն, ընդ Տրդա-

տոյս եւ Գրիգորի) միջնորդ կայեալ զհաւառամի , որ ի ֆեր պերիստուն էր, զի անշուշտ մինչ ի բուն զհաւառարին սէցն ի մէջ բազաւակութեանցն պահեցեն . Ագաթանգեղոս Տրդատայ հրամանաւը կդրէ զայս անենայն ըստ օրինակի շունչական ճարտարաքեամ, որով և իր պատմութիւնը կը մերջանայ :

Արգամակէ աւելի յայտնի և պարզ վկայութիւն չկրնար ըղար, որ Ագաթանգեղոս ատենազպիդր, իբրեւ ականատես կապատէ, թէ կուռանախանու ծրդառայ հետ միայն զայինք որուաւ, քրիստոնէական հաւատքը միջնորդ բանելով երկուց բազաւորութեանց մէջ սէրը հաւատարեամբ պահելոյ համար : Հու ոչ Սեղբեստրոսի անուն կայ, ոչ Լուսաւորչի, ոչ Քրիստոսի փրկարար արիւնը մեշանի տեղ գործ ածելու լրբութիւնը կայ, ոչ աղ Արրազան կաթողիկոսի երեւակայած հոգեւորական և քարտքական իրաց և քիպուածաց և գործովարթեանց վյացալ անհնաններ և օրէնքներ դնելը : Ամի՞ ալ ուզիղ տրամաբանութեամբ կ'ետեւի, որ եթէ Ագաթանգեղոսի պատմութիւնը ծշմարիս է, ուրեմն Դաշնաց բռնքը տուած է . ընդ հակառակն, եթէ Դաշնաց բռնքը Ագաթանգեղոսին է և ծշմարիս ուրեմն իր պատմութիւնը տուած է . ըստ որում այս երկուքիս մէջ եղած հակառարիւնը տեսմիարանելի է և ամեն քննութ միութի կը պարմէ :

Ագաթանգեղոսի պատմութիւնը յունարէն գրուած ըստարև վրայ ասարակոյս չկայ . անոր յունարէն թնագիրը տակաւին կայ, անոր բարոր օրինակներէն զի նէ մէկն անգամ այս շաղաղի Դաշնանց թուզթիր չունի : Այս յունական բնութիւնս Մետավրաստիս ալ կ'յիշէ եւ Բողլանդեաններուն

ձեռամբ տպուած է : Ուստի եւ բոլորովին անտեղի են Ճռաքաղի . եր. 258-260 Սրբազնագոյն Կաթողիկոսի Հ. Չամչեանէն առած և յիշած պատճառաբանութիւն ները , որպէս թէ այն Դաշանց բուղբը Յիշատակարան նախնեաց անունով 476 և 730 թուերուն Կոստանտինու պօլիս պատահած հրկիզութեանց ատենը այրուած ըլլայ . վասն զի Մեծին Կոստանտիանոսի վարքը գրող Յոյն , Հռոմայեցի , Ասորի , Եգիպտացի և Հայ հին հեղինակներէն 25 ի չափ յականէ յանուանէ կմանաշեմ , անոնց գործքը աչքէ անցուցեր եմ , որոնք թէեւ հրկիզութեան ազատ , այլ և ոչ մէջը այս շաղակրատ Դաշնագրի յիշուտակը կընէ :

Յունագէտ չըլլալով՝ Ագաթանդեղեայ յունական ոճի վերայ դատ ընելու ձեռնկատութիւն չունիմ . այլ կհաւտամ Խորենացիին , որ զանիկայ աջող քարտուղար կվերածայնէ : Անոր պատմութիւնը , հաւանականարար , մեր թարգմանիչներէն հայերէնի փոխուած է հինգերորդ դարուն մէջ . այս քարգմանուրիւնը վսեմ է եւ հարազատ հայկարան . Դաշանց թուղթին ալ , որ նոյնը պիտի ըլլար . եթէ մի և նոյն անհերէն թարգմանած ըլլար . ընդ հսկուակն թրքախօս է , պարսկաբան է , արարահն չիւն է , քարակրկո է , գաղղինաղեզու է , ուսմկուրիւն կրուրէ , ինչպէս է այսօրուան օրս Լեմբերգի , Բաշլալովի և այլ խառնախօս կէս կէս Հայերու լեզուն : Այս լեզուներս և ոճերս ալ , գիտեմք ստուգիւ , որ թարգմանչաց ատենը Հայոց ընտանի չէին , որոնք Թուրքենեանց օրովք Հայաստան ողողեցին և մեր լեզուն պղծեցին :

Ահաւասիկ Դաշանց թուղթի մէջ ի գործ ածած հայե-

թէն բառերու եւ ոճեցու վորքիկ ցանկ մը, որ անոր միայն տեսհական է, ու մեռասաներորդ դարէն յառաջ եղած ազգային մատենագիրներուն բոլորովին անձանօր : Արևերածառանց, հայրենագորդի, ահեղանշան, օքտոնական, մարգարտուաման կամ մարգարտամահն, վիշապամուխ, խոռոխայլ, դաշտանուն, յորդաձայն, յակուերեայ, գրամիկ կամ գրամփիկ, ամբարհաւամատեսիչ, թիւնահարած, գմբերաշէն (արարերէն գուալպէթ ասի). շատ ետքը Հայոց մէջ մտեր է), ճառանամիգ, ճորացի (թերևս ի Ճոր քաղաքէ), կուրտակ, վէղէնտիար, յուխազգեատ (զգեստ ի չուխայէ, որոյ կէսը թիւրքերէն է, կէսը՝ հայերէն), պարեգուսահեներձ (պարեզօտ՝ յունարէն, հանդերձ՝ հայերէն, որպէս թէ ըսէինք հանդերձ հանդերձ), անզիսահարկ, պոտոսապ (պոտոսպապ), եղինհանգուենակ, գշիտափախան, քունկանիս, հրանենահան, միքր, թժկաբաշխ, պաշոկամաց (թերևս պատշգամ), ծաղովի, հայրենագրութիւն ի հետ Հայոց, ի հետ Ծրդասոյ :

Դաշանց թուղթի բազմամթիւ անձոռնի և քառականգուն բառերէն քիչ մը բաղեցով հոս դրինք մեր բանասիրաց դոյզն ճաշակ մի տաքը համար անոր անոպայ եւ ուսմկական հայերէն ոճի վրայով, որսց եւ ոչ մէկը, կլերակրկնեմք, Ագարանգնենայ որառնութեանը մէջ կգտնոի և ոչ աշ Ժի՛ դարէն յառաջ կեցած մեր մատենագիրներուն մէկուն մէջ : Ահա առաջին անժխտելի ապացոյցը, որ այս Դաշանց թուղթը նախնեաց գործ չէ : Երկրորդ ասլացոյն է անոր մէջ ի գործ ածուած խառնիխուռոն թիւրքերէն, Թարարերէն, Ախարերէն բառերը, որոնք Ագաթանգեղեայ թարգման չապը իսպառ անծանօթ էին .

քանդի Այսարերէնը Հայաստան մտաւ Եօթներորդ դարուն  
վերջերը, Թիւրքերէնը՝ մետասաներորդ դարուն վերջ  
ջերը. իսկ Թարարերէնը՝ տասներկուերորդ դարուն վերջ  
ջերը։ Բայց որ այս ազգերէս ոմանք Արքերիայի սահմանները բնակեած, ոմանք Վորդայ գետի և Ուրալ լեռներ ստորատներոյ այլը։ Արարիոյ մէջ Հայոց հետ ընտանիւն թիւն և յարսրերութիւն չունեին ամենևին։ հետևաբար անմանց լեզուի բառերը և ոճերն ալ մեր լեզուի մէջ չէին կրնար. մանել բնականաբար ութերորդ, մետասաներորդ և երեքտուասաներորդ դարերէն յառաջ, իմաստ այս ազգերուն Հայաստան արշաւելէն յառաջ։ Օրինակի համար Այսպէս, որ իրակ Աշեմի երկիրն է ըստ Արարաց առողջանութեան, և Պարսկաստան կնշանակէ, Ագաթանգեղոսէն։ Եւ թարգմանիչներէն գտնէ 400 տարի ետքը հնարուածէն։ Դարդանիդ Եօթներորդ դարուն մէջ Արարացիներէն այս անուան առաւ. իսկ Ագաթանգեղոսի և Սրբոց Վարդանանց օրովը դրուեք Աշանաց կամ պահած Հոնաց կրտուէր. Եղիշէ. եր. 353։ Դարեւալ թաթարաց աստելն (կիրճ, անցուկ) եղերէ, և տաժներորդ դարէն աստիճն այս անուան առեր։ Առաջեր հաւայինէ կամ հաւետ շանի, հայերէն շրջադին ի զատ գեռ անխմանալի է։ մեր գիտուններուն վայելուչ ստուգաբանութիւն մը շրջնայելուն համար դանուն, Յունաց օրիանուն. է Թիւրքաց առողջաբանութեամբ Հայոց մէջ մատեր. տառինայ, բառ աղաւաղեալ, չգիտեմ, ո՞ր ազգէ առնուած։ Բակուն դեայ, որոյ հայերէն ուղղագրութիւնն յակինթէ։ դուդէս, բառ թաթարաց, որ առ Թիւրքս վարդարադաց. Թօհաստան (Էռովկաս), զոր նախմնի Պարսկիները կապեան կոյ

չէին, և ապա Ալրաբացիք ութերորդ գարուն Գուհիառն  
ապասցին . աղևի (գէն) Ալրաբնացւոց բառ է, առ որս սիլէն  
գրի, և մեր թարգմանչաց անծանօթ . շտիւար Թիւրքաց  
բառ է, եւ նշանակէ շրջապատ ցանկ . Գմբերաշէն, որոյ  
կէսն հայերէն է, միւս կէսն՝ արաբերէն, առ որս գրի  
գուգաղէր . ամենադ է բառ պարսկերէն ի վար առեւալ յետ  
գտանալը նոցա ի մահմէտականութիւն, առ որս գրի  
ամենագ և նշանակէ մեծ գրօչակ (աղէմի պիւղիւրգ) . շոխաւ  
զգեստ ելեալ ի յոխայ բառէ Պարակից, որ նշանակէ  
տառւի . այսպէս կոչեն Մահմէտականք զաքեմ կրօնաւու-  
րաց Քրիստոնէից . զին գլխոց, որ Ալրաբաց խարած բառի  
թարգմանութիւնն է : Հռոմայեցւոց կայսերութեան  
ատենը ամեն հպատակը հարկ տալու պարտական էին,  
այլ ոչ զին գլխոյ, զոր Ալրաբից Մարդարէի յաջորդները  
հնարեցին այլակրօններու համար, իրուեւ փրկանք անոնց  
մահմէտական չըլլալուն և չմեռնելուն . ճռհարական, որ  
է արաբացուցեալն պարսկերէն շնչահիր բառին, զոր մեր  
նախնիքը գոհար թարգմանած են :

Ա երոյիշեալ բառերու քննութիւնը բաւականէն աւելի  
կապացուցանէ, որ այս Դաշանց թուղթս ոչ Տրդատայ  
և կոստանտիանոսի ատենը գրուած է, ոչ ալ մեր նախ-  
նեաց թարգմանածն է, որոց և ոչ մէկը Թիւրքերէն,  
Ալրաբերէն և Թաթարերէն գիտէին, ոչ ալ այն ատեն  
մեր այլուրքնի մէջ ֆառը կար, որ ֆրեր գրէին : Առ  
այժմ այսչափս բառ է . հարկ ըլլայ, նորէն ձեռք կառ-  
նեմք այս աղճատարուն թշնամաղիրա եւ քառապատիկ  
ապացոյցներով անոր ի յետնոց հնարյուած ըլլալը կհա-  
տուտէմք :

Դաշանց թուղթի մէջ եղած այլազգի և եռականգուն  
բառերու հօծութիւնը անոր ո՞նի ալ ստորութիւնը կը  
յայտնէ : Մեր գարու մատենագիրներէն մէկը ըստ ,  
« Մատենագրութիւնը ժողովրդեան մը գաղափարներու  
վկեմութեան և նուաստութեան, և անոր ճաշակի նրբու-  
թեան ու յոռութեան կնիքն է . գործօնեայ, ժիր ազգերը  
առդ, միավանկ բառեր կվարեն, երկարներն ալ կթշա-  
տեն, իրենց հանդերձի ու մօրուքի պէս . իոկ զառա-  
մեալ և անկեալ ազգերը, ընդհակառակը, իրենց մօրուքի  
ու հանդերձի հետ բառերնին ալ անհամ կերկնցունեն : »  
Ասկէ աղէկ սահման չտրուիր այս ալոռոտախոս Դաշանց  
թուղթիս, որոյ ամրարհաւաճատեսիլ, խռոսիխայլ, պարե-  
զուահանդերձ և այլ եօթնվանկեան բառերը, կըսես թէ,  
քարկոփներու և հիւսերու գչիրով ծակած լսելեաց համար  
շինուած են, որոնք աւաւօտէ մինչև երեկոյ տրնկ տրնկ  
երգեհոնի անոյշ ձայնին սովրած են : Թողում յիշել  
հոս « Նիզակօք վիշտավամխօք, երգեհոնօք ականակապօք,  
դանոհօք յորդաձայնօք, տպազիռնաց բազմակշուաց »  
յետադաս ածականներու համաձայնութիւնը ; որ Ունի-  
թոռեանց Հայոց ընծայած բազմաթիւ պարգեւներէն  
փոքրագոյնն է :

Երրորդ անժիտելի ապացոյցն է Դաշանց թուղթի  
Ազաթանգեղոսի գործ չըլլալուն՝ անոր մէջ ի գործ  
ածուած գաղղիերէն բառերը : Այս դաշնագիրս, որ 319  
թուին լատիներէն գրուած պիտի ըլլար ու հինգերորդ  
գարուն հայերէնի թարգմանուած, բնականաբար անոր  
լեզուն և բառերն ալ լատիներէն ըլլալու էին : Այն ատենը  
գաղղիերէն լեզու տակաւին չկար աշխարհի վերայ : Այս

Եղուկա առաջին կնրապատրիներ, այս լեզուիս ամենահիմ  
գրաւոր յիշատակարանը Քրիստոնէութեան ուրերդ դա-  
րուն երեւան կեղչէ, այսինքն Շարլըմայնի ատենը : Գաղ-  
պիացիք ալ մինչեւ այն ատեն, որը գօլուաներէն, որը  
ուօմաներէն, որը կեղտերէն կամ բրետոներէն կխօսէին :  
Ապաքէն ի՞նչպէս կարելի է, որ այս գեռ չծնած գաղ-  
ղիերէն լեզուի բառերը, ինչպէս են ֆրեր, frère, ովրանդ  
կամ օֆրանդ, offrande, տամուժէլ, demoiselle, շամբո,  
chambre եւ այլ ուրիշները, անկէ 550 տարի յառաջ լա-  
տին դիւանագրութեան մէջ ի գործ ածուէին : Այս եր-  
րօրդ ապացոյց միայնակ բա: ական չէ՞ արդեօք անտա-  
րակուսելի եղանակաւ հաստատել թէ այս ողորմելի  
Դաշանց թուղթս Ուորենեանց ատենը հնարուած է,  
այն ատենը, երբոր խաչակիր Գաղղիացիները կիմիկիա,  
Մալաթիա, Եղեսիա, Անտիոք, Տարսոն, Սիս, Այաս,  
Կարիկոս, Մարաշ եւ տյլն, Հարիւրաւոր տարիներ բնա-  
կելով, ընտանեցան, խնամեցան Հայոց հետ եւ իրենց  
լեզուն ուսուցին Ներսէս Լամբրոնացիին, Ամբատ Սպա-  
ռապետին, Մատթէոս Ուոհայեցիին, Կիրակոս Գան-  
ձակեցիին, Վարդան Բարձրերդցիին, Գրիգոր Երի-  
ցուն եւ այլ մատենագիրներուն : Պէտք է մի յիշել  
հայ այն բազմաթիւ գաղղիական բառերը, զորս մեր,  
Միջին Դարու, մատենագիրները ի փոխ առնելով  
այս միրելի եւ մեծ աղգէս սկսան անխտիր մեր գրա-  
կանութեանը մէջ վարել, որպէս նիր, sîr, սենեցալ,  
sénéchal, պայլ, hail, գունտատարլ, connétable, կոմք,  
comte, տուկ, duc, բրինձ, prince, քունուե, commune,  
պատրոն, pâtron, պարօն, baron և այլ ասոնց նման շատ

բառեր, որպեսք այս ատենի մատենագրաց մէջ մխայն կտեսնուին :

Անցնիմք հիմա Դիաշանց թուղթի ժամանակագրութեան և աշխարհագրութեան հակառակ ելած սրուալներէն մէկ քանին քննել, որոնք անոր հնարազի խարդախութիւնը ու խորին ագիտութիւնը համանգամայն երեւան կը հանեն արեւու լուսին ալէս : Խորենացին, Ասողիկը, Յովհաննէս Կաթողիկոսը, Ներսէս Շնորհալին, Վարդան, Կիրակոս եւ այլ Հայ պատմիչներ Տրդատոփ առ Լոռատանտիանոս երթալլը յիշելինի թուական մը չեն որոշեր : Մեր ատենի պատմիչները, որոցմէ մէկն ալ բազմարդիւմ Հ. Մ. Զամշեաննէ, այս թերութեան կարևորութիւնը զգալով՝ այլ և այլ անցից համեմատութեամբ 318-319 թուին կդնեն այս եղելութիւնս, որ մեզ ալ ընդունելի կերեւի :

Հարեւանցի յիշեմք, որ Տրդատոյ 70,000 զօրօք Հռոմերթալլ մեզ չափազանց կերեւի՝ մասդիր լինելով այն ատենի Հայաստանի ճգնաժամին, որ թէև նոր ազատեր էր Շապուհի ճանկէն, այլ դեռ կատարեալ ապահովութիւն չունէր : Շապուհ երբեմն անձամբ, երբեմն ալ արտաքին և ներքին թշնամիննը յարուցանելով՝ մեր երկրի անկախութեանը միշտ կապահնար : Բայց յայտմանէ ի՞նչ կարեւորութիւն կար 70,000 զօրօք 5,000 մղնն ծով ու ցամաք ճանապարհորդել : Եթէ կուտանտիանոս Հայոցմէ օգնութիւն կուգէր, այն ատեն խնդիրը կիրխուեի . Եթէ բարեկամութիւն հաստատելոյ համար Տրդատ Հռոմերթար, միթէ 70 կամ 700 հետեակ բաւական չիին : Աշխարհին մէջ մեր անգին աւելի բազմաթիւ ազգեր

եղեր են, ինչպէս Զիները, Հնդիկները, Պարսիկները, Արարացիք, Հռոմայեցիք եւայլք, որոց թագաւորները ժամանակ ժամանակ իրարու տեսութեան գնացեր են, այլ ոչ երբէք այսչափ բազմաթիւ զօրքով. Դաշանց թուղթի գերօներու առաստոթիւնը դատարկ կապահի արձագանքի չը նմանիր : Կարելի բան էր որ Յունաց, Հռոմայեցւոց, Եգիպտացւոց, Ասորոց և Հայոց, Կոստանտիանոսի ժամանակակից և մերձաւոր պատմիչները, Եւսեբի, Սոկրատ, Խորենացին, Ենանոս Աղեքանդրացին, Զոսիմոս, Թէոդորետոս և այլք, որոնք կոստանտիանոսի վարուց ամենափաքր պարագաները գրեցին, 70,000 զօրաց 5,000 մղոն ըրած նշանաւոր ճանապարհորդութիւնը չյիշէին գոնէ հարևանցի : Ինչ և իսէ, գըխաւոր խնդիրը հոս չէ : Կարծ կապեմք որպէս զի հաւատաքննութեան խարոյկը չբորբոքի : Բաց յայսմանէ կան ալ աղդային պատմիչներ, որոնք յայտնապէս կըսեն որ Տրդատ այն ատեն 30,000 զօքք ունէր :

Առաջին ստութիւն Դաշանց թղթոյն : Տրդատ 319 թուին Հռոմ գնաց, ու Կոստանտիանոսի հետ այն թուականին և հոն դաշինք դրաւ : Ոչ Տրդատ, ոչ Կոստանտիանոս մարգարէական շնորհը չունէին .ուրեմն ի՞նչպէս կարելի էր, որ Արքազան կաթողիկոսին բարերանեալ Դաշանց թուղթի մէջ, Տրդատայ Հռոմէն Հայաստան գառնապէն ետքը Գեղուէնու զօրացիի կամ ճորացիի, այսինքն Բասլայ թագաւորի հետ ըրած հօրահամիգ պառերազմը մտնէր . կարելի բան է մեր բալոր պատմիչները պուտ հանել ստապանոյն Դաշանց գիր մը հաստատելոյ համար : Մեր խօսքին երկրայողը կրնայ

կարդալ Խորենացիի Գիրք Բ. Գլուխ ԶԴ եւ ԶԵ.  
Վարդան. Եր. 58 (տիպ Մոսկվայի) . Մովսէս Կաղան-  
կայտուացի. Հատ. Ա. Եր. 115 (տիպ Պարիսի) . Ստե-  
փաննոս Ասողիկ. Եր. 62-63 (տիպ Պարիսի) . Պատմու-  
թիւն Հայոց . Հատոր Ա. Երես 408-409, 644-645 . Հ.  
Մ. Զամշեան և Գլակ Զենոր, որ Երես 44 կըսէ թէ  
Գեղոէհոն 58,000 զօրգով Տրդառայ վերայ յարձակեցաւ,  
անոր Հռոմէն դառնալէն ետքը : Արդ, Դաշտանց թուղ-  
թի և Հայ պատմագրաց մէջ այս կուռիտ վրայով  
հակառակորիւնը դէմ ընդ դէմ է . կամ մեր պատմիշները  
առա են, կամ Դաշտանց բուղը : Ներէ՛ մեզ, Արրազան  
Քահանայապետ, խնդրել սլարդ՝ բացատրութիւն մը :  
Սպասելով այս բացատրութեանս, մեք մեր պատմիշներու  
գրածը ստոյգ կրհաւարիմք, ու հետեւաբար Դաշտանց բուղ-  
թինք՝ ստու . որովհետև Երկու հակառակ վկայութիւնք  
համանգատմացն ճշմարիտ չեն կրնար ըլլալ :

Երկրորդ ստութիւն Դաշտանց թղթոյն : « Ես՝ յաղագ  
հաւատարմուքեան հաստատուն եւ անշրեշի ուխտիս մերոց  
զահագին եւ զանգին արիւնն Քրիստոսի ի մերան խառնեալ  
գրեցաք Գրեր միմեանց » : Արրազան Կաթողիկոսը աղէկ  
գիտէ, որ Երդումը, ինչ և իցէ ձեռով ալ որ ըլլայ, ար-  
գիլուած է մեր Փրկչէն ամենայն Քրիստոնէից հետա-  
գայ բանիւմ « Դարձեալ լուսարուք զի ասացաւ առաջնոցն  
(ի Հին Կտակարանի) մի Երդնուցուս սուտ . բայց հա-  
տուացես Տեառն զերդմունս քո : Այլ ես ասեմ ձեզ՝ ամե-  
նեին մի երդնուշ, մի յերկինս զի որո՞ է Ասումոյ, և  
մի յերկիր զի պատուանդան է ոտից նորաւ, և մի յԵրդաս-  
դէմ զի քաղաք է մեծի արքայի, և մի ի զրոյին քո երդնու-

ցուս զի ոչ կարեն մազ մի սպիտակ տոնեն կամ բռիս . այլ  
եղիցի ձեր քան, այսին այս և ոչն ոչ, զի աւելին քան զայն  
ի շարէն է : » Մատթէոս, Գլ. Ե. 33-36. Թուլց, Գլուխ  
Լ. 3. Երկրորդ Օրինաց, Իգ. 28. Յակոբ, Ե. 12. Եսա-  
յի, ԿԶ. 1. Սաղմոս, Խլ. 2 :

Արքազան կաթովիկոսը նոյնպէս աղէկ գիտէ : որ  
Քրիստոսի մահմեր և արիւնը տրուեցան հաւատացելոց  
չէ թէ մարդոց մէջ դաշն դնելոյ միջնորդ, այլ հաւա-  
տացելոց Աստուծոյ հետ միանալոյ, մեղքէ սրբուելոյ,  
հոգով սնանելոյ և Աստուծոյ արքայութիւնը ժառան-  
գելոյ պայման : Արդ ի՞նչպէս ներելի է ընդունիլ, որ  
մեր Լուսաւորչի պէս երկիւղած, համեստ և սուրբ Հո-  
գի մը իր Աստուծոյ ամենասուրբ արիւնը թափէ մրա-  
մանի մէջ, անոր մէջ գրիչ թաթիէ, զանիկայ ապակա-  
նացու քարտիզի վերայ դրոշմէ, որ էն վերջը ցեցակեր  
կամ մկնակեր ըլլալու էր : Բավ կուգէ՝ այսպիսի ամբա-  
րըշտութեան թող հաւատայ, սակայն իմ խիղճա ինձ  
չներեր : Ասոր նման անզգամութիւն մըն ալ մեր խրդ-  
մայի Գագիկ երկրորդը և Հայաստանի ազատութիւնը  
Յունաց մատնելու աստենը կապատմուի . որուն հաւատալու  
արգելք մը չկայ, ըստ որում անոր գործողները վատթար  
և մատնիչ անձինք էին : Այլ Լուսաւորչի պէս առաքինի  
հոգիէ հեռի ըլլայ այսպիսի ամբարշտութիւն :

Երրորդ ստութիւն Դաշտաց թղթոյն : « Սիրելեացն  
աիրելի լինելով, քնառեացն քնառի » : Եթէ այս վարդա-  
պետութիւնը Ա. Լուսաւորչին ընծայեմք, կպարտաւո-  
րիմք սյնուհետեւ ակամայ ընդունիլ, որ անոր Հայոց  
քարոզածը Քրիստոսի Աւետարանին հակառակ մաքսա-  
6.

Հորութիւն է եղեր . ասլա թէ ոչ՝ Քրիստոսի հաւատարիմ աշակերտ մը ի՞նչ չպէս իր վարդապետի «այլ ես ստիլ ձեզ , սիրեցէք զրշնաւիս ձեր . . . բարի արարէք ատեզեաց ձերոց . . . զի եքէ սիրիցէք զայնոսիկ , որ սիրենն զձեզ : զի՞նչ վարձք իցեն . ո՞չ ապարէն և մաքաւորք զնոյն գողծեն . եւ եթէ տայցէք միայն ողոյն բարեկումաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք . ո՞չ ապարէն մաքաւորք եւ մեղաւորք զնոյն զորմնեն . » Մատթէոս , Ե. 44-47 , պատուիրանին համար ուսկ կհամարձակէր քարոզել ըսելով սիրելեացն ոյքեցի իմենելով և թշնամեացն բշնամի :

Չորրորդ ստութիւն Դաշանց թղթոյն : « Խառնիճադանէն բազմորիենք առհասարսկ , ոյք ի Սագաստան եւ ի Դեկմաստան , որք էք հաստատեալ ի հաստահեղոյս զաւազամն երկարի եւ ի խրոխտ եւ յանխնարհելի իշխանութիւնն չոռ մայեցոց » : Կոստանտիանոս կայսեր օրովք Հռոմէական կայսերութեան աշխարհացոյցը և գաւառներու ցուցակը քննելով՝ անոր արևելեանն սահմանածայրը Միջագետք և Վանայ ծովակը միայն կտեսնեմ , իսկ Ասդաստան , որով Յագկերտ սուրբ Վարդանանց կալառար , Եղիշէ . Եր. 80 , Պարսկաստանի Հիւսիսի կողմն էր , այսինքն Սոդոհաննի և Խորեզմի անդին , զորք Հռոմացեցիք երազի մէջ տնտամ չտեսան , թուղ թէ նուաճեցին : Սապէս կոստանտիանոսի օրովը տիեզերաց մէջ Դեկմաստան անունով երկիր չկար : Տասներորդ դարու մէջ միայն Դեկիմ (Դեկմաստան) գաւառը կը իշուի Բավահայի պատմառաւաք , որ Դեկիմնան ճոխութիւնը կանգնեց իրակ-Անձմի մէջ , որ և տեսեցաւ 932էն ց1056 , այսինքն Դաշանց թուղթը կեղծելէն քիչ մը յառաջ :

Հինգերորդ ստութիւն Դաշանց թղթոյն : « Տարեք ի կողման Աշորպառականաց եւ Արարաց » : Այս երկու աշուապհագրակոն ոնուններէս ստուգինը կին և ամենուն ծանօթ ըլլալով , Կոստանդիանոսի ատենը երբեմն Հայոց ձեռքին էր, երբեմն՝ Պարսիկ . երկրորդը, որ Խրակ-Աչեմին է, քիչ մը ուշագրութեան արժանի է : Խրակ անունը մինչև Սասանեանց կործանումը , որ է եօթնեւ երրորդ դարը՝ դեռ ծներ չէր, քանի որ Պարսիկ տէրութիւնը կոստուն էր : Այս անունս, որ երկիր առար կամ թիրտ կնշանակէ, Աշորպառոց գիւտ է, որոնք Պարսիկ անունը եւ տէրութիւնը ջնջելով՝ Խրակ Աչեմին եւ Խրակ Արարի անունները հարեցին Կոստանդիանոսէն գէթ 400 տարի ետքը : Բաց յայտմանէ Աքաղին, որոյ մայրաքաղաքն է Թիէրան, եւ միւս քաղաքները՝ Խափահան, Վենչան, Համաստան եւ Խոսգրին, երբէք Հռոմայեցոց իշխանութեան տակ ինկած չէ :

Վեցերորդ ստութիւն Դաշանց թղթոյն : « Խոկ ես (Կոստանդիանոս) զհաւարակ խաչամասին Քրիստոսի, զոր մայրն իմ (Հեղինէ) թերեալ էր ինձ եղան Երուսաղէմէ, հատեալ զայն ետու Տրդատաց » : Հայ պատմագիրերը, ինչպէս վերը տեսանը, Տրդատաց Հռոմ երթաղը 318 կամ 319 թուին կդնեն , Դաշանց թուղթն ալ կազմատէ, որ Կոստանդիանոս այն ատենը Տրդատին տուած Հեղինէի Երուսաղէմ գտած կենաց Փայտի մէկ մասը ; Մակայն այս գիւտս ; ինչպէս բոլոր Հայ, Հռոմայեցի և Յոյն պատմագիրերը կվկայեն , 326 ին եղաւ , այսինքն 9 տարի ետքը : Այս առաքինի թագուհիս Երուսաղէմի Ա. Գերեզմանի տաճարը շինել առւած ատենը ճշմարդիտխա-

շափայտը հանգերձ հինգ բևեռօք գտաւ Մակար պատրիարքի օրովը և Կոստանտիանոսի թագաւորութեան քսաներորդ տարեդարձին, խմա 326 թուին : Տե՛ս Կիւրզի Երուսաղէմացւոյ թուղթ առ Կոստանտիանոս։ Սուրբ Հեղինէ Խաչափայտի մէկ մասը Երուսաղէմ թողուց, մէկալը բևեռներուն հետ իր որդուն ուղարկեց, որ զանոնք (բևեռները) իր ձիոյ երաւանակին մէջը դնել տուաւ։ Արքա Ֆէօրի. Պատմութիւն Քրիստոնէութեան, հատոր Ա. եր. 452-453։ Խորենացի. Գիրք Բ. Ձի։ Ի՞նչպէս կրնայ ըլլալ որեմն, որ 326 թուին գտնուած Խաչափայտի մասը, 318 կամ 319 թուին Կոստանտիանոս Տրդատին կպարգևէ։

Եօթներորդ ստութիւն Դաշանց թղթոյն։ «Եւ զպարտորին իմ (Կոստանտիանոսի) յեզր Դանուրար գետոյն ճզօրի, և զերեւուն ի յերկնից աստեղանման խաչին եւ զիերենազիրն լուսեղէն թէ այսու յաղթեսցն»։ Մեծն Կստանտիանոս 306 թուին Բրիտանիոյ, Գաղղիոյ և Խսանիոյ զօրքէն կայսր հռչակեցաւ։ Ծին գետին քովերը Ֆուանգաց յաղթեց, զՄաքախմիանոս, իր աները, սպաննել տուաւ։ և 312ին Ալպեան շղթան անցնելով՝ Վերոնէ, Բրիսկիա, Տիւրին և Սիւտ բանակեալ Մաքսենտեայ դօրախումբերը ցրուելով՝ Հռոմ քաղաքի մօտերը լուսեղէն Խաչը աւեստաւ. որոյ արձանագիրն էր Իո հօս սիցո նուշես. այսու եղանաւ յաղթեսցն»։ Մաքսենտէ ալ Միւսիւսի կամուրճի մօտ Կոստանտիանոսէն յաղթուելով՝ Տիւրեր անկաւ և խոզուեցաւ։ Հին և նոր Հռոմայեցւոց և Ցունաց պատմիչները այսպէս գրեր են ու Եւրոպիոյ բոլոր Համալսարանները այսպէս կընդունին։ Կոստանտիանոս

այս ատենս ոչ Դանուբայր գետի քով պատերազմ՝ ըրեր  
է, ոչ յաղթուեր, ոչ ալ լուսեղին Խաչ տեսեր հան .  
ուստի Դաշանց թուղթը ևօթներորդ սուտը կխօսի :  
Հռոմէական և Յունական պատմիչները մեծին Կոս-  
տանտիանոսի մէկ պատերազմը կպատմեն Դանուբ դե-  
տի ափերը Գոթաց, Վանդալաց և Սարմատացւոց հետ,  
ուր նախ սրարտեցաւ և ապս յաղթեց . սակայն այս ճա-  
կառու. 331 ին տեղի ունեցաւ, այսինքն լուսեղին Խաչի  
երևնալէն և Տրդատայ հետ դաշնք դնելէն 12-20 տարի  
ետքը, որ և Դաշանց թուղթի ութերորդ ստութեանը  
ապացոյց է :

Իններորդ ստութիւն Դաշանց թղթոյն : « Դիմադարձ  
եղէ (Կոստանտիանոս) քրիստոնէսկան հաւատոյ . մողեկան  
պատերազմ յարոցի, զի զօրն իմ կոտորեցի, որք հաւա-  
տացեալք էին ի Քրիստոս » : Լուսեղին Խաչի երևնալէն  
կամ 312 թուականէն ետքը Կոստանտիանոս միշտ  
քրիստոնէից պաշտպան եղաւ, երբէք զանոնք չհալածեց .  
ոչ ալ իր քրիստոնէայ զօրքը կոտորեց, որուն իմ ճանա-  
շած 20-25 պատմազիրերն միաձայն կվկայեն : Ատոյգ է,  
որ Հռոմայի կայսերաց մէջ չկայ մեծին Կոստանտիանոսի  
նման անձմը, որոյ առաքինութիւնները և մոլութիւն-  
ները, հին և նոր մատենագիրներէն այնչափ և այնպէս  
գովուին ու պարսաւուին, ինչպէս ասորը . սակայն ան-  
տարակուսելի կմնայ, որ լուսեղին Խաչի երևնալէն յե-  
տոյ Կոստանտիանոս կամ ներքին համոզմամբ կամ քա-  
դաքական եկատմամբ միշտ քրիստոնէութեան պաշտպան  
կեցաւ : Ուստի Դաշանց թուղթը իններորդ անգամ  
սուտ կխօսի :

Տաաներորդ ստութիւն Դաշանց թղթոյն : « Հուսա-  
որեալ քժկեաց զմեզ (զկոստանտիանոս) սուրբն Սեղբե-  
տրոս . և հաստատեաց զմեզ ի հաւատու ճշմարիսու » : Դա-  
շանց թուղթը միայն չէ , որ այս սխալ կարծիքս ունի  
կոստանտիանոսի Սեղբեստրոս պատվի ձեռամբ գարձի  
գալուն և մկրտուելուն վրայով . հիներէն ոմանք ալ ,  
որոցմէ անցեր է նաև մերայնոց : Այս բարեպաշտական  
խարէութեան գտիշը ընդհանրապէս սուստ խսիրդի դեկ-  
րետայները կհամարուին , որ ոչ միայն կպնդէին թէ Սեղ-  
բեստրոս զկոստանտիանոս ի բորսութենէ բժշկեց  
մկրտութեամբ , այլ նաև անորմէ ստացաւ Հռոմ քաղաքի  
և Խտալիոյ երկրաւոր իշխանութիւնը , զոր Լաւրենտ  
Վալբայ անհերքելի փաստերով սյնպէս ջրեց մինչեւ պա-  
պի աշխարհական իշխանութեամն անկեղծ կուսակիցներն  
անգամ համոզուեցան ու խոտեցին իրենց անհրմն կպր-  
ծիքը : Այժմ բոլոր Հռոմէական Համալսարանները ,  
Ճեմարանները , Սեմիներները , Աստուածաբանները ,  
եկեղեցական սլաստիչները , Պիոս Թ. Սրբազն Պապէն  
և Պարիսի Սօրբոնէն սկսեալ , Գաղղիացի , Գերմանա-  
ցի , Անգղիացի , Իսպանիացի , Փորթուգալցի , Խտա-  
լացի , Ամերիգացի , Լեհացի , Հունգարացի , Բելգիացի  
և այլ Հռոմէականները միաձայն կընդունին իրեւ ինքնա-  
յայտ և անդիմադրելի ճշմարտութիւն , թէ մեծն կրտսան-  
տիանու Սեղբեստրոս Պապէն ոչ շուստորուեր է , ոչ մկր-  
տուեր , հասպա Նիկոմիդիոյ Եւսեբիոս եպիսկոպոսէն իր  
մահուան ատենը , ի 27 Մայիսի 337 թուականին . որուն  
կվկայէ նաև Արքա Ֆեօրի Քրիստոնէութեան Պատ-  
մութեան անուանի հեղինակը , Հատոր 1 , եր . 478. ին-

Նովկենտիոս Ուռւս վարդապետը՝ իր շինած Եկեղեցւոյ  
Պատմութեան, Հատ. 1, էր. 144-145, և այլ հարիւ-  
րաւոր ականաւոր մատենագիրք : Այս պարագաս,  
որոյ վերայ տասը տարի յառաջ մեծահաւատ Ամիրայի  
մը հետ առարկութիւն ունեցանք, մեզ կարևոր երևցաւ  
ակն յանդիման ապացուցանել, որպէս զի մեր հակառա-  
կորդները աղէկ համոգուին թէ մեր առած տեղեկու-  
թիւնները, այսպիսի խնդրոց վրայով, Բէքէքի կամ  
Ղարաբիոյ աղբիւսներէն ժողուած չեն . այլ այն աղբիւր-  
ներէն, զորս Հռոմէական Համալսարանները և Սօրբանը  
իրեւ միմիայն ճշմարիտ կընդունին . մեր խօսքն ալ այն  
Հայերու համար չէ, որոնք Պիոս Թո. էն կամ բուն Հռո-  
մէականներէն աւելի Հռոմէական կուզեն ձևանալ . այլ  
այն ազգայնոց համար, որոնք պատմութեան մէջ ճշնար-  
տուրիւն միայն կինոտեն, և քրիստոնէութեան մէջ՝ ուղ-  
ղորիւն, վերանորոգուրիւն ու կառաքերուրիւն մարդոց :  
Ուրիշն Դաշանց թուղթը ասաներորդ սուտը կիսօփի :

Մետասաներորդ ստութիւն Դաշանց թղթոյն : « Եւ  
ես (Աեղքեսորոս) յօժմարեցայ ի պատուել զմեծ խոռոչիւ-  
նողն վրիստուփի, զգահակիցս իմ զԳրիգորիոս . . . և ձեռնա-  
պեցաք զկարողիկուն Հայոց գտարբի Գրիգոր պապ,  
պատրիարք և հայրապետ » : Տէր Կաթողիկոսը Դաշանց  
թուղթի մէջ մեր Լուսաւորչին տրուած քանի մը տղա-  
յական գովաբանութիւններ կարդալով, Ճամբաղի. երես  
256՝ կզմայլի և կյափշտակուի, և զորս անոր հաստատու-  
թեանը իրեւ խարիօփս կընդունի, մոռնալով տեսնել  
կամ կշռել անկէ ետքը եկող այս խոշոր սուտս, զոր եթէ  
ընդունիմք, կապարտաւորիմք մեր կաթողիկոսները Հռոմ

ուղարկել միշտ ձեռնադրութիւն առնելըց համար ու մեր  
ազատ Քահանայապետութիւնը Հոռմայ փառամոլ կարդի-  
նալներու ժառայական բուժի տակը դնել : Գովասանքը  
փառամոլներու փափուկ նեարդերը խտղնելու մոգա-  
կան զօրութիւնն ունեցեր են միշտ : Ականատոր մարդոցմէ  
անգամ շատ սակաւ անձինք այս տեսակ տկարութ ենէ  
ազատ գտնուեցան , որոցմէ մէկն է մեր անհամեմատ  
Լուսաւորիչը . երանի թէ անոր յաջորդներն ալ անոր  
անշքութեան և համեստութեան օրինակին հետեւին :

Դաշանց թուղթի շռայլաբանութիւնը , որ կուտակու-  
թեամբ նոյնանշան բառից , թանձրամիտներու առջե-  
ղատ վաստկել կուղէ , ինչպէս եմէ Յիսուսեան գիտուն-  
ներէն մէկն ալ գաղղիերէն , անգվիերէն , ռուսերէն ,  
գերմաներէն , հայերէն , պարսկերէն , վրացերէն և տաճ-  
կերէն հայի անունը փէն , բրոդ , խլեր , բրոդ , նազ , նաև ,  
պուրի , էքմէկ հնչեցնելով օդը ալեկոծէր իր ճարտառա-  
նութիւնը ազնուական ամիրաներուն ցոյց տալոյ համար:  
Ասոր պէս ալ պապ , պատրիարք , կարողիկոս , հայրապետ  
լառերը , թէև այլ և այլ լեզուներով գրուած , ամենն  
ալ սակայն հայրապետ կնշանակեն՝ ոչ աւելի , ոչ պակաս :  
Այս աստիճանս ալ մեր Լուսաւորիչը Հռոմ գնալէն յա-  
դաջ բովանդակապէս առեր էր և ունէր ըստ միաբան  
վկայութեան մեր բոլոր պատմագիրներուն : Կարդամ Ագա-  
թանգեղոս . եր. 19 , 592 , 596 , 613 , 634 , 639 . Բիւ-  
ղանդարան . եր. 6 , որ զմեր Լուսաւորիչը , Հռոմ գնալէն  
յառաջ , կիոչէ մեծ քահանայապէտ , եպիսկոպոսանպէտ .  
որ իր Գրիգորիս թոռը . եր. 10 , Վրաց և Աղվանից  
կաթողիկոս կծեռնադրէ . Յովհաննէս կաթողիկոս . եր.

26. Ասողիկ, երես 63. Մովսէս Կաղանկայտուացի,  
հատ. Ա. եր. 99. Ստեփաննոս Օքբէլեան, հատ. Ա.  
երես 63. և այլն :

Արդ եթէ մեր Լուսաւորիչը Քահանայապետութեան  
լրութիւնը ստացեր էր Ղևոնդէն, այնուհետեւ ի՞նչ հարկ  
կար, որ նորէն Սեղբեստրոսի առջեւը ծունը դնէր ու  
վերստին ստանար յառաջմէ ստացածը. մի՞ գուցէ իր,  
ցայն վսյր ունեցածը, թերի էր, մի՞ գուցէ Հոգոյն Արք-  
ոյ պարզեները վերստին տալու կամ ետ առնելու ամ-  
բարիշտ մոլորութիւնը մեր եկեղեցւոյ հիմնադիրները  
ունեցեր են. ինձ քաւ լիցի այսպէս խորհիլ: Կտեսնէ՞  
Սրբազան Կաթողիկոսը, թէ խայտառակ Դաշանց  
թուղթը ո՛րավիսի մոլորութեան խորխորատներ կճգէ իր  
ընդունողները: Սրբազան Կաթողիկոսը կընդունի՞ Լու-  
սաւորչի Հռոմ վերստին ձեռնադրուիլը. եթէ կընդունի,  
ո՞չ ապաքէն ինքն ալ կապարտաւորի Հռոմէն իր ձեռնա-  
դրութիւնը ստանալ. եթէ չընդունիր, ուրեմն Դաշանց  
թուղթը սուտ կը խօսի. այն կամ ոչ պատասխան մը իր  
Սրբութեան կողմէն մեզ խորհելու և գրելու շատ նիսթ  
կպատրաստէ:

Երկուտասաներորդ ստութիւն Դաշանց թղթոյն: «Եւ  
արարաք զատ պատրիարք Հայոց մեծաց. զի ինքն և ամեն-  
նայն արռուածառանգք սորտ ինքնազրուի եղիցին յիւրեանց  
եպիսկոպոսացն առնելով ձեռնադրութիւն»: Եթէ այսպիսի  
դաշինք մը, ըստ Սրբազան Կաթողիկոսին անժխտելի երդ-  
մամբ դրաած բլլար Ա. Լուսաւորչի և Ա. Սեղբեստրոսի  
մէջ, Ա. Լուսաւորիչը, ուխտազանց չըլալու համար,  
կը պարտաւորէր իր յաջորդները ինքը կամ մեր եպիսկո-

պոսները ձեռնադրել . այլ մեր սլատոմագիրները , այս-  
ինքն , Խորենացին , Յովհաննէս Կաթողիկոս , Ասողիկ ,  
Կիրակոս , Վարդան , Մովսէս Կազմնկայտուացին ,  
Ստեփաննոս Յորէլեան , միով բանիւ , ամենը միարան-  
կվացեն , որ Լուսաւորչի որդիքը , թոռները և այլ յա-  
շորդները՝ Արիստակէս , Վրդանէս , Յուսիկ , Փառներ-  
ուէս ; Շահակ , Մեծն Ներսէս , ամենն ալ ըստ առաջ-  
նոյ կարգին կենարիա առին հայրապետութեան ձեռնա-  
դրութիւնը : Տես Յովհաննէս Կաթողիկոս , երես 31 :

Այս աղ այնպիսի դաշինքի մը զօրութեամբ , որ Լուսա-  
ւորչի և Ղեռեղի մէջ , Տրդատայ Հոռմ գնալէն յառաջ ,  
դրուած էր : «Եւ հատառաւեաջ կացցէ վեպութիւն իմէջ երկուց  
կորինանցու , զի պարզեարաշխութիւն նորոգեալ քահանացա-  
պետութեանդ մերայդ նահանգիդ առ ի մէնջ կացցէ անշարժ  
յեկեղեցւոց կենարու » . Ագաթանգեղոս , եր . 613-614 :

Երեքտասաներորդ ստութիւն Դաշանց թղթոյն :

«Պարզեցի և սիրելի եղրօնու իմոյ Տրդատայ դսիրեցեազն  
իմ զբերդեհէմ , քարաք մեծի Դաւրի , զտեղի մենդեան  
Քրիստոսի իսրայ կունէն : Պարզեցի նորապատ Պարքեխու  
մերոյ յիշատակ յախտեական ազգաց յազգս ի յԵրուաղէմ  
քաղաքի իջևուն Հայոց աղօրականացն գլկայարանն սրբոյն  
Յակոբայ . . . » : Քրիստոսի հինգերորդ դարէն յառաջ ,  
այսինքն՝ քանի որ Հայոց Յունաց և Լատինաց եկեղե-  
ցիները իրարմէ բաժնուած չէին , տնօրինական տեղիքը  
հասարակաց էին : Երուսաղէմի մէջ մէկ պատրիարք միայն  
կար , ամեն կաւտտացեալք իրենց ուխտը ու աղօթքը ամեն  
եկեղեցցի մէջ անխտիր կկատարէին : Եթէ կոստան-  
տիանոս Բեթղեհէմ քաղաքը կամ Ա. Յակոբայ վանը

Հայոց տոռած ըրբար, այս եղելութիւնը մեր կամ այլազգի սլատմագիրներէն գոնէ մէկը կյշէր։ Առդ ոչ միայն ասանկ քան մը մեր կամսնեացմէ յիշող չկայ, այլ նուև ոչ 1835 թուին Աւենետիկ տպառած Հնահրապարթին։ Հնահրապարթեան Հայոտառանի Բ. Հաստիր, երես 199-201, Տրդառոց ու Լուսաւորչի առենը Երտառադէմ Հայոցն շխտած 70 վաճառէից ցանկին մէջ, զար շինողը։ Ագաթանգեղեայ պատմութենէն հանեցեամ, կըսէ, ոչ բնեթ կեղէմի Հայոց ըլլալը ելիշէ, ոչ աղ հոն գոնէ մաստումը ունենալին։ Ա. Յակորայ մերը շլլալն աղ կահճար կէ. թէև այս ցանկս շինողն աղ եօթներորդ դարէն ետքը կեցած կերպէ Մահմէտականները յաճախ յիշելուն համար։ Այսպէս է նուև կամանկայութացմն, որ հաստիր Ա. եր. 220-224, Երուսաղէմ եղած Հայոց և Աղլանից եկեղեցիքը, Անածուասայ առ Ա ահրամ Մամիկոնեան գրած նամակէն քաղերով կթուէ, Բեթկեղէմ և Սուրբ Յակոբ մերը ըլլալը ամենեկին չիշեր, որ անշուշտ զանց առնելու չէր, եթէ ուստի Պաշտօն թղթի լուսածը իրաւողար։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Եթէ ուզէինք այս խայտառակ Պաշանց թուղթը մանրանամնաբար, քննել ու դատել, կպարտաւորէինք Ռու և Շոււծի չափ գիրք մը գրել, զոր այժմ ոչ ժամանակ անիմնք, ոչ կամք։ Եթէ Ա եհամիսու կաթողիկոսը գրած-

նին կղաղղիք . ասպա թէ ոչ նոր քննագնառութիւն մը հրատարակել կապարտաւորփամք , որուն մէջ , ոչ թէ այս պէս հարևանցի քննելու դիտաւորութիւն ունիմք , այլ բառ առ բառ և տող առ տող , որաքչս զիմեր ազգը արթը ըննայ . ու այսավախ փառտած և յիմարական պատրանքի հետևանքը կշռելով սթափի : Եթէ ժամանակի բերմունքը զմեզ այլ բարիքէ զրկեցին , գոնէ խորհեցյ , խօսելոյ և գրեցյ ազգառութեան պատեհութիւնը լրիւ ընձեռեցին , յորմէ զուրկ են Ա . Էջմիածնի մեր կարգակից եղարքը , որոց ձայնը վանքի պարտավին մէջ դիմաւ կիսպդուի :

Հնասիրութեան մասին ոչ կաթողիկոսէ , ոչ ամիրայէ դաս առնելու պէտք չունիմ : Պաշանց գիրը , որ հնութեան անուն և երեսյթ միայն ունի , իրօք նոր է , և խարդախ ու ամենելին անընդունելի և վլաստակար մեր ազգային լրութեանը եթէ հոգևորապէս , եթէ բարդյա պէս ; « Այս սիրոյ և միաբանութեան դաշին » զօրութեամբն էր , որ Տրդատէն ետև մեր ազգը գնալով գնաց՝ տկարացաւ և աղքատացաւ . այս տիրոց և միաբանութեան դաշին զօրութեամբն էր , որ մեր Արշակունի , երբեմն Արևմբատեան Ամիոյ ինքնակալ տէրերը , կոստանտիանոսէն և Տրդատէն ետև , սոսկական գործակալի անուն առին կոստանտիանոսի յաջմրդաց մէկէն , այսինքն խենէշ Յուլիանոսէն . Խորենացի , Գ . Գ . Գլ . ԺԵ . որ մեր Պապ և Վարազդատ թագաւորները անարգաբար կոստանտուալիս տարուելով՝ մէկը գլխատուեցաւ , միւսը Թուղիս կղզին աքսորուեցաւ . Խորեն . Գ . Գ . Գլ . ԼԹ . և Խ . : Մէկդի թողումք Հոռոմոց կայսերաց գոռողու-

թեան, նենգութեան, շահասիրութեան և մատնութեան պժգալի օրինակները, որովք Հայոց ազատութիւնը, բարօրութիւնը և մառքը աղաքատեցին իրենց փառամղութիւնը և եսականութիւնը յագեցնելու համար:

Կնքեմք քննադատութիւնս ըսելով, որ մեր կողմէն Արշակ, Տիրան և Պապ Թագաւորները, Բարգէն, Մովսէս, Արրաջամ և Ներսէս կաթողիկոսները, և Յունաց կողմէն Յորիանոս, Արկադ, Մարկիանոս և այլ կայսերք կոստանտինոսի և Տրդատայ 319 թուխն դրած սիրոյ և միարանութեան յաւիտենական դաշինքը, 362 ին, 387 ին, 451 ին, 492 ին և 552 ին հրապարակաւ և ազգային ժողովով պատռեցին և ոչնչացուցին, ինչպէս Սերաստապօլի առումը պատռեց և եղծեց այն ամեն դաշինքը, զորս Ոուսք և Թիւրքք, անկէ յառաջ, իրարու հետ զբեր էին: Ըստ որում Արկադ, Յորիանոս և Մարկիանոս վատութեամբ յանձն առին քրիստոնեայ Հայաստանի մեծագոյն մասը անաստուած Պարսից տալ որպէս զի իրենք անոր փոքրագոյն մասի ուսկին ու արիւնը անվրդով ծծեն. Խորենացի Գ. Գ. Գ. Խ. Որով մեր տէրութիւնը կործանեցաւ և մեր աղքը սաստիկ աղէտից մատնուեցաւ: Այսուհետեւ ի՞նչ օգուտ այսպիսի ծրուտ, փուտեալ, փոշիացեալ և խարդախեալ դաշնագիր մը շատագվել, զոր ոչ Մըրբազան կաթողիկոսը կենդանացնելոյ կարողութիւն ունի, ոչ ալ անոր կենդանի ատենը Հայոց բարօրութիւն բերաւ. Դաշնագիր մը, որ հզօրին և ակարին հաւասարապէս ամօթ կրերէ: Եթէ մերժեմք զայն, ի՞նչ վնաս կգործենիք. եթէ ընդունիմք զայն, ի՞նչ շահ կքաղեմք անկէ:

Վեհափառ կաթողիկոսը գիտէ , որ Փրկիչը խստիւ  
արգիլեր է գայթակղութիւն տալ հաւատացելոցմէ նաև  
փոքրագունին : Այսաստա , որ ազգաւ Հայ եմ , հաւատով  
քրիստոնեայ , և աստիճանաւ՝ վարդապետ եկեղեցւոյ ,  
յիրաւի գայթակղեր եմ տեսնելով , որ մեր եկեղեցւոյ  
գլուխը փոխանակ ամեն Հայոց ուշադրութիւնը դէպ ի  
Լուսաւորչի աթոռը ուղղելու , փոխանակ մերայնոց  
աիրտը և հոգին դէպ ի Հայաստան քաշելու և Արարա-  
տայ ուղը , փոխանակ ազգայնութեան ոգին արծար-  
ծելու և զօրացունելու , ինքն է , որ աղճատաբան Դա-  
շանց թուղթի մը պաշտպան հանդիսանալով՝ մեր ազգի  
հայեցուածքը դէպ ի Հոռմ կղարձունէ , Հայոց ոգին  
և զգացմունքը Հայաստան հրաւիրելու տեղ , Հոռմ  
կողդէ մեր պանծալի Առաքեալը հոն ուղարկելով , Հոռ-  
մայ պրայէն կարողիկաւական ձեռնադրութիւն , հոգեւոր  
իրաւաբանութիւն , կապերյ և արձակելոյ հեղինակութիւն  
առնել տարով : Մտոյդ է , որ Քրիստոսի այլ և այլ եկեղե-  
ցեաց մէջ հսկատոյ միաբանութեան խնդիրը նախանձելի  
խնդիր մըն է . ասոր ալ եթէ հինգ միլիոն Հայոց մէջ  
հինգ ցանկացողք կան , անոնցմէ մէկն ալ ես եմ . բայց  
իմ ուզածս ազատ քենութեամբ , պիտաքարձ և իրաւացի  
զիշմանք միաբանութիւն մըն է էսկան հաւատութեաց մէջ՝  
իրագուն չիր եկեղեցի իր ինքնիշխան քահանայապետու-  
թիւնը , ժէսը , փարուսավետութիւնը , կարցը , աւանդութիւնը ,  
արարողութիւնը , լեզուն և ասուած պաշտութիւնը անիսախտ  
պահելու պայմանաւ , և ոչ թէ կուրօնէն հպատակարիւն ,  
ինչպէս այլք մեզմէ կրահանջեն :

Թողումք առ այժմ՝ այլաղաւան և հեռաւոր եկեղեց :

եաց հետ միաբանելու խնդիրը . դառնամք մեր ազգի նորոգութեան պայմաններուն : Երեք խնդիր մեզ առ այժմ՝ ամենակարևոր կերպին . այսինքն նախ՝ շանք մեր եկեղեցւոյ հետ միաբանել մեզմէ բաժնուած Հոռոմէականուրեան , Յունականուրեան և Բոդրքականուրեան ազգային ձիւղերը : Եցրկրուդ՝ ազգք գրաւոր և հաստատ օրէնքով բարեկարգեց և վարելոյ շանք : Եցրորդ՝ մեր ազգի մէջ ուսումքն , արուեան և ազգայնուրեան ոգի գարքեցնելոյ և ճաւայելոյ փոյք :

Առաջին առաջադրութիւն : Ոմանցմէ լսուած է , որ մեր ազգը և եկեղեցին սակաւաթիւ ըլլալով՝ մեծ ազգի և եկեղեցւոյ մը պատուաստելու է , որ ծաղկի և զօրանայ : Ըստ մեզ , ազգի մը բազմաւորութեան կամ՝ սակաւաւորութեան խնդիրը երկրորդական է , առաջին և էականը ըլլալով անոր անդամոց իրարու հետ ունեցած յօդակապուրեան սկրտուրիւնը : Թերմոպիլի , Մարաթօնի , Սաղամինի , Արրելի , Վարդանակերտի և Պէրինի ճակատներու նկարագիրը կարդացողը կտեսնէ , որ երբեմն 1,000 , 2,000 , 4,000 , 10,000 զօրականք 10,000 , 50,000 և մինչև 400,000 զինուորաց դիմագրաւ եղան և յաղթեցին : Մարդ ամենուքեք մարդ է . մի մարդը միշտ մի մարդ արժէ . քիչի շատին յաղթելու , շատի քիչէն յաղթուելու գաղրոնիքը իւրաքանչիւր ազգի հրահանգի , դաստիարակութեան և կրօնական սկզբանց մէջն է . քնական իրաց մէջ ալ նոյնը կտեսնուի , որ ինչ բարոյական աշխարհի մէջ : Ամեն մարդ գիտէ որ ցեխի շաղախը կամ ծեփը կիրէն տկար է , որ փայտեաց բևեռը մետաղէն ապիկար է , որ հողէ շնչը քարեաց կամ կճեաց շնչքէն

սակաւատեէ : Եթէ 2,000 Հայեր Վարդանակերտ 4,000  
Արաբաց յաղթեցին, վասն զի այն 2,000ը մէկ հոգւով և  
մէկ ղգացմամբ պատերազմեցան, վասն զի այն 2,000 հո-  
գին իրեւ մի անձն և մէկ նպատակի համար կոռուցան :  
Երևելի մարմինը դոյզն ինչ է, կարևորը հոգին է, հոգ-  
ւոյ կեանքն ալ կրօնական, բարոյական և քաղաքական  
ճշմարտութիւններն են կամ ուսումն և դաստիարակու-  
թիւն : Մեր բանասէրներէն մէկը երբեմն գրեց, որ կրօնն  
ու լեզուն ազգաց միաբանելու արգելք եղան . մեք ալ  
կանդեմք, որ առանց կրօնի և լեզուի ոչ ազգ կայ, ոչ ժողո-  
վորդ . և եթէ ազգ և ժողովուրդ կան, վասն զի կրօն մը  
և լեզու մը ընդունեցին . առանց լեզուի և կրօնի անհատ-  
ներ կան և ոչ թէ ազգ . մարդկեղէն անհատները իրարու-  
կասովը և ազդութիւն կազմող շաղախը կրօնն է, ինչ-  
պէս կիրը հոյսկապ տաճարաց քարերուն :

Քրիստոնէական կրօնը, որ իրեւ յաւիտենական ճշ-  
մարտութիւն Աղամայ հետմարդկային ազգին տրուեցաւ  
մեր հայրենի երկիրը, որ մարդարէից սպասաւորութեամբ  
զարդացաւ և Յիսուսի Քրիստոսի միջնորդութեամբ կա-  
տարելագործեցաւ, մի է անտարակոյս և անփոփոխ, ինչ  
կերպարան որ առնու, և ո՞ր կիմնայի տակ որ բարդաւաճի :  
Քրիստոնէական կրօնի արմատը մի է միշտ, որ է Քրիս-  
տոս Աստուած . այլ և այլ ազգաց կամ աշխարհաց  
եկեղեցիքը ծառի մը այլ և այլ ոստերուն կնմանին,  
որոյ բումը որքան աճէ, այնքան ալ անոր ոստերը կտա-  
րածին ու իրարմէ կհեռանան : Սյս ոստերու իրարմէ հե-  
ռանալը արտաքին է, ռամկաց համար է . անոնց ներքին  
միաբանութիւնը ի ձեռն արմատոյն և լունին անփոփոխ:

կմնայ միշտ բաց ի անոնցմէ , որոնք մարդկային խարէութիւններով թիւնաւորած կգօսանան ու բունէն զատուելով կմեռնին :

Հայաստանեայց սուրբ եկեղեցին այն հին ոստերէն մէկն է , որ Երուսաղէմին եկած Առաքելոց մշակութեամբը Փրիստոնէութեան բունին վերայ բուսաւ , ու ի սկզբանէ մինչև ցայսօր աստուածային ճշմարտութեան անապակ և կենդանարար աղրիւրէն ոռոգուելով՝ միշտ կենդանի մնաց : Հայոց Եկեղեցին Երուսաղէմի Սիոնի գուստը է և ոչ թէ Հռոմայ Ա . Պետրոսի կամ Կոստանտնուպոլիսի Առարք Խմաստութեան : Ամեն ազգաց և աշխարհաց եկեղեցիք իրարու քորք են , ամենքն ալ Երուսաղէմի գտները են և մէկը մէկալին ծնող և մայր ըստելու իրաւունք չունի , եթէ ոչ երկրորդական առմամբ : Այլ եկեղեցիք գնալով գնացին և բաղմացան , շատերն ալ մեռան , մերինն ալ առաջ բաղմածին , յետոյ անզաւակացաւ : Նախախնամութեան գաղտնիքը , իրքև հոգետես , գիտելու արժանաւորութիւնը չունենալով՝ մարդկորէն այսչափ ինչ կըսեմ . քանի որ Փրիստոսի Հոգին Լուսաւորչի , Գրիգորիսի , Վրդանիսի , Արիստակիսի , Մեծին Ներսիսի , Սահակայ , Մեսրոպայ , Ղեղնդեանց , Օձնեցիի , Շնորհալիի , Խարայէլի և այլ հաւասարիմ մշակաց բերնով Հայոց խօսեցաւ , մեր եկեղեցին ալօր ըստ օրէ ընդարձակեցաւ : Վրացիք , Աղվանք , Ծողէք , Ճիղք , Ծանարք , Ասորիք , Լիփնիք , Հոնք և Ատրապատականիք մեր եկեղեցիէն ընկալան Աւետարանի լոյսը , երկարածեն մեր եկեղեցիէն , իրքև գթոտ մօր ստինքէ , ծծեցին կենաց բունի փրկարար կոսթը :

Եկաւ վերջապէս փորձութեան վայրկեանը : Մեր Եկեւ զեցին , որ երբեմն մինչև Նիւշապուհ արևապաշտութեան վերայ յաղթանակ կանգնեց , մահմէտակամութեան և հերձուածոց կատաղութեամբ բորբոքեալ բովի մէջ փորձեցաւ . իր դատերաց շատերը իրմէ գատուեցան . ոմանք այլ եկեղեցեաց յարեցան . կէսք Արտիոյ Մարտարէիմողրութիւնը գրկեցին : Այս փորձութեան ատենը թէե Քրիստոնէութեան գրաւը , որ է ուղրավառ հաւառքը , անկողոպտելի մնաց մեր եկեղեցւոյ մէջ , այլ Թաղդէռափ , Լուսառդչի , Գրիգորիոփ , և Արիատակիսի հօգին , որ է կեանքը մահու տալով Քրիստոնէութիւնը քարոզել առաջի թագաւորաց , իշխանաց և ժողովրդոց , վերացան մեր պաշտօնեայներէն . և Ապհակայ և Մեարտրայ գործը , որ էր կղերի և ժողովրդեան մէջ համանգամայն ի ձեռն ուսման լուսաւորութիւն արմատացնել , մոռցուեցան :

Անկէ մինչե ցայսօր , այս երկու նորոգիչ և կենաւատու սկզբունքս տեղի տալով , կարծես թէ , մերայնոց վերայ տեսակ մը ապշութիւն տիրեց , ինչպէս ձմեռուան սառը կանաչապարթ դարաստանի մը վերայ : Կենգանարար Ա . Հոգւայ տածող սիրոյն յաջորդեց տեսակ մը թմբրեցացիչ պաղութիւն : Հայութեան բարոյական և քաղաքական շէնքը խախտիլ սկսաւ . հայրենեաց , միտութեան , ազգութեան , միանկրօնութեան սկզբունքը և զգացմունքը գնալով գնացին և քայբայեցան . Քրիստոսի վում , նորոգող , կենագործող վարդապէտութիւնքը անկարող առաջնորդ մնացին . ժողովրդեան սիրտը խոպանացաւ . հասարակաց բարիքը , բարսյական տուաբինութիւնքը մնացուեցան . ամեն անհատ իր

անձին շահը սկսաւ մոռմասալ, բատէհաճոյից անձին գնապ :  
Հովհաններն, որ օրինաց պաշտօնեայ էին յառաջ, այնու  
հետեւ օրինաց տէր եղան . միտք, հոգիք, սիրտք փոքրկա-  
ցան, նուաստացան . հեզ և մարդասէր Քրիստոսի բա-  
րոյականը մարդիկ ուղղելու անբաւական սեպուելով,  
աքար, բանտ, կապանք, տուքանք և ծեծ եկեղեցւոյ  
շեմէն ներս մտան. ու հօտսպետերչ ափուսալի տկարու-  
թեամբ նզովքի և բանադրանքի շանթեր տեղալ սկսան  
Բարգէն և Արքահամ կաթողիկոսներէն ակսեալ մինչեւ  
1846 թիւը այլախորհ Հայոց վրայ . իւրաքանչիւր նզովք  
մեզմէ մեզմէկ ամբողջ ազգ և խումբ զատեց . որչափ  
բանադրանքը գայրացաւ, այնչափ ալ մեր ազգի թիւը  
պակսեցաւ :

Քրիստոսի և Լուսաւորչի արեամբ և բրտինքով հա-  
մահաւաքեալ, եղրայրացեալ ժողովուրդերն և ազգերը  
խօթամիտ և ապաշնորհ առաջնորդաց ձեռքով այսալիս  
և այսքան յօշտոեցան, պատակտեցան և յրաւեցան,  
այնպիսի առաջնորդաց ասեմ, որ իրենց մեծ հաւատ-  
քովն, ու ձիւնափայլ սրբութեամբը մլուկ մը չկրցան  
ստեղծել, բայց, կինդ հազար, քանի հազար և հարիւր  
հազար Քրիստոսի արեամբ գնեալ Հայեր հոհուալով  
բանադրեցին և հոգեոր մահու դատապարտեցին, շնոր-  
մարտարապետի գործը թողով, ազգաւեր քակօղի գործ  
գործեցին . որպէս զի այս կամ այն շամիտ Ամիրայի հա-  
ճոյ ըլլան և ուամկէն գովուին :

Արդ թէպետեւ հին մարդոյ ապականեալ կիրքէն, գեռ  
ոմանց միտքը խորվեալ և տեսութիւնը միգապատ, եղ-  
բայր եղբօրմէ, հոյր յորդւայ, մայր իդստերէ բաժնուած,

իրարու դէմ՝ կասկած՝, ատելութիւն, վրէժ կշնչեն, իւրենց ձեռօք իրենց ազգութիւնը և պարծանքը աւրելով օտարին կյարին. այլ մի՞թէ կարելի չէ այս կորստական, լարձուն դառվայրի վերայ վայրկեան մը կանգ առնուլ, աշուշնիս դէպ ի անցեալը դարձունել, տեսնել և կշուլ ազգայնութեան շէնքի այն տխուր միլատակները, զոր մեր մեր ձեռօք ըրինք, և ամաչելով ու սոսկալով այսականի ոճագործութեան վերայ, միտք բերեմք կենարարի անսուտ բանը «Ամենայն բազաւորութիւն և սուն բաժանեալ յանձն կործանի և աւերի.» և այս աղէտալի հետեւանացը վերայ խորհելով՝ յօժարիմք անգամ մի, գոնէ իրու ի Քրիստոս ծնեսղնոր արարածներ, իրու Հայկաց որդիք իրարու ձեռք երկնցունել, զիրար եղբայրաբար ողջունել և ատելութեան նիւթը Քրիստոսի հոգւովը, Քրիստոսի սիրովը քննել և պարզել:

Դիցուք թէ մեր հովիւները այնպէս թմբքեցան, որ պատառող գայլերու իւնց փարախի մէջ մանելը առաջուրնէ շիմանալով, ապա ոչխարաց գիշատման կակիծէն սթափելով, փոխանակ տիրասէր ու հաւատարիմ շանց պէս, գողի և գայլի վերայ յարձակելով, իրենց կեանքը հօտի վերայ դնելով զթշնամին փարախէն վանելու, անոնք, աւաղ, վիրաւոր ոչխարները պահանջու և բժըշկելու տեղ, զնոսա ևս գոզերու հետ մէկ տեղ փարախէն անիծիւք դուրս վանեցին. այլ մի՞թէ այսօրուան օրս հինգ միլիոն Հայոց մէջ հինգ անկեղծ, հաւատարիմ և Քրիստոսի արեամբ ներկեալ եկելեցական կամ աշխարհական, կենցաղագէտ, հեռատես և եղբայրաբէր անձինք չկան, որ այսպիսի պատառուածի աղէտալի հետեւանաց

վերայ խորհրդածելով՝ անոր դարման մը տանելու և  
կարկատելու հնար գտնեն : Ամեն բերդ, որչափ ալ  
անառիկ կարծուի, առնուելու համար շինուած է, ըստ  
երեւի զօրավարներէն մէկը . ամեն բաժանմանց միա-  
բանութեան ճար կայ, ասեմք և մեր, միայն թէ, միաբա-  
նութեան մշակները եսականութիւնը մէկդի դնեն :

Մի՞թէ Հայք, Յոյնք և Լատինք Փրիստոսի գերեզ-  
մանի և Ծննդեան միևնույն եկեղեցւոյ և մի և նոյն սեղանի  
վերայ աստո ածպաշտութիւն և պատուրագ մատուցա-  
նելով հերձուածող և չարափառ են . մի՞թէ Լուսաւոր-  
չեան, Հոռմէական, Բողոքական կամ Յունադաւան  
Հոյերը մի և նոյն եկեղեցւոյ մէջ աստուածպաշտութիւն  
կատարելով չարափառ կըլլան : Կարճ մտաց, երկրա-  
քարշ հոգւոց, թժոտ աչաց, այո՛, այսպէս կերեի . բայց  
Փրիստոսի արեամբը ներկրուած հոգիներու, Աստուծոյ և  
եղբօր սիրովը լեցուն սիրտերու, այն սիրովը կըսեմ, որ  
հաւատքէն և յոյսէն վեր է և զօրաւոր, ըստ ամենայնի  
հակառակը կերեւի . և միաբանութեան առաջին քայլը  
կհսմարուի :

Ի՞նչ օգուտ մեզ այս և այն եկեղեցւոյ յարելէն,  
մինչդեռ միաբանութիւնը մեր ազգի մէջ հաստատուեր  
չէ . մի՞թէ բաժանասէրերը կակնկալէն բոլոր ազգը իրենց  
ետեւէն քաշել և այս կամ այն եկեղեցւոյ պատուաս-  
տել . ով կուզէ՛ թո՛ղ հաւատայ . ըստ մեզ, անհնարին  
դործ մըն է այս : Անոնք, առ առաւելն, արդի հինգ բա-  
ժանմանց վերայ վեցերորդ բաժանում՝ մը կարեն աւել-  
ցունել խումք մը ժողովուրդ ազգութեան արմատէն  
պոկելով և վէրս ի վերայ վիրաց դնելով . ահա՛ ըստ մեզ

բաժանասիրաց վախճանը : Ընդ հակառակն , ազգի բաժանեալ մասերու միաբանութեան խնդիրը կենսաւառ է փրկարար խնդիր մի է , որուն ամեն ծշմարիտ Հայեր հաճին պիտի գործակից ըլլալ , աղէկ համոզուած ըլլալով որ օտարէն եկած ազատութիւնը գերութեան ռակեզօծ շղթայէն տարբերութիւն չունի . որ օտարը , ու չափ աչ մարդասէր և առատասիրտ ըլլայ , իր գանձն ու արխնը շվատներ մեղ կամ ուրիշի բարբրութիւննառալոյ անոր կրօնը ընդունելուս համար : Միջին դարու կրօնամոլութիւնը եւանդուն էր . Արբազան Պապի Երաւաղէմ Մահմէտեանց ձեռքէն առնելու կամ Ալբինովեանները վայրի չորբոտանեաց ալէս ջարդելու համար հսնած մէկ հրաւէրը , այն առեն վեց հարիւր հազար քրիստոնեայք թագաւարք և կայսերօք ծովեր , աննապատներ քալեցուց , Եւրոպայէն Ասիա անցուց , մեր օրովը այս մոլեռնոցութիւնը մարած է , այնչափ մարած է , որ նոյն Արբազան Պապը , իր սեպհական իշխանութիւնը պահելոյ համար , քան անդամ քանիւ եւ գրով հրաւէր կարդարով՝ հազիւ կրցաւ երկու հարիւր միլիոն հռոմէականներէն երեք հարիւր իռլանդացի եւ իսպանիացի նահատակներ ժողովել կատելքիտարդօյի դաշտը : Բաժանասէրները ասկէ ամըի ի՞նչ փորձ կուզեն :

Եւրոպացի եւ Ամերիգացի քրիստոնէից մեզմէ պահանձածը կրօնափոխութիւն չէ . մի խաբուիք սիրելի Հայք . մի հաւատայք այն խարերայ միսիօնարներուն , որոնք կամ Աւետարան ծախելու կամ Փոօփառնդայի տիրապետութեան գոռող ձգտումը տարածելու քուիսիօներ եղած՝ Քրիստոսի անունը Հրէի եւ Մահմէտա-

կանի տողէն կսոսկան . այլ Արեւելքի մբրիստոնէից մէջ խռովութիւն , կադ եւ կոյիւ սերմանելէն չեն ամաչեր : Հառատապէք , սիրեցի Հայք , որ այսօր ոչ Անգղիոյ Թագումին , ոչ Գաղղիոյ եւ Ռուսիոյ Կայսերք , ոչ Ամերիքայի Հասարակապետութիւնը այսպիսի խմնեշութիւններ ոչ կամին , ոչ աղ կներեն որ իրենց աէրութեանց մէջ գործուին : Բնդ հակառակն , անոնց մեզմէ պահանձաննէ քաղաքակրթաթիւն , պատիակութիւն , երկրագործութիւն , արտեւատից եւ վաճառականութեան ծաղկումը եւ ի վեր քան զամենայն՝ ազգային սերտ միայնութիւն , ինչպէս վկայեն պիտի այն ամեն Հայերը , որք Գաղղիա , Անգղիա , Ամերիքա , Խառարիա կեցներ կամ ճանապարհորդութիւն ըրեր են :

Բնութիւնը Հայուն , Յոյնին , Խովաթին , Մթուավանին , Վալաքին , Լեհին , Մաճառին , Խառալացուն , Սերբին , Բաշնախին ոտք տուեր է քալելու համար , ձեռք տուեր է գործելու համար , աչք տուեր է տեանելու համար , ականճ տուեր է լսելու համար , սիրտ տուեր է ընտրելու համար , վերջապէս , կամք տուեր է օրոշելու եւ ի գործ զնելու համար : Արդ եթէ Հայր ձեռք , ոտք , աչք , ականճ , սիրտ , միտք եւ կամք ունենալով չքալեր , չգործեր , չտեսներ , չլսեր , չզգաք , չխորհիր եւ չկամիր իր բարօրութիւնը տնօրինել , մի՞թէ կրօնափոխ ըլլալով յանզգայութենէ յզգայութիւն պիտի գայ , կամ թէ նոր զգացմունք ստանալով իր մարդկային պարտքը ճանաչէ պիտի : Մի՞թէ մեզմէ աւելի տգէտ եւ ողորմելի Յունադաւան , Հռոմէական եւ Բողոքական ազգ ու ժողովուրդ

չկան . եթէ զմեզ իւմիաբանութիւն հրաւիրողները այս շափ գթուտ եւ մարդասէր են՝ ինչո՞ւ նախ իրենց հին կրօնակիցները եւ ընտանիքը չեն լրւաւորեր կամ միսիթարեր :

Ցանկալի էր , որ այսպիսի կարևոր իրի առաջադրութիւնը տղգային եկեղեցեաց հովիւներն ընէին և հասարակաց ապահովութեանը՝ միտ դնելով՝ աղգային մարմնոյ խոցը թժշկել հոգային : Եթէ անոնք չկամենան ասոր վերայ խորհիլ , այն ատենը մեր աղգի հասուն և հեռատես անձերը պարտին ասոր ճարը գտնել : Թէև լուսաւորչի եկեղեցւոյ հաւատքը սուրբ է և ուղղափառ ; սակայն մեր բաժանեալ եղբարդքը , անտարակոյս ; բաժանման պատճառ մը գտեր են , իրաւացի կամ անիրաւ , մեր վարդապետութեանց , կարգաց կամ ծիսից մէջ ; որ իրենց գայթակղութիւն կալատճառեն : Եթէ ասոր համար աղգային ֆողով պէտք է , թո՛ղ աղգը ձեռնհաս և վկայեալ նուիրակներ ընտրէ և ընտանեբար , ըստ պահանջման իւր հոգեոր և մարմնաւոր պիտոյիցը ինք գինքը բարեկարգէ , իւր հեռացեալ եղբարցը հետ միանայ , միաբան գործակցութեամբ զօրանայ և քաղաքակրթութեան մէջ յառաջ քալէ . այլ մեր եկեղեցւոյ բանալին երբէք օտար դոնալանի չյանձնէ : Աւելորդ կաթողիկոսաց , պատրիարքաց , առաջնորդաց թիւը , եթէ աղգը վայելուշ դատէ , թո՛ղ յապաւէ . որոնք , ինչպէս բազմամեւաց փորձով ապացուցեալ է , աւելի խռովութեան և ընդուայր ծախուց , քանթէ շինութեան և բարօրութեան պատճառ եղեր են . քանդի եթէ 45 միլիոն յունադաւան Ուուք և 36 միլիոն հոսմէական Գաղղիացիք և ոչ մի

պատրիարք և կաթողիկոս ունենալով՝ բարիոք կկառաւ վարուխն, մեզ, չորս կամ հինգ միլիոն չքաւոր Հայերուս, ի՞նչ պէտք են երեք կաթողիկոս և երկու պատրիարք։ Մի՞թէ Լուսաւորչէն մկնեալ մինչև տասներորդ դարը մեր նախնիքը բարեպաշտ և ուղղափառ չէին, որոնք մեր քառասկատիկն ըլլալով՝ մի և եթ կարողիկոս ունեին։ Թո՞ղ զՎրացին, զԱղվանս և զայլ ազգս, որոց ծայրագոյն տեսչութիւնն ալ անոնց յանձն էր։ Ինչո՞ւ մեր աստուածաբանները չեն մտածեր, որ Մահմետի իշխանութիւնը Քրիստոսի եկեղեցւոյ շեմէն ներս մտնելու չէ։ Ի՞նչպէս ուրեմն կընդունին, որ անոր հեղինակութեամբ կարդուած պատրիարքը մեր եկեղեցւոյ մէջ իրաւասութիւն ունենան։ Մեր կաթողիկոսաց թիւն ալ այն ատենը մկնաւ շատնալ, երրորդ երկպառակութեան հոգին ցրուել մկնաւ Լուսաւորչի անտանելի չարչարանօք համահաւաքեալ Հայը և ժողովուրդը։ Մի՞թէ աւելի աստուածապաշտութեամբ ու բարեպաշտութեամբ վարուած չեմք ըլլար մէկ հատիկ միայն զօրաւոր գրախ ունենալով քան թէ հինգ կերպարաննեալներ։ մի՞թէ աւելի իմաստութիւն չէ մէկ հատիկ հոգեւոր վարչութեան բարեկարգ և առոյգ կեղրոնական առեան ունենալ, մեր նախնեաց նման, որոց կաթողիկոսք ալ ըստ պիտոյից ժամանակին և ժողովրդեան Վաղարշապատ, Գուեխն, Արտաշատ, Երազգաւորք, Անի, Ծամեղաւ, Հռոմելլայ, Սիս և այլ շատ տեղեր փոխադրուեցան որպէս զի սիրտը և զուխը, և արմինը և հոգին իրարմէ յզառուին։

Երկրորդ՝ ազգը զրաւոր և հաստատ օրէնքով բարեկարգեց և վարելոյ փոյթ։ Օրէնքը մարդկային վարուց

քանոնն է եւ քաղաքավարութեան խարիսխը . առանց  
օրինաց անհարին է որ ժողովուրդ մը , ազգ մը արդա  
րութեամբ վարուի և դիմանայ երկար : Մեր ազգը , իրեւ  
հոգևոր մարմին , իր կանոնգիրքը ունէր , իրրեւ քաղաքական  
մարմին , իր Դատաստանագիրքը ունէր մեր նախնեաց  
օրովը : Վաղարշակը , Արտաշէմը , Գագիկը , Լեւոնը  
մեր մեծամեծ օրէնսդիրերը եղան : Ազգային իշխանու-  
թեան վերցուելով կանոնգիրք և դատաստանագիրք  
անապատները փախան , այնուհետեւ մեր գլխաւորները  
իրենց համոյքը իրրեւ օրէնք համարելով , ըստ այնմ վա-  
րեցին մեր ազգը . մեր ժողովրդեան ամեն ազնիւ եւ  
նորոգիչ ձգտումները ջղակոտոր ըրին . անզգամ հա-  
րուստը անպատճութեան արտօնագիրը իր ծոցը ունենայ-  
լով , պարկեցա աղքատը միշտ զրկուելով՝ իրաւանց և ար-  
դարութեան տեսիլքն անդամ այնալէս կօրսուեցան մեր  
պատուական հասարակութեան մէջ , որ անիկայ գժտու-  
թեան , ամբարչութեան , խոռվութեան , կռուոյ եւ  
հարստահարութեան տեսարան եղաւ :

Մեր գլխաւորները , որ ազգը կառավարելու պահան-  
ջանքը ունին , երանի թէ , գոնէ ժողովուրդէն աւելի լուս  
և խելքապատճիւն ունենային . երանի թէ ... հանձարն ,  
խմասառութիւնն եւ կենցաղագիտութիւնն են , որ զմի այր  
քան զայլ այր արգոյ եւ պատկառելի կընեն եւ ոչ թէ  
կոչումն եւ ծնունդը : Մարդոյ բաւն ազնուութիւնը  
անոր զգացմանց եւ խորհրդոց վաեմութիւնն է և ոչ թէ  
արտագին ճոխութիւնն եւ չուքը . երանի թէ անդամ մը  
խորհրդին թէ եթէ իրենք հասարակութիւնը վարելու եւ  
դատելու իրաւոնքը ունին , զիրենք հասպս ո՞վ գատէ-

պիտի : Ապաքէն մարդկութիւնը և Աստւած կապահան ջեն, որ օրէնքը միայն մարդոց վերայ թագաւորէ և ոչ թէ մարդ . օրէնքը պատժէ յանցանքը և պասկէ առաքինութիւնը եւ ոչ թէ կաթողիկոսը , պատրիարքը և ամերան . օրէնքը վարէ գլխաթողիկոս , զարսորիարք և զամիրաց . եւ օրինաց անհնազանդը , ով եւ ըլլայ , եթէ կաթողիկոս , եթէ պատրիարք , եթէ ամիրաց , թուղ պատժունն անաշուալէս եւ հաւարակաց թշնամի համարթելն :

Առարտակորով , ուղղամիտ , ժողովրդեան իրաւունքը եւ կարիքը ճանաչօգ եւ պաշտպանօգ , ըւսաւորեալ եւ առաքինի գլխաւորները , անշուշտ , աստվածապարգև բարիք են : Երանի այն ազգին , որ Ամահակ Բագրատունի , Վարդան Առաքենեաններու պէս գլուխ եւ իշխան ունի . այս գործաւոր կամ իշխան ըստուելու իրաւունք ունին այն ինք նակրչ նախարարները , որք վատութէ եռամբմեր Արշակունի եւ Բագրատունի տէրութիւնները , մեր ազատաւթիւնը , երկիրը , փառքը եւ ամեն բարերաստութիւնը , իրենց կորստական շահուն համար , մերթ Պարսից ծախեցին , մերթ Յունաց : Ազգապետ ըստուելու արժանաւորութիւն ունին այն պինդիքոր անձինքը , որոնք ազգիննեանց այն մը չըրած , այս ինչ գեղէ արեխաւորեալ , այս ինչ , այն ինչ քաղաք գնացեր և Հայոց վերայ իշխող տէրութեանց գործակալաց անիրաւութեանցը գործիք եւ գործակից ըլլապավ՝ մամոնայ գիզեր ու հասարակութեան վերայ փրանալը , անոր նուիրական իրաւունքը բանաբարեր եւ ստրկական հավատակութեան առաջնորդ եղեր : Իշխան ըստուելու արտօնութիւն ունին այն անձինքը , որոնք առ

տուընէ մինչեւ երեկոյ սեղանի առջեւ նստած՝ աշաց  
մէկը ոսկեկիր մնդուկի վերայ, միւսը զերօյով լեցուն  
սումարի վերայ տնկեր, ուր են իրենց հայրենիքը եւ  
փառքը, որ եւ իրենց ոսկի հորթը գիրցունելը լրումն  
մարդկային պարտաւորութեանց կսեպեն։ Մարդկու-  
թիւն, ազգութիւն, հաւատոք, կրթութիւն ի՞նչ ձեռըն-  
տուութիւն, ի՞նչ շահ կրնան ակնկալել այսպիսի փոք-  
րոգի եւ ոսկեմոլ անձերէ, որոնք ամեն ազգային բարիք  
ստարաց ծախելէն ետեւ, այսօր ալ մէկ հասիկ ժառան-  
գութիւննիս, որ է մեր հաւատոքը, որուն մէջ մեր կրած  
անպարտ չարեաց վերայ միօիթարութիւն կգտնեմք,  
որով վշտակիր հոգինիա կզօրացունեմք լաւագոյն օրերու  
սպասելով, այս միակ ժառանգութիւննիս անդամ  
աճուրդի հաներ են։ Ի՞նչ հոգեւոր եւ մոտաւոր կառա-  
րելութիւններ սպասելու է Խորենացիէն դատասխարտ  
եալ գորակից, կժշի, ազահ, յափշտակոդ, աշխարհամէր,  
աղուեղասէր իշխաններէ։ Եր. 554։

Մեր աղգը, որ շատ մը ձիքրով զարդարուած արժա-  
նի էր լաւագոյն բախտի, մեր անարժան իշխանաց շնոր-  
հիւը, այսօր թիզ մը սեպհական գետին չումի այս ահա-  
զին տիեզերաց մէջ, եւ Բօշաներուն պէս թափառական  
կատախ։ Մեր աղգը, որ իր հայրենիքը եւ հաւատոքը  
պաշտպանելու համար ոչ իր արիւնը իննայեց, ոչ իր  
գանձը եւ զաւակունքը, այսօր մեր իշխաններու շնոր-  
հիւը արեւելքէն սրեւմուտք, հիւսիսէն հարաւ սուրուկ է։  
Օտար աղգաց իշխաններն իրենց սերնդեանը երկիր,  
օրէնք, զրականութիւն, տէլութիւն, փառք թողին իր-  
քեւ ժառանգութիւն, մերինները, ընդ հակառակն, մեզ

թողին տղիսութիւն, ստրկութիւն, արտասուք եւ նախատինք : Մեր ազգը, որ իր կորովամնութեամբը, գործունէութեամբը, արիութեամբը եւ ուսումնասիրութեամբը, եթէ Սօղոնի կամ Արկուրդիօրէնքով վարուէր, նշանաւոր ազգերէն մէկն ըլլալու էր անկուչտ : մեր աղիկամի իշխանաց տակ խամբելով, գռանալով, բրտանալով՝ աւելի թշուառութիւն ճաշակեց քան է բարօրութիւն . և Հիւահանկան ազանց վեհագոյն Հայք, փոխանակ իր ջրացի ազգաց տիրելու եւ պատգամ տալու, մեր իշխանաց գուեկութեան պատճառաւ, գինեսէր Վրաց եւ աւաղակ Քիւրտերուն անգամ պարտաւորեցաւ հպատակիլ : Թողում յիշել զԱստրին, զՊարսիկը, զՀռմայեցին, զՑոյմը, զԱրարը, զԹաթարը եւ զԹիւքը, որք գէթ մեղմէ բազմաթիւ էին, ումանք ալ քազաքական հրահանգներով աւելի բարգաւաճեալ : Զկարծէ մէկը, որ այսպէս գրելով՝ զիշխան ոք բամբասել կամիմ կամ պախարակել . քա՛ւ լիցի :

Մեր կրած չարեաց բուն հեղինակը աւելի մեր իշխաններն եղեր են քան թէ օտարները . մեր անիշխանութեան եւ թշուառութեան սկզբնապատճառը աւելի մեր մոտաւոր եւ բարոյական հիւանդութիւններու մէջ վնտուելու եմք քան թէ սյս ինչ, այն ինչ ազգի Հայաստան արշաւելուն մէջ : Քանի որ մեր գիտուն անուաննեալները մեր թերութիւններն ու բարոյական ախտերը ծածկեն, մեր մեծաւորներու ապօրէն վարքը առաքինութեան փոխելով չողոքորթութեամբ խնկարկեն, վրանիս խընդան, քսակնիս պարպեն, օր քան զօր վիճակնիս գէշնայ պիտի : Ախտերնիս հին է, չատ հին է, մորթի կամ ար-

տարին, ախտո ցէ. ներքինէ եւ ժառանգական եղեցէ, տասն, քսոն ցեղ պղրտէ պորտ անցնելով։ Ապօքէնութեան, տղիտութեան հոգին, համոյք կատարելու ձըդ-տումը, շողոքարթութիւմը այնպէս մեր զգացմանց մէջ տարրացերեն, որ կարծեն թէ, Հայը այլոց ծառայելու, անբանօդէն ապրելու, տղիտութեան մէջ տապակուելու եւ մերկ ճշմարտութիւն շխելու համար ծներ է. որպէս թէ Ապուռած և բնութիւնը անանցանելի նղովքով արգիլեր են Հայուն, օրէնք, իրաւունք, ազատութիւն, հայրենիք, բարեկարգութիւն բառերը բերան առնուլ, անոնց վերայ խորհիզ, և որ մը արդիւնաւորել։

Մեր չորս հազար տարուան պատմութիւնը իմաստասիրաբուժանողը ակն յայտնի կտեանէ, որ մեր ազգի բոլոր թշուառութեանց ծնողը և ոկղընապատճառը միշտ մեր իշխաններն եղեր են, այն իշխանները կըսեմ, որոնք թէկ անձամբ ամեն մոլութեանց գերի, սակայն գայթակղիլ ձեացուցեր են, թատերաց զերասանի պէս, երբեմն Արտաշէս Արշակունի քրիստոնեայ թագաւորի վերայ, և Պարսիկ կրապաշտ ու ամենապիղծ թագաւորի մը առջեւ ծունը դնելով՝ աղաչեր են որ մեր քրիստոնեայ թագաւորը վերցունէ ու կրակրապաշտ պիղծ մարզպան դնէ անոր տեղը, որ Սահակ Պարթևը ձգէ և Շմուէլը Լուսաւորչի աթոռը հանէ, ու մեր ազատութեան նախատինքը ջնջելով՝ գերութեան փառք տայ մեղ։ Այն իշխանները, կըսեմ, որ Բագրատունի Գաղիկ բարեյցոյս թագաւորը Անիի կաթողիկէի մէջ սոսկալի երգումներով խարելով՝ Մօնումախին ուղարկեցին սէր հաստատելոց համար, և դեռ անիկայ կոստանտնուպոլիս

չհասած , իրենք մեր տէրութիւնը և բարօրութիւնը Յունաց ծախեցին . կայ ուրիշ ազգաց պատմութեան մէջ այսադիմի եղեռնագործութեան օրինակ , զոր մեր իշխանները գործեցին :

Մարդ , ինչ և իցէ կոչում կամ վիճակ ունենայ , ինչ եւ իցէ բարձ եւ երեւոյթ ունենայ , տակառին մարդ է հանդերձ մարդկութեան բոլոր յատկութեամբը : Ոմանց մօրդոց սեթեսեթեալ արոտաքին երեւոյթը և փողփողիւն պաճուճապատանքը կրնան ծանծաղամիտներուն ապշութիւն , զարմանք և ակամաց երկիւղ ուզգել . այլ քրիստոնէութեամբ եւ իմաստասիրութեամբ լուսաւորեալ անձեր սովոր են , մարդոց մը իսկական արժէքը գնահատելու համար , անոր արտաքին ծեփէններս թափանցել , անոր վրայի վարագոյրը բանալ և ներքին մարդոց որպիսութիւնը քննել . անոր կատարելութիւններու վերայ միայն զարմանալ և անոնցմէ միայն պատկառիլ : Կախարնամութիւնը Լուսաւորիչը եւ Սորմակը , Ներսէս Պարթեւը եւ Շմուէլը , Սահակ Պարթեւը եւ Բղքիշոն Թադդէոս Առաքելոյ աթոռը փոխուսակիր ելլել թոյլ տալով , նաեւ Տրդատ եւ Պապ , Մեծն Կոստանտիանոս եւ Յուլիանոս արքայական գամոյը հանելով յաւիտենական լրջմութեան դաս մը տալ կամեցաւ ամեն մարդոց եւ զբաստութեան խրատ՝ ամեն կաթողիկոսի , թագաւորի եւ իշխանի , որ իբրեւ մարդ , տմենն ալ սխալական են եւ անկարօղ , եթէ օրէնքը իրենց առաջնորդ , օժանդակ եւ ուղղիչ չունենան , ազգ եւ ժողովուրդ վարելու համար :

Մեր ազգին , իբրեւ հոգեւոր եւ աշխարհական մարմին ,

Երկու էական բան պէտք են . զիտուրիւն եւ օրէնք . զիւրիւն մեր միտքը լուսաւորելու , մեր պարտքը ճանաչելու , մեր մարդկութեան նպատակին համեմատ ընթացք ունենալու , մեր մտաւոր կարողութիւնները ազնուացը նելու , մեր զգալոյ , խորհելոյ , ընտրելոյ , դատելոյ եւ կամելոյ կարողութիւններն զարգացնելոյ , աստուածպաշտութեամբ եւ մարդավարութեամբ կենցաղավարելոյ համար . և օրէնք մեր պարտքը կատարելոյ , ազգային մարմնոյ այլ և այլ անդամոյ առ միմեանս ունեցած յարաբերութիւնները կանոնաւորելոյ , հասարակաց և անհատի ստացուածքը , իրաւունքը եւ խիզճը ապահովելոյ , ընդհանուր և մասնաւոր իրողութեանց կարդաւոր ընթացք տալոյ , մեր կիրքը սանձելոյ , տկարը զօրաւորին դէմ , անմեղը անզգամին դէմ պաշտպանելոյ , որով եւ ազգի լրութիւնը զօրացունելոյ համար :

Եթէ ամենախնամ Աստուածը երկրիս չնչին ճճիէն սկսեալ մինչև երկնից լուսաւորները , և դողդոչ ծիլէն մինչեւ Լիբանանի եզեւինը , ամենն ալ մշտնջենաւոր եւ անփոփոխ օրինաց տակ փակեց , միթէ ամեն արարածներէն գերազոյնը , որ է մարդը , միայն անօրէն կամեցաւ ձգել : Փաւ լիցի այսպիսի ամբարշտութիւն Աստուծոց արդարութեանը վերագրել : Աղամայ , Նոյի , Մովսիսի և Յիսուսի միջնորդութեամբ դերբնական ճշմարտութեանց վերայ Աստուծմէ մարդոց , իրբեւ հոգեւոր էակաց , աւանդեալ օրէնքը ամենայայտնի ապացոյց են , որ Յաւիտենականը կպարտաւորէ զմարդ իրեւ մարմեաւոր էակ , նոյնալէս քաղաքական օրէնք ունենալ :

Աստուածոյին օրէնքը իշխանաց հաճոյքէն կախում

շունի, ոչ ալ այլայլութիւն կրէ պիտի անոնց աշառու, թեամբը : Իսկ մարդկային օրէնքը, որ հայրական հեղինակութենէ ժներ է, ամեն ազգ կատարեալ իրաւունք ունի, իր պիտոյիցը և ժամանակի պարագայիցը համեմատ, դնել եւ բարոքել՝ երբոր վայրենութեան վիճակէ ելլելով՝ քաղաքավարութեան շաւղի մէջ կմտնէ, երբոր թափառական կենցաղը ձգելով հաստատ քնակութեան աէք կըլլայ, ու պիտոյընին կշատնայ : Արդ ինչպէս Աստուծոյ օրէնքը գրով տրուեցան, այնպէս ալ մարդկային Օրէնքը կամ Սահմանադրութիւնը գրով տրաւելուէ ժողովրդեան : Օրէնք դնելոյ իրաւունքը, ինչպէս նաև իշխան եւ առաջնորդ դնելոյ և հանելոյ հեղինակութիւնը ժողովրդեանն է եւ ոչ թէ քանի մի անհատից, անոր հեղինակը հաստրակութիւնն է և ոչ թէ քանի մի առաջնորդ, վասն զի իշխան, հայրապետ, պատրիարք, առաջնորդ, ամենքն աշխողութեան որդի են, անոր ժողէն եղեր են, անոր քրտինքով կապրին, անոր պաշտօնեայքն են, ու անոր պէտքը հոգալոյ համար կարգուած են : Աշակերտը իր վարժապետին, ծառան իր տիրոջը հնազանդելու պարտական են . վասն զի աշակերտի կողմէն հասակի անկատարութիւն և վարժապետի կողմէն հասակի և խելաց կատարելութիւն կան . վասն զի մէծաւորի եւ ծառայի մէջ երկուստեք ազատ հաճութեամբ պայմաններ եղած են, այլ երկու խելակաս անձեր . վասն զի մէկը դարբասի մէջ ծներ է, միւսը խրճթի, մէկը միւսին ակամայ հնազանդելու պարտաւորութիւնը անբանից օրինաց և տգիտութեան գիւտ է, որք գրանականն իրբեւ անբան ջոլիր, իրենց քմացը համեմատ, այսօր լէ-

որ կարսածեն, վաղը՝ անապատը, միւս օրը՝ ժայռերու վերայ մինչև որ սպանդանոցը ուղարկեն, միաը ուտեն և մորթը հազնին : Բարեբախտաբար այսպիսի հրէշներութիւը օր ըստ օրէ կարակախ, կմն մոլորութիւնները խման տապիրութեան լուսով հետազնետէ կփառատին . Ավտակիր մարգկութիւնը : իր յադշտակինալ պայմանը վերըստին ձեռք բնորդիկ՝ մարգօրէն ապրելոց ունակութիւնը լրացնայ :

Ժողովորդը՝ իր իշխանին յաշխարհայինու, հօար՝ իր հովուին յասաւածայինա, պէտք է, որ հնազանդի. այլ ոչ հակառակ օրինաց և խղճի : Սուրբ զրոց մէջ, ուր որ իշխանի կամ տռաջնորդի հնազանդելոց պատուէր կայ, հոն յայտնի կամ լրելեայն օրինաց հնազանդելոյ պատուէր կայ . վասն զի հօտը եւ ժողովուրդը իրենց իշխանի եւ հովուի հաճոյքին հնազանդելու չեն, այլ վասն զի իշխանը և հովիւր պատուածային և աշխարհային օրինաց ապառաւոր և գործադիր են ժողովուրդեան բարի լընելու համար : Այս կէտիս վերայ մեր ազգայնոց մտայ մէջ տարափուափ տեղիք ամենւեին շթողը համար, մանաւոնդ անոնց, որոնք բանաւորներու տակ ճնշած, կորուսեր են օրինաց մկրնական տեղեկութիւնն անդամ, Որբոց Ղեղնդեանց եւ Վարդանանց վարդապետութեան մէկ կոտրը հոս դնել կարեսոր համարեցայ « Թրէնք առուածային կացցեն բացաւոր իւվերայ ամենային : և ի նախն օրինաց ընկաղցին յանցաւոք գագատիմն դառնապարտութեան : » Եղիշէ. եր. 97:

Եթէ ամեն իշխանաւոր իր ստրադրեալները այնպէս բարեմտութեամբ վարէր, ինչայէս հայր մը, իր զաւակունքը, եթէ ամեն հովիւ անսկայութեան, անմահութեան,

ամսիայինիւրեան, իմաստութեան, արդարութեան, ամենա-  
բերքաթեան, ապօյ գուայր, վաղը տրտում, երրարդ օրը  
սրահեզիւար, շորտորդ օրը շինքագարեաց արտօնութիւն տնեն-  
նացր, տավիրափն վառանգաւոր էր ժողովրդեան բարօրու-  
թիւնը անհանոի մը հանցիցը հաւատալ. բե՛ր որ իշխան  
և հային անման և անսինաչ, անշոշիս և արդար, խնամառն  
և ամենուրեկ չըշրայէն գաստ, երրեմն ժողովարդէն աշ ա-  
մայի պակասատոք են : Ապօրէն վարչութեան արդիւնքը  
Ասիոյ և Եսքապիոյ մէջ ակներե կուեանեմք : Թո՛ղ հա-  
մեմատէ Հայ մը Պարսից եւ Բեղդիացի, Ավարիոյ եւ  
Անգղիոյ ժողովրդոց թշուառութիւնն ու բարօրութիւնը.  
և համոզուիք, որ ուր օրէնք կայ, հոն արդարութիւն և եր-  
շանկութիւն կամ. ուր օրէնք չկայ, հարաւահարութիւն և  
շշուառութիւն կան : Ի՞նչպէս կարեցի է ապաքէն մեր ժո-  
ղովրդեան բախուր եկեղեցականի կամ աշխարհականի  
քմացը հաւատալ, որ ամեն վայրկենի մէջ ենթաւրայ են  
կրից, և իրենց սիսալանօքը այսօր իմ տունը, վազը եղրօրս  
կրիւն : Ասոր համար մեր ազգը, եթէ քաղաքականու-  
թեան ասպարիզի մէջ մանելու և իր գոյութիւնն ապա-  
հովեցու միտք ունի, իր առաջին պարտքն է ինքզինքը  
զրաւոր եւ տեւական օրէնքով բարեկարգել. եւ ամեն-  
եկեղեցական և աշխարհական ազգապետ նոյն օրինաց  
հապանղեցնել :

Պէտք է յայստնել թէ գիտութիւնն ու երթութիւնը  
ամեն բանական էակի զրեթէ առաջին կարկըն է : Ամեն-  
օք, ամենքս մեր սեպհական աչօքը կուեսնեմք, որ խո-  
պան երկիրը յոտի բերք կրերէ, որ նոյն երկիրը մշակուե-  
լով՝ ցորեն, խաղող, թթենի, լեղակ. շաքարեղէգն,

բամբակ եւ այլ ազնիւ բոյսեր կրերէ, որով ազգեր եւ  
տէրութիւններ կճշխանան և վայելու չ կիենցաղավարին,  
Բնութիւնը, որ վարագին ժանիք տուերէ, փոյին՝ կնճիթ,  
մեղուին՝ խայթոց, կուշբին՝ ճարտարութիւն և կարապին՝  
ծռվագարութիւն, անոնց կարիքը հոդալոյ և թշնամեաց  
դէմ զինելոյ համար . նոյն քնութիւնը, ամեն արարած  
ներէն ազնուագոյն էակին, որ է մարդ, կարծես թէ  
մասնաւոր զէնք մը չէ տուեր զինքը պաշտպանելոյ և իր  
կարիքը հոգալոյ համար : Մերկ մարդը, քննութեան տակ  
առնելով, կարծես թէ ամեն կենդանիններէն ողորմեցի  
է . այլ մարդ, այնպէս ողորմելի չէ, ինչպէս կերեւի :  
Մարդոյ մսեղէն չէնքին մէջ, անոր հողեղէն տաճարին  
մէջ Աստուած կայծ մը թաղէր է, զոր հոգի կանուանեմք,  
հանդերձ խորհելոյ, դատելոյ և կամելոյ կարտղութիւն  
ներով, որոնք յանհունա կընան կատարելագործիլ :

Մարդ, թէև անանհւններէն աւելի անկատար կծնա-  
նի, սակայն իր կարողութեանց սազմը իր մէջն ունի :  
Ռասումն է, որ այս աստուածացին կայծս կարծարծէ,  
դաստիարակութիւնն է, որ այս սերմն պաղաքեր կընէ :  
Մարդ առանց ուսման և դաստիարակութեան, թէեւ  
մարդոյ երեսով ունի, այլ իրօք մարդ չէ . գիտութիւնը,  
որ ուսմանց արգասիքն է, մտքի մլրդութիւնն է . վասն  
զի իւրաքանչիւր գիտութիւն մէյմէկ ճշմարտութիւն է :  
Մարդ, որչափ շատ գիտուն ըլլայ, այնչափ շատ ճշմար-  
տութիւններ կժառանգէ, որոնք միտքը և հոգին օծելով  
զանոնք կըրբեն, կազնուացնեն և թշուառութեան մէջ  
անգամ երջանիկ կընեն : Մարդ բիւրաւոր պարտը կա-  
տարելու է, բիւրաւոր թշնամիի յաղթելու է . սակայն

մարդու մարմինը անբաւական է . եթէ անոր միտքն ալ տգէտ մնայ, այն ատենն է անոր ծայրագոյն խղճութիւնը, որ թէեւ ի պատկեր Աստուծոյ եւ իշխան արարածոց ստեղծուած, ոյլ իր մտքի կուրութեամբը, որ թանձր խաւարի պէս անոր չորս զին պարիսպ կապեր է, անառնոց և անբանից կհաւասարի . ոչ անցեալը քննելու բաւականութիւն ունի, ոչ ներկան իր պիտոյիցը ծառացեցնելու, ոչ ապագան գուշակելու և իր ապահովութիւնը անօրինելու . իբր զի ներկան անցելոյ արգասիքն է, եւ ապագան՝ ներկային : Տգէտի մտքի աչքը կարճատես ըլլալով, նա մարմնով միոյն կապրի, անսառնի պէս իր մասրմնական պիտոյըը միայն կմտմույ, զգալի աշխարհի կեղեւը միայն կտեսնէ . անոր ընդերքը թաղուած ճոխութենէն դուրկ կմնայ, և իր տեսութիւնն ու գործունէութիւնը իր մարմնոյ տեսութեան հորիզոնէն անդին չեն անցնիր : Իր միտքը և ճաշակը անտաշ և բիրտ ըլլալով, իր արտաղրութիւններն ալ բիրտ են . իր զիմացիի սրտի և խորհրդեան մէջ թափանցելու ձեռնհասութիւն չունելով՝ միշտ խաբուելու ենթակայ է, ինչպէս մեր իշխան ները միշտ խարուեցան Պարսիկներէն եւ Յոյներէն : Իրաց իսկական արժէքը չճանաչելով՝ անոնց արտաքին երևոյթովը միայն կզբաղի, և վայրենեաց պէս փայլուն ապակին աղամանդի տեղ կընդունի . և ուսաղուն արոյըը՝ ոսկիի տեղ : Իր մտաց մէջ ճշմարտութեանց խարիսխը չունելով՝ անդեկ եւ անխօրիսխ նաւու պէս ալէտանջ կծփայ . բնական երևոյթներու պատճառները քննելու և նուաճելու տեղ, ինչպէս Ֆրւանգին ըրաւ, անոնցին կսոսկայ . ամեն հովէ կերերայ, ամեն կարծիքի կհակի եւ

իր նապատակէն խոտորեալ՝ թէե մարմնով կապրի, այլ  
մոտօք և հոգւով միշտ տղայ կմնայ. թէե երկրի տէր է,  
ոյլ առանց զայն ճանաչելոյ, մշակելոյ և երջանկարար  
ապրելոյ՝ հրոսակի պէս աշխարհ կդայ, պղատոնեան  
աւանակի պէս կանաչ խոտի վերայ կթաւալի, և հեղեղի  
պէս յափառենականութեան ծոցը կերթայ, աւերակ եւ  
անապատ թողլով զաշխարհ, գոր թէեւ շինելոյ եւ գա,  
յելելոյ պասուէր առեր էր:

Տգէսը ոչ իր Արարից կճանաչէ և ըստ պատշաճի  
կպաշտէ, ոչ իր պայրտքը գիտէ և կիրատարէ: Հայրենիք,  
ազգ, փառք, իրաւոնք, օրէնք, արդարութիւն բառերը  
անոր համար նշանակութիւն չունին. մարդկութեան  
անհգւն Ովկիանոսի մէջ իր բռնած կորեկի մը բիւրերորդ  
մափն չափ տեղը չմտմտալով՝ ինքզինքը բարձրագոյն  
էակ մը կկարծէ: Անոր հաւատքը թանձրագոյն պնապաշ-  
տութիւն է. կարեկցութիւնը անոր բառդիրքն հալա-  
ծուած է: Նյա, իր յուսի կրիցը զդաստիարակութիւնը  
ուղղիչ չունենալով, իրեն չնմանողը, իր կարծիքին շհա-  
կողը, ոչ միայն անհաշտ թշնամի կկարծէ, այլ և անհա-  
ւատ: Խրատ, բարի օրինակ տալ չգիտէ. անոր բարոյա-  
կանը հալածանք է, նորա բարեպաշտութիւնն է տնաւեց-  
րութիւն. գիր, ուսումն, տալարան, ազատախօսութիւն  
անոր համար մոլութիւն և ժանտախտ են: Այս է ողորդ  
մելի տգիտութեան համառօտ նկարագիրը, որ կին և նոր  
գարուզ մէջ միլիոնաւոր շայեկան և պարկեշտ մարդիկ  
աքսորի և բանասի դատապարտեց կամ թէ դիզափայտի  
վրայ աճիւն դարձուց:

Եւրոպացիք համոզուած են, որ ազգութեան պայման:

ները օրէնքն եւ լեզուն են . մեր, գոնէ մեր ազգի նկատ .  
մամբ, համոզուած եմք, որ օրէնքէն և լեզուէն առելի  
մեր ազգի գոյութիւնը պահեց մեր կրօնը և մեր եկեղեւ-  
ցականաց հաւատարմութիւնը : Եթէ անոնց մէջ թերու-  
թիւն ալ երեցաւ, առելի անոնց գլխաւորաց կվերաբերի  
այն քան թէ իրենց . ըստ որում գլխաւորները, ինչ որ  
կարող էին, չըրին, և ինչ որ չէին կարող, ըրին : Մեր  
օրովը երեցան քանի մի անձինք, որ ոտնհար ըրին մեր  
կղերը, կարեկցութեան և խմառութեան օրինաց դէմ  
մեղանչելով . ըստ որում հիւանդը հայհոյելով չառողջա-  
նար երգէր : Եթէ Սահակայ և Մեսրորայ աշակերտաց  
մէջ տգիտութիւնը արմատացեր է, բոլոր յանցանքը  
անոնց վերայ միայն բառնալու չէ . յանցանաց մեծագոյն  
մասը Արշակունեաց ու Բագրատունեաց տէրութիւն-  
ները օտարաց մատնող իշխանաց վրաց կմնայ վերջապէս :  
Եթէ կղերը գիտութեան լոյսէն զուրկ է + վասն զի ազգը  
յարեւելից յարեւմուտս, ի հիւսիսոյ ի հարաս անկէ զուրկ  
է : Կղերը ոչ երկնքէն իջեր է, ոչ գետնէն բռւսեր, նա  
ժողովրդեան որդի ըլլալով՝ ակամայ իր հայրենի ժաւամի-  
գութեանը բաժանորդ եղեր է : Տգիտութիւնը եւ ապօքէ-  
նութիւնը եւ կղերին եւ աշխարհուկանին հասարակ ըլլա-  
լով՝ զիրար չմեղադրեմք ընաւ . այլ ջանամք երկու  
վիճակի մէջն ալ տեսական ու մեր ազգին յարմար դաս-  
տիագրակութիւն մնցունել :

Մեր ազգութիւնը, ինչպէս վերը ըսինք, մեր կրօնի  
վերայ աւելի քանթէ մեր լեզուի վերայ կմնեալ ըլլալով,  
և քրիստոնէութիւնը կատարեալ քաղաքակրթութեան  
աղբիւր՝ աւելի սլատշաճաւոր էր, եթէ ազգային դաստիա-

բակութիւնը մեր եկեղեցին, եղիշ եւ եկեղեցականաց ձեռամբ ժողովրդեան մէջ ծաւալէր, ինչպէս Լուսաւորչի; Սահակայ, Մեսրոբի և Սիմէօն Կաթողիկոսի ձեռամբ մատուկարարուեցաւ: Այլ երկիրներ, թէև կրօնը գահաէր կղերի ձեռք տիրապետութեան գործիք եղաւ եւ ժողովուրդը կեղեքելու հնարք, բարեբախտաբար մեր մէջը միշտ իր վսեմութիւնը պահեց: Մեր կղերը ժողովրդեան ամեն տառապանացը բաժանորդ եղաւ, չուզեց երրէք անոր խեղճութիւնը իր օգտին ծառայեցունել: Մեր կղերը թէև աղքատութեան հնոցի մէջ տանջուած սակայն լաւ համարեց իր հօտին հետեւիլ Երասմի ասիերէն մինչեւ Նեվսյ, Գանգէս, Առախոր և Նեղոս: լաւ համարեց տարագիր ըլլալ քանթէ իրեն յանձնուած աւանդը ուրանալ: Այս, թէև չուզելով տղիտութեան խորխորատը անկաւ, այլ միշտ հաւատարիմ մնաց իր կոչմանը, և լաւագոյն աւուր ակնկալութեամբ մեր ժողովրդեան վշտացը վշտակից եղաւ:

Տղիտութենէ մեր կրած չարիքն անթիւ են: Քաղաքականապէս մեր ազգը եօթն և ութ իշխանութեանոյ բաժնողը տղիտութիւնն եղաւ. հոգևորապէս մեր կաթողիկոսութիւնը հինգի և վեցի բաժնողը դարձեալ տղիտութիւնն եղաւ: Մեր նախարարաց Արշակունեաց ճոխութիւնը՝ Պարսից, և Բագրատունեացը՝ Յունաց մատնողը տղիտութիւնն եղաւ: Ասկէ աւելի ի՞նչ պարզ տրամաբանութիւն: Բողոքականը, Յոյնը, Լատինը Հայութեան շնորին դէմ աքսորով, բանտով և բանալրանկով չեն պատերազմիր, որ մեր Հովուապետերն ալ անոնց դէմ աքսոր, բանտ և բանա-

զիրանք ի գործածէին : Անոնք մեր միութիւնը քայլա-  
յելու համար, քարոզութիւն և մամուլ կվարեն . ուստի  
եթէ մեր հօտապետերն ալ անոնց քարոզութեանը դէմ  
քարոզութիւն եւ մամուլին դէմ մամուլ դիմադրիէին ,  
շատ հաւանական էր, որ այս ինքնակոչ առաքեալները  
ամօթով ետ դառնային պիտի առւսնց կրնաց մեր եկե-  
զեցիէն ու մի անգամ գողնալ . սակայն մերինները  
Քրիստոսի վարդապետութիւնը ղմարդիկ խրատելու եւ  
ուղղելու անբաւական սեպելով և օտար ոգիէ թելադրած,  
բանտի և արսորի, նպավորի և ֆալախայի ասլաւինեցան  
այնալիսի մորդեր վարելու համար, որոց միակ յանցանքն  
էր Հայ ծնուիլ և ազատ ընտրութեամբ . Լուսաւորչայ  
եկեղեցիին յարփլ . առաջ թէ ոչ, անսնցմէ և ոչ մէկը ոչ  
պատրիարքի արքանեակն էր, ոչ կաթողիկոսի արծաթա-  
գինը, ոչ ամիրայի ստրուկը :

Մեր հասարակութիւնը ըստ որում բարեկարգու-  
թեան պէտքը կզգայ, ըստ որում կղերը և աշխարհա-  
կանը դաստիարակելու փոյթ ոնի . ըստ որում մեր  
ազգութիւնը մեր կրօնի վերայ կայացած է, և եթէ աշ-  
խարհականը կրթուի ու կղերը անկիրթ մնայ, մեր կրօնը,  
որ է մեր ազգացնութեան հիմը, կարելի է որ կղերի տը-  
գիտութեան պատճառաւ արհամարհուի, և մեր ազգայ-  
նութիւնն ալ քայքայուի : Մեր, իրիւ անգամ ազգային  
միարանութեան, ապագայ չարեւոց կանխատես ըլլալով,  
քանի մի առաջարկութիւններ ընել հարկ սեպեցինք Աղ-  
գային վարչութեան : Նախ՝ ընդհանուր կրթութեան  
ուրուագիծ մը յօրիներավ գոյն կաթողիկոսաց, պատրի-  
արքաց, առաջնորդաց և իշխանաց ընդունիլ տալ, եւ

անոր գործադրութեանը վրայ հսկել ի մօտոյ որպէս զի  
մեռեալ գիր շնայ : Երկրորդ՝ այս ընդհանուր կրթու-  
թեան ուրուագծի նախատակը ըլլայ իւրաքանչյոր թեմի  
կամ գաւառի ժողովրդեան երկու մեռի թուոյ համեմա-  
տութեամբ դպրոցներ բանալ հանդերձ գրատաւով եւ  
տպարանով : Երրորդ՝ աշխարհականաց և կղերի մէջ եղ-  
բայրակիրութեան կապը գորացունելու նպատակաւ երկու  
վիճակի մանկունքը մի և նոյն դպրատան մէջ հրահանգել-  
եկեղեցական կարգի փափագողներուն թող տալով առ-  
տուածաբանական ուսմունքնին յետոյ քանի մը վանդի  
մէջ հաստատած ճեմարաններու մէջ աւարտել : Չորրորդ՝  
ուսումնարանաց, տպարաննաց և գրանուանց ծախքը հա-  
նել եկեղեցեաց և վանորէից եկամուտներէն :

Հայոց Եկեղեցին մի եւ անրածամելի ըլլալով, տեղական  
եկեղեցիները, թէև թուով և տեղեաւ զանազան են,  
բայց ամենքն ալ իրարու քոյր են . ուստի և իրարու օգնե-  
լու պարտական : Կաթողիկոս, պատրիարք, առաջնորդ,  
վանահայր, վարդապետ, քահանայ և արեղայ, արժան  
է որ վայելուչ թոշակ ստանան իրենց պիտոյքը պարկեշ-  
տաբար հոգալու . այլ հարկ չկայ, որ անոնք եկեղեցական  
մտից և ծախուց տումնարակալ ըլլան և հոգաց տեսչու-  
թիւնը թողով մամոնայի դպչին ու իրենց աւոր աջը  
ազտոտէն : Ուսումնարանաց հաստատութեան երկրորդ  
աղքիւր կրնան ըլլալ առաջնորդական և վանական եկա-  
մուտները, այսինքն աղողի, հոգեբաժին, պատկրամ,  
մոմագին, նաև մասնաւոր տուրքը ընդհանուր ազգի վրայ  
դրուած, որք մեր կարծածէն աւելի մեծ գումար կարեն-  
կազմել : Երրորդ աղքիւր ու սումնարանաց հաստատու-

Թեան կրնան ըլլալ այլևայլ մենաստաններու կալուածներ, որոց կրօնաւորները կարելի է այլ մենաստան ուղարկել և անոնց եկամուտը և շնչքը դպրոցաց ընծայել։ Զորբորդ աղբիւր կրնայ ըլլալ ուսումնարանաց վերաբերեալ գրոց տպումը և վաճառումը, զորս Ազգային կըրթութեան վարչութիւնը կրնայ տագել և վաճառել։ Հինգերորդ՝ ազգային կրթութիւնը, եթէ կրօնական, եթէ քաղաքական, ամեն տեղ միաձեւ ըլլալու համբար, որոյ օգուտներն ամբաւ են, հարկ է որ գիտնոց ժողով մը կազմուի կղերէ և աշխարհականէ, որոյ գործն ըլլալու է բոլոր ուսումնարանները վարել, վարժապետ սլատրաստել և դաստիրք մատակարարել։ Այսպէս ալ պէտք է նաև ելումտից ժողով մը, նոյնպէս խոսն կազմել, որոյ գործն ըլլալու է ամեն եկեղեցեաց, վանաց, ուխտատեղեաց, առաջնորդաց եւ վանական կալուածոց արդիւնքը մէկ գանձարանի մէջ հաւաքել և անկէ կղերի եւ ուսումնարանաց ծախքը հոգալ։ Վեցերորդ՝ մեր ազգի օրիորդաց մէջ աղգային կրօնն ու կրթութիւնը ապահով եղանակաւ մշակելու, մանաւանդ մեր որբերը, այրիները, զառամեալները և հիւանդները խնամելու համար վայելուչ է բարեպաշտ և ուսեալ կնիկներէ հաւատաւորաց ուխտեր հաստատել Թիւրքաստանի մէջ Թիֆլիզու Հայ կուսանաց նման, և ի ստիպել հարկին, անոնցմէքանի մի անձինք ալ հրաւիրել, որ գան ու Թիւրքաստանի մէջ ալ կուսանաց կրօնը հաստատեն։

Եօթներորդ՝ Երուսաղէմի, Արմաշու, Մշու Ս. Կարապետի եւ այլ վանքեր վարդապետարանի կամ կղերանոցի փոխարկել, եւ յաւիտենական նզովքով արգիլել

որ ասկէ եւոքը , առանց աստուածաբանութիւն , գրաւ կանութիւն եւ գիտութիւնք ուսանելոյ ոչ ոքոչ քահանայ ձեռնադրուի , ոչ վարդապետ : Ութերորդ՝ նորահաս գիտուն վարդապետներէ քարոզչաց միաբանութիւն մը հաստատել ոչ միայն մեր բնիկ ժողովուրդը խնամելոյ , այլ եւ Եզդաց , Նասրանեաց եւ նմանեաց Հայաստանեաց Ա . Եկեղեցւոյ հաւատքը քարոզելոյ եւ Գրիստոսի թագաւորութիւնը ընդարձակելոյ համար :

Դաշանց թուղթի քննութիւնը կնքելով՝ կհրաւիրեմք Պալեան Ամիրայի վաստարանները , որ Պետրոս Առաքելոյ Հռոմ նահատակուելուն եւ Խտողիա եղած սուտ Դաստառակաց վրայ գիտցածնին գրեն որպէս զի մեր ալ պատասխանը լսեն :

